ISSN 1829-4596

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

19

ԵՐԵՎԱՆ 2018

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

19

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
188

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
188

ԵՐԵՎԱՆ
2018

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ

Ա.Ա. Մելքոնյան (նախագահ), Կ.Հ. Խաչատրյան (նախագահի տեղակալ), Ա.Ա. Խառատյան, Հ.Մ. Հարությունյան, Ա.Ի. Շահնազարյան, Հ.Ղ. Մուրադյան, Հ.Կ. Սուքիասյան (պատ. քարտուղար)

Редакционная коллегия

А.А. Мелконян (председатель), К.Г. Хачатрян (заместитель председателя), А.А. Харатян, Г.М. Арутюнян, А.И. Шахназарян, А.Г. Мурадян, А.К. Сукиасян (отв. секретарь)

Editorial board

A.A. Melkonyan (Chairman of the Board), K.H. Khachatryan (Deputy Chairman of the Board), A.A. Kharatyan, H.M. Harutyunyan, A.I. Shahnazaryan, H.Gh. Muradyan, H.K. Sukiasyan (Executive Secretary)

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրքի հերթական՝ 19-րդ համարում հրատարակվող հոդվածները սկզբնաղբյուրների, մամուլի հրապարակումների, հայրենի և համաշխարհային պատմագիտական գրականության լայն հենքի վրա լույս են սփռում Հայոց պատմության առանձին հիմնահարցերի վրա:

Տարեգրքում հրատարակվում են նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի 39-րդ գիտական նստաշրջանում կարդացված որոշ զեկուցումներ:

ISSN 1829-4596

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2018

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

75

ՔՆԱՐԻԿ Ռ. ԱՎԱԳՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 75-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԾԱՆՐԱԿՇԻՌ ՎԱՍՏԱԿԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ Պատմության ինստիտուտ, հոբելյան, ԳԱԱ, գիրք, հոդված, պատմաբան:

1943 թ. նոյեմբերի 10-ին՝ Հայրենական մեծ պատերազմի ծանր տարիներին, ԽՍՀՄ կառավարության որոշմամբ և ՀԽՍՀ ժողկոմխորհի № 702 հրամանով ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի հիման վրա ստեղծվել է ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիան, իսկ նրա կազմում սակավաթիվ ինստիտուտների շարքում հիմնվել նաև Պատմության ինստիտուտը[1]:

Ինստիտուտի տնօրեններն են եղել միջազգային ճանաչում, ծանրակշիռ վաստակ, ինչպես նաև գիտակազմակերպչական կարողություններ ունեցող անվանի մտավորականներ, որոնց հմուտ ղեկավարության շնորհիվ Պատմության ինստիտուտը ոչ միայն կայացել է որպես հիմնարար հայագիտական հիմնարկ՝ համալրվելով կարող ու գիտակ մասնագետներով, այլ նաև ծնունդ է տվել ակադեմիական նոր հիմնարկների, որոնք մինչ այդ նույն ինստիտուտի կազմում սեկտորի կարգավիճակում էին

[1] Պատմության ինստիտուտ 75, կազմողներ՝ **Կ.Հ. Խաչատրյան** (պատասխանատու խմբագիր), **Հ.Ղ. Մուրադյան, Հ.Կ. Սուքիասյան**, Ե., 2018, էջ 5:

(փիլիսոփայության և արվեստի պատմության՝ 1947 թ., արևելագիտության՝ 1957 թ., հնագիտության և ազգագրության՝ 1959 թ.): Պատմության ինստիտուտը նաև եղել և մնում է հանրապետության ԲՈՒՀ-երի և գիտահետազոտական հիմնարկների համար պատմաբան-մասնագետ պատրաստող յուրօրինակ դարբնոց:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեններ են եղել՝ Հովսեփ Օրբելին (1943–1947 թթ.), Աբգար Հովհաննիսյանը (1947–1953 թթ.), Սուրեն Երեմյանը (1953–1959 թթ.), Արամայիս Հարությունյանը (Արմո Հարենց) (1959–1963 թթ.), Գալուստ Գալոյանը (1963–1979 թթ.), Հրանտ Ավետիսյանը (1979–2002 թթ.): 2002 թվականից ինստիտուտի տնօրենն է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Մելքոնյանը:

2018 թ. դեկտեմբերի 26-27-ին տեղի ունեցան ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 75-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումները:

Երկու օրերի ընթացքում անցկացվեց Երիտասարդ գիտաշխատողների 39-րդ նստաշրջանը, ինչը ևս Պատմության ինստիտուտի լավագույն ավանդույթների շարունակականության առհավատչյան է: Զեկուցումներով հանդես եկան 18 երիտասարդ գիտաշխատողներ և ասպիրանտներ Պատմության ինստիտուտից և հանրապետության գիտակրթական այլ հաստատություններից (Երևանի պետական համալսարան, Հայաստանի ազգային արխիվ, Հայաստանի ազգային գրադարան, Գիտակրթական միջազգային կենտրոն): Զեկուցումներում անդրադարձ եղավ Հայաստանի հին, միջնադարյան, նոր և նորագույն շրջանի պատմագիտության ամենատարբեր հիմնահարցերի:

Իսկ արդեն դեկտեմբերի 27-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի դահլիճում տեղի ունեցավ ինստիտուտի 75-ամյա հո-

բեյանին նվիրված հանդիսավոր նիստը, որին մասնակցում էին նաև Հայաստանի գիտակրթական, պատմամշակութային, պետական և այլ հիմնարկների ղեկավարներ, գիտնականների տարբեր սերունդների ներկայացուցիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը: Նա պատմական ուրվագծով ներկայացրեց հայ պատմագիտական մտքի զարգացման անցած ուղին սկսած XIX դ.-ից մինչև մեր օրերը՝ հատկապես կարևորելով խորհրդային ժամանակաշրջանը, երբ ստեղծվեց հայ պատմագիտական հզոր դպրոցը, հրատարակվեցին բազմաթիվ հիմնարար աշխատություններ, աղբյուրագիտական և սկզբնաղբյուրային ժողովածուներ, հայ ժողովրդի պատմության բազմահատորյակը և այլն: Ա. Մելքոնյանն առանձնապես շեշտեց պատմաբանի պատասխանատու առաքելության՝ անաչառ և օբյեկտիվ լինելու անհրաժեշտության մասին, որը հայ պատմագիտական դպրոցի շարունակականության պահպանման գրավականն է: Պատմագիտությունը նաև գիտաճանաչողական նշանակություն ունի հայրենասեր քաղաքացի ձևավորելու առումով:

Իր ողջույնի խոսքում ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը գովեստով արտահայտվեց պատմագիտության և ընդհանրապես հայագիտության զարգացման ասպարեզում Պատմության ինստիտուտի անուրանալի ձեռքբերումների, միջազգային գիտական ոլորտում դրանք ներկայացնելու, պատմաբանների նորանոր սերունդներ դաստիարակելու կարողության մասին: Նա փոխանցեց նաև ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի շնորհավորանքները:

Պատմության ինստիտուտի 75-ամյակի առթիվ շնորհավորանքի խոսքով հանդես եկան Երևանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանը, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ – Մատենադարանի տնօրեն Վահան Տեր-Ղևոնդյանը, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն Ռոբերտ Ղազարյանը, Գրականության ինստիտուտի տնօրեն Վարդան Դևրիկյանը, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն Գևորգ Պողոսյանը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասյանը, Երևանի պատմության թանգարանի տնօրեն Արմինե Սարգսյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վիլեն Հակոբյանը, «Թերմոռոս-Ար» ընկերության տնօրեն Խորեն Քոթանջյանը: Այնուհետև ընթերցվեցին ՌԴ ԳԱ ընդհանուր պատմության ինստիտուտի գիտական ղեկավար, ԱՊՀ երկրների պատմության ինստիտուտների ընկերակցության նախագահ Ալեքսանդր Չուբարյանի, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն Ալբերտ Սարգսյանի, «Հայկական Հանրագիտարանի» խմբագիր-տնօրեն Հովհաննես Այվազյանի շնորհավորական ուղերձները: Ա. Չուբարյանի ուղերձում մասնավորապես բարձր էր գնահատվում ԱՊՀ երկրների պատմության ինստիտուտների ընկերակցության աշխատանքներին Պատմության ինստիտուտի ակտիվ մասնակցությունը:

Միջոցառմանը ներկա էր և Պատմության ինստիտուտի հոբելյանը շնորհավորեց ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Դավիթ Սարգսյանը, ով փոխանցեց նաև Սփյուռքի նախարարի պաշտոնակատար Մխիթար Հայրապետյանի ողջույնի ուղերձը: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը պարգևատրվեց ՀՀ սփյուռքի նախարարության «Ոսկե հուշամեդալով», իսկ ինստի-

տուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը՝ նախարարության «Ոսկե մեդալով»: Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման բնագավառում ունեցած ներդրման համար ՀՀ սփյուռքի նախարարության պատվոգրերով պարգևատրվեցին ինստիտուտի փոխտնօրեն, պ.գ.դ., պրոֆեսոր Կարեն Խաչատրյանը, Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանը, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ. Արմեն Մարուքյանը, Սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Գևորգ Ստեփանյանը, նույն բաժնի աշխատակիցներ պ.գ.թ. Քնարիկ Ավագյանը, բ.գ.թ. Արծվի Բախչինյանը, պ.գ.թ. Անի Ֆիշենկճյանը, պ.գ.թ. Սեդա Օհանյանը և գիտաշխատող Էլիզաբեթ Թաջիրյանը:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի պատկառելի հոբելյանը նշանավորվեց «Պատմության ինստիտուտ – 75» գրքի լույսընծայմամբ, որի շնորհանդեսը նույնպես տեղի ունեցավ հանդիսավոր նիստի ընթացքում: Շուրջ 300 էջից բաղկացած սույն հանրագումարային տպավորիչ հատորը կազմել են Կարեն Խաչատրյանը (պատասխանատու խմբագիր), պ.գ.թ., դոցենտ Հակոբ Մուրադյանը, պ.գ.թ., դոցենտ Համո Սուքիասյանը: Ներկայացնելով կատարված կոլեկտիվ աշխատանքը՝ Կ. Խաչատրյանը մասնավորապես նշեց, որ աշխատության մեջ արխիվային վավերագրերի, ինստիտուտի տարեկան հաշվետվությունների, փաստագրական այլ նյութերի և պատմագիտական գրականության հիման վրա ի մի է բերվել Պատմության ինստիտուտի գիտական, գիտակազմակերպչական և գիտակրթական գործունեությունը:

Հոբելյանական հատորում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արդյունավետ գործունեությունը ներկայացված է առանձին բաժիններով: «Պատմության ինստիտուտի 75-ամյա ուղին» բաժնում շարադրված է ինստիտուտի ստեղծման ու զարգացման պատմությունը, միջազգային համագործակցությունը, կազմակերպած կոնֆերանսները: Խորհրդային Հայաստանի գոյության առաջին իսկ օրերից հայագիտությունը, այդ թվում նաև հայ պատմագիտությունը, պետական հիմքերի վրա է դրվել՝ ձևավորելով ազգային պատմագիտական միտքը:

Գրքում առանձին-առանձին լուսաբանված է ինստիտուտի տարբեր բաժինների (Հին դարեր, Միջին դարեր, Նոր, Նորագույն, Հայ պարբերական մամուլի և հասարակական-քաղաքական մտքի, Հայկական գաղթօջախների և սփյուռքի, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության, Ընդհանուր պատմության) արդյունավետ գործունեությունը: Հատորում ներկայացված է նաև 1943 թ. հիմնադրումից ի վեր Պատմության ինստիտուտում գործող թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների հրապարակային պաշտպանության մասնագիտական խորհրդի անցած ուղին:

Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի գործունեությանը նվիրված բաժնից կարելի է տեղեկանալ, որ ինստիտուտում երիտասարդական գիտաժողովները սկզբնավորվել են 1962 թ.: Երիտասարդ գիտաշխատողների խորհուրդը իր կազմակերպած շուրջ չորս տասնյակ գիտաժողովներով դարձել է գիտության ասպարեզ մուտք գործող հետազոտողների համար յուրօրինակ դպրոց:

Հիշարժան գրքում լուսաբանված է գիտական հիմնարկի իրականացրած բեղուն հրատարակչական գործունեությունը ևս՝

շնորհիվ բարեսիրական նվիրատվությամբ 2005 թ. Պատմության ինստիտուտում հիմնված տպարանի: Նվիրատուի անունը կրող «Մեսրոպ արք. Աշճեան» մատենաշարով մինչև օրս հրատարակվել է ավելի քան 180 գիրք: 1997 թ. հիմնվել է նաև «Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների ժողովածուտարեգիրքը՝ մինչև օրս տպագրելով շուրջ երկու տասնյակ հատոր:

Գրքում առանձին բաժին է տրամադրված նաև 2005 թվականից Պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի Պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնի գործունեության լուսաբանմանը, որի շուրջ երկու տասնյակ շրջանավարտներ աշխատում են ինստիտուտում:

Հոբելյանական հատորում առանձնապես տպավորիչ է 1943–2018 թթ. Պատմության ինստիտուտի աշխատակիցների հեղինակած մենագրությունների, կոլեկտիվ ուսումնասիրությունների, ինչպես նաև ինստիտուտի հրատարակած աշխատությունների, մատենաշարերի, փաստաթղթերի և նյութերի ժողովածուների ստվար մատենագիտությունը (1084 գիրք): Պատմագիտական հիմնարկի հարուստ տարեգրության մաս են կազմում նաև ինստիտուտի աշխատակիցների կողմից հանրապետական և արտասահմանյան գիտական պարբերականներում և ժողովածուներում հրատարակած մի քանի տասնյակ հազարի հասնող հոդվածները, որոնց ցանկը տակավին ներառված չէ:

Ինստիտուտի պատմությանը նվիրված հրատարակությունն օժտված է նաև ռուսերեն և անգլերեն ամփոփումներով, ինչպես նաև հիշարժան լուսանկարներով:

Համոզված ենք, որ, շարունակելով 75-ամյա լավագույն ավանդույթները, ինստիտուտի աշխատակիցներն այսուհետ ևս գիտական հանրությանը կներկայացնեն մեկը մյուսից արժեքավոր, խորազնին ու ինքնատիպ ուսումնասիրություններ: Հարազատ գիտական օջախին՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտին, մաղթում ենք հետագա նորանոր գիտական նվաճումներ՝ ի նպաստ հայագիտության և Հայաստանի ու հայ ժողովրդի անցյալի, ներկայի ու ապագայի:

Кнарик Р. Авакян, *Институт истории НАН РА, к.и.н.*, **Мероприятия, посвященные 75-ию основания Института истории НАН РА и летопись весомых достижений** – 26–27 декабря 2018 г. состоялись юбилейные мероприятия, посвященные 75-ию основания Института истории НАН РА.

В рамках юбилейных мероприятий была организована 39-ая сессия молодых ученых, в ходе которой свои исследования представили 18 молодых научных работников.

В зале заседаний интитута, под председательством директора, академика НАН РА Ашота Мелконяна, состоялось торжественное заседание, на котором выступили руководители различных научно-образовательских, историко-культурных, государственных и других учреждений, ученые института.

Состоялась презентация книги «Институт истории – 75» [Составители: Карен Хачатрян (отв. ред.), Акоп Мурадян, Амо Сукиасян, Ереван, 2018, 294 стр.], освещающая многолетнюю деятельность института. В книге также отдельно представлена деятельность действующих в институте Специализированного со-

вета, Совета молодых ученых, типографии, научноиздательского центра «Месроп Арх. Ашчян», ежегодника «Вопросы истории Армении», кафедры истории и международных отношений Международного научно-образовательного центра НАН РА и т.д.

В юбилейной книге представлена библиография изданий (более 1000 единиц), подготовленных научными сотрудниками Института в 1943–2018 гг.

В книге представлены также памятные фотографии, краткая информация на русском и английском языках.

Knarik R. Avakian, *NAS RA Institute of History, PhD in History,* **The commemorative events dedicated to the 75th anniversary of the formation of the NAS RA Institute of History and the chronicle of the impressive merit** – The commemorative events dedicated to the 75th anniversary of the foundation of the NAS RA Institute of History were held on 26–27 December, 2018.

In the frames of the jubilee, among other events the 39th Session of the Young Scientists of the Institute took place, where 18 young scholars presented their research papers.

The memorable jubilee was marked with the official session, which was held in the conference hall of the Institute under the Chairmanship of the Director of the Institute, NAS RA Academician Ashot Melkonyan. The congratulatory speeches were delivered by the Heads of various academic, educational, historical and cultural, governmental and other institutions, as well as by the researchers of the Institute.

The presentation of the jubilee volume entitled "Institute of History – 75" [Compiled by Karen Khachatryan (Editor-in-chief), Hakob Muradyan, Hamo Sukiasyan, Yerevan, 2018, 294 pages] took place, which elucidates the year-long activities of the Institute. The book presents also the activities of the Specialized Council, the Young Scientists' Council, the Printing Press, the "Mesrob Archbishop Ashjian" Academic and Publishing Center, the Yearbook of "The Issues of the Armenian History," the Chairs of History and International Relations, the NAS RA International Scientific Educational Center, etc., operating within the Institute of History.

In the jubilee book particularly impressive is the bulky bibliography of the books (more than 1000 units) published by the researchers of the Institute from 1943 to 2018.

The volume includes also memorable photographs, summaries in Russian and English.

ԼԻԱՆԱ Ս. ՆԱՋԱՐՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՏԱՅՔՈՒՄ

Բանալի բառեր՝ Տայք, քաղկեդոնականություն, Հայոց եկեղեցի, Վրաց եկեղեցի, եպիսկոպոս, «վրացի», Գրիգոր Խանձթեցի, դավանանք:

Մեծ Հայքի Տայք նահանգում տարածվեց և խոր արմատներ ձգեց քաղկեդոնականությունը: Այն իր հետքը թողեց նահանգի ազգային, լեզվական և մշակութային նկարագրի, ինչպես նաև երկրանվան փոփոխման վրա: Դավանական գործոնով պայմանավորված՝ Տայքը և դրա բնակչությունն աստիճանաբար «վրացականացավ», որը բնորոշում էր նրանց դավանանքը և ոչ թե՝ ազգությունը[1]: Քաղկեդոնականության տարածման պատճառով անգամ Կուրապաղատությունը և նրա կառավարիչները հայկական միջնադարյան աղբյուրներում հաճախ կոչվել են «վրացի», «Վրաց աշխարհի», «վրաց ազգ», «կրոնով վրացի», «վրաց իշխան կամ կուրապաղատ» և այլն:

Տեղի բնակչությանը «վրացի» տերմինով բնորոշելու տիպիկ և լավագույն մեկնաբանությունը տվել է Հակոբ Կարնեցին. «Եւ էին բնակիչք երկրիս [Տայքի – Լ.Ն.] կէսն Հայ ազգաւ և կէսն

[1] Մուրադյան Պ., Հայաստանի վրացերեն արձնագրությունները, աղբյուրագիտական քննություն, Ե., 1977, էջ 16-18, 22-23, տե՛ս նաև՝ **Марр Н.Я.**, Ани, Е., 1939, էջ 156:

կրօնիւք Վրացի, բայց Հայի լեզուաւ խօսէին»[2]: Իսկ ըստ Մխիթար Գոշի՝ «թէ Վրացի զՀայ մկրտէ եւ կամ թէ Հայ զՎրացի»[3]: Այսինքն՝ ինչպես հայերն էին ընդունում երկաբնակություն, այնպես էլ՝ վրացիներն էին ընդունում Հայոց եկեղեցու դավանանքը:

Տայքում քաղկեդոնականների երևան գալու և նրանց համայնքի մասին առաջին վկայությունները պահպանվել են հայ-քաղկեդոնական եզակի սկզբնաղբյուրում՝ «Narratio de rebus Armeniae»[4] («Պատմություն հայոց հարցի մասին») երկում, որում նշվում է, որ «պատերազմ տեղի ունեցավ... Փոկաս կայսեր [602–610] Ե (5) տարին և Խոսրովի [Խոսրով II, 590–628 – Լ.Ն.] Ի (20) տարին: (...) Այն ժամանակ էր, որ հերետիկոս Աբրահամ կաթողիկոսը[5] ստիպեց Հովհաննեսի[6] բաժնի եպիսկոպոսներին նզովել Քաղկեդոնի ժողովը, հակառակ դեպքում՝ հեռանալ Հայաստանի շրջաններից: Վերջիններս չհամաձայնվեցին և նրանցից ոմանք անցան Տայք, ոմանք հոռոմոց երկիրը և վախճանվեցին օտարության մեջ»[7]: Այսպիսով, VII դ. առաջին տասնամյակում Տայքում նկատվում են քաղկեդոնական տարրեր, իսկ երկրամասը կոչվում է հայկական ձևով՝ «Տայք»: Հիշյալ միտքը գրե-

---

[2] **Յակոբ Կարնեցի**, Տեղագիր Վերին Հայոց Յիշատակարան ԺԷ. դարու, Վաղարշապատ, 1903, էջ 17–18:

[3] **Մխիթար Գոշ**, Թուղթ առ վրացիսն՝ յաղագս ուղղափառութեան հաւատոյ, Մատենագիրք Հայոց, հ. Ի, ԺԲ դար, գիրք Բ, Ե., 2014, էջ 458:

[4] **Բարթիկյան Հ.**, «Narratio de rebus Armeniae», Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա, Ե., 2002, էջ 97–110: Աղբյուրի գիտաճանաչական արժեքի մասին մանրամասն տե՛ս **Մելիքյան Կ.**, «Narratio de rebus Armeniae» հայ-քաղկեդոնական երկը վաղ միջնադարյան Հայոց եկեղեցու պատմության կարևոր սկզբնաղբյուր, Ե., 2007:

[5] Խոսքը Աբրահամ Ա Աղբաթանեցու (607–610) մասին է:

[6] Հովհաննեսը Հայաստանի հունական մասի հակաթոռ կաթողիկոս էր նշանակվել Մորիկ կայսեր կողմից 591 թ.:

[7] **Բարթիկյան Հ.**, «Narratio de rebus Armeniae», էջ 107:

թե նույնությամբ կրկնվում է «Վրաց և հայոց բաժանման մասին» վրացերեն մի աշխատությունում, որի հեղինակը IX դարի երկրորդ կեսի Վրաց կաթողիկոս Արսեն Սափարացին է. «Աբրահամ կաթողիկոսը քշեց Այրարատից Քաղկեդոնի ժողովի կողմնակից քահանաներին և Հովհան՝ վանահորն սուրբ կաթողիկեին...նրա կողմնակից քահանաներին, վորոնք գնացին՝ մի մասը հույների մոտ, մյուսը՝ Տայք (Տաո)»[8]: Այսինքն՝ երկրամասում քաղկեդոնականության տարածումը սկսվել է VII դ. սկզբներին, սակայն իշխանական վերնախավում այն ընդունվել է միայն IX դ., երբ Բագրատունիները Բյուզանդիայի կայսրերից տիտղոսներ ստացան՝ հիմք դնելով կուրապաղատների ժառանգական իշխանությանը:

Սակայն քաղկեդոնականությունը երկրամասում նույնիսկ IX–XI դդ. համատարած չէր, և անգամ հոգևորականության շրջանում շարունակում էին պահպանվել Հայոց եկեղեցու սրբերի մասին հիշողությունները:

Այդ է վկայում Աթոսի Իվերոն վանքի XI դ. առաջին կեսի վրացերեն վարքագրական-վկայաբանական մի ժողովածու[9]: Ըստ Ն. Մառի՝ այն «վրաց ուղղափառ եկեղեցու հետ կապված հայոց համար է հատկացված»[10]: Գիտնականի այս ուշագրավ դրույթը հիմնված է ձեռագրի 349r$_2$ էջի մի նախադասության վրա, որի վերծանումը, ըստ Ն. Մառի, հետևյալն է. «ընդ

---

[8] Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա (Ե–ԺԲ դար), Ե., 1934, էջ 44:

[9] Հայոց «Վարք սրբոց»-ի վրացական խմբագրությունը, թարգմանություն հին վրացերենից և ուսումնասիրությունը Պ. Մուրադյանի, Ս. Էջմիածին, 2008 (այսուհետև՝ Հայոց «Վարք սրբոց»-ի վրացական խմբագրությունը), էջ 1:

[10] Марр Н., Из поездки на Афон, ЖМНПр., 1899, N 3: Նույնի՝ Агиографические материалы по грузинским рукописям Ивера, ч. I, СПб., 1901, с. 47–72.

[წამებ]ანი სომხურითგან თარგმნილ არიან» – «Այս վկայաբանությունները հայերենից են թարգմանված»: Ի. Աբուլաձեն այլ կերպ է վերծանում այն. «ესე [საკითხ]ვნი სომხთაგან თარგმნილ არიან» – «Այս ընթերցելիքները հայերի կողմից են թարգմանված»[11]: Այսինքն՝ թե՛ Ն. Մառը, թե՛ Ի. Աբուլաձեն չեն ժխտում ժողովածուի ստեղծումը հայ քաղկեդոնական միջավայրում: Ավելին, ըստ նրանց, այն թարգմանվել է Տայք-Կղարջքյան հայ քաղկեդոնադավան և վրացախոս միջավայրում: Պ. Մուրադյանի բնորոշմամբ՝ «պիտի ընդունել, որ վրաց ազգային եկեղեցու տոնելի սրբերի շարք չմտած նահատակների ու վկաների ճանաչումը կարող էր տեղի ունենալ հայկական դավանական միջավայրից աստիճանաբար օտարացող, ժամասացության լեզվի վրացականացմամբ հայրենի մշակութային ավանդների անհրաժեշտությունը դեռևս գիտակցող և այդ պահանջը հայերենից կատարվող թարգմանություններով բավարարող քաղկեդոնական հայոց միջավայրում»[12]: Այսինքն՝ Տայքի և Կղարջքի հայ հոգևորականությունը թեև յուրացնում էր վրաց գիրն ու գրականությունը, այնուամենայնիվ, շարունակում էր հիշողության մեջ պահել հայոց «Վարք սրբոց»-ից քաղված որոշ վարքեր ու վկայաբանություններ:

Ժողովածուն ընդգրկում է տասներեք վկայաբանություններ[13], որոնցից մեզ առավել հետաքրքրում են երկուսը՝ «Ընթերցումն երկու սուրբ տղա՝ եղբայրներ Դավթի և Տիրիճանի»[14] և

---

[11] აბულაძე ი., ქართული და სომხური ლიტერატურული ურთიერთობა IX–X სს-ში, გამოკვლევა და ტექსტი, თბილისი, 1944, გვ. 064.

[12] Հայոց «Վարք սրբոց»-ի վրացական խմբագրությունը, էջ 10:

[13] Տե՛ս նույն տեղում, էջ 47–117:

[14] Նույն տեղում, էջ 107–114:

«Վկայաբանություն թվով ինը սուրբ մանկանց, որոնք սուրբ ավազանի մկրտությամբ հոգևոր եղբայրներ էին, իսկ ծնված յուրաքանչյուրն իր մորից»[15], որոնք անմիջականորեն վերաբերում են Տայքին: Վկայաբանությունների սյուժեները զարգանում են Տայքում:

Երկու վկայաբանություններն էլ վերաբերում են մանուկների կյանքին, որոնք նահատակվել են հավատքի պատճառով: Վարքագիրը հայտնում է, որ Դավիթ և Տիրիճան եղբայրներին նրանց մայրը՝ Թագինեն, Բասենի գավառի Օնկում ավանից տեղափոխում է հյուսիսային կողմեր՝ Տայք, իրենց ազգական Վազգեն (վրաց. բնագրում՝ Վահգենի) իշխանի մոտ[16]: Դրանցից մեկում նշվում է, որ ծնողները «երեխաներից առաջնեկին կոչեցին Դավիթ՝ հանուն մեծն թագակիր և մարգարե Դավթի: Իսկ նրա հաջորդին՝ եղբորը, հայոց լեզվով Տիրիճան կոչեցին»[17]: Մանկահասակ եղբայրները սպանվում են իրենց մորեղբայր Թևդասի կողմից, քանզի «սուրբ Երրորդության ճշմարիտ ու ուղիղ հավատ ունեին»[18]:

Երկրորդ վկայաբանությունը վերաբերում է ինը մանկահասակ երեխաների, որոնք ևս նահատակվում են հավատքի համար՝ իրենց ծնողների կողմից: Ինչպես նշվում է վկայաբանությունում. «Կուր կոչվող մեծ գետի ակունքի մոտ, Կողա կոչվող գավառում մի մեծ գյուղ կար [խոսքը Տայքի Կող գավառի Կրիակունք գյուղի մասին է-Լ.Ն.]: Այդ գյուղի բնակչության մեծամասնությունը հեթանոսաց կուռքերի պաշտող էր, ժողովրդի փոքր

---

[15] Նույն տեղում, էջ 115–117:
[16] Նույն տեղում, էջ 109:
[17] Նույն տեղում, էջ 107:
[18] Նույն տեղում:

մասը՝ քրիստոնյա, աստվածապաշտ»[19]: Վարքի հեղինակն ավելացնում է. «Եւ ինչպես երեխաների սովորությունն է, հավաքվում էին քրիստոնյաների ու հեթանոսների տղաները խաղալու ու խաղում օրն ի բուն: Իրիկնաժամին երեցը կոչնակում էր, և քրիստոնյաների երեխաները եկեղեցի էին գնում աղոթելու՝ ինչպես քրիստոնյաների ծեսն է, մինչդեռ հեթանոսների թվով ինը երեխաները հետևում էին նրանց, որովհետև ընտելացել էին քրիստոնյաների երեխաներին և սիրում էին քրիստոնեական կրոնը: Ու երբ մոտենում էին եկեղեցու դռներին, քրիստոնյաները եկեղեցի չէին թողնում, այլ այսպես էին ասում նրանց, թե՝ «Դուք կռապաշտների որդիներ եք, և պատշաճ չէ ձեզ մտնել տունն Աստծո»[20]: Ըստ աղբյուրի, քահանան գիշերով նույն գետում, այսինքն՝ Կուր գետում մկրտում է երեխաներին, որի պատճառով նրանք սպանվում են ծնողների կողմից:

Երկու աղբյուրում էլ մանուկները նահատակվում են քրիստոնեական հավատքի համար, այսինքն՝ ըստ առաջին վարքի հեղինակի, նրանց մորեղբայրը հեթանոս էր և եղբայրներին սպանում է քրիստոնյա դառնալու համար: Իսկ երկրորդ վկայաբանությունում նշվում է, որ հիշյալ՝ Կրիակունք գյուղի բնակչության մեծամասնությունը հեթանոսական կուռքերի պաշտող էր, ժողովրդի փոքր մասը՝ քրիստոնյա, աստվածապաշտ[21]: Նահատակված ինը մանուկները հեթանոսների զավակներ էին, որոնք քրիստոնեության համար զոհվեցին: Այս երկու վարքերն էլ գրված են VIII դ. ոչ շուտ և IX դ. ոչ ուշ՝ այն ժամանակաշրջանում, երբ Տայքում տարածվում էր քաղկեդոնականությունը, ուս-

---

[19] Նույն տեղում, էջ 115:
[20] Նույն տեղում:
[21] Նույն տեղում:

տի զարմանալի է, որ վկայաբանությունները վերաբերում են քրիստոնեության և հեթանոսության պայքարին: Ընդ որում, ի տարբերություն ժողովածուում զետեղված մյուս վարքերին, այս երկուսի նահատակները՝ մանուկները, ընդգրկված չեն հայ եկեղեցու սրբերի կամ նահատակների շարքում, ավելին՝ նրանց մասին միջնադարյան այլ ժողովածուներում վկայություն չկա:

Երկու վարքերի գոյությունը փաստում է, որ դրանք ստեղծվել են Տայքի հայ-քաղկեդոնականների կողմից և հայ իրականությունից զգալիորեն օտարվելով չեն ընդգրկվել հայ մատենագրության մեջ: Երկրորդ բացատրությունը կարող է լինել հետևյալը. դրանք գրվել են Տայքի՝ Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների կողմից, ապա թարգմանվել վրացերեն, դարձյալ դուրս չգալով քաղկեդոնական միջավայրից: Կա նաև երրորդ տարբերակ: Դա վերաբերում է վկայաբանությունների բովանդակությանը: Չի բացառվում, որ վարքում նկարագրվող քրիստոնեության և հեթանոսության պայքարի փոխարեն սկզբնապես նկարագրվել է քաղկեդոնականության և միաբնակության պայքարը՝ առաջինը ներկայացվելով իբրև քրիստոնեություն, իսկ երկրորդը՝ հեթանոսություն: Քանի որ այդ դեպքում հասարակ ժողովրդի շրջանում քաղկեդոնականության բռնի տարածման փաստերն ակնառու կլինեին, հետագա ընդօրինակությունները կամ թարգմանությունները, որոնք ընդ որում սակավ են, վերափոխել են քրիստոնեության և հեթանոսության պայքարի: Այդ իսկ պատճառով էլ դրանք չեն տարածվել հայ եկեղեցու շրջանում, իսկ վրաց մատենագրության շրջանակներում համեմատաբար քիչ են:

Այսինքն՝ այս վարքերն ու վկայաբանությունները ցույց են տալիս, որ Տայքում VIII–IX դդ. պահպանվում էին միաբնակութ-

յուն դավանող համայնքներ, իսկ քաղկեդոնականությունը, ի տարբերություն իշխող խավերի, թշնաբամար էր ընդունվում հասարակ ժողովրդի շրջանում:

Թերևս, Տայքում և հարևան Կղարջքում IX–X դդ. միաբնակություն դավանողների գոյության ոչ ուղղակի վկայության կարելի է հանդիպել այդ շրջանի վարքագրական մեկ այլ կարևոր աղբյուրում՝ Գրիգոր Խանձթեցու վարքում: Չնայած այնտեղ ուղղակի չի նշվում միաբնակություն դավանողների մասին, բայց հիշվում է ինչ որ «չարքերի» և «թշնամիների» մասին: Սրանք մշտապես հալածում են Գրիգոր Խանձթեցու աշակերտներից մեկին և ցանկանում վտարել իր վանքից: Վերջինս էլ դիմում է Խանձթեցու օգնությանը, որն էլ գնում և փախուստի է մատնում «չարքերին»[22]: Այս առասպելախառն տեղեկություններն արտաքուստ որևէ արժեք չունեն, սակայն ուշագրավ են դառնում, եթե հաշվի առնենք ժամանակաշրջանը: Գրիգոր Խանձթեցին ապրել և հոգևոր գործունեություն է ծավալել IX–X դդ.: Դա մի ժամանակահատված էր, երբ Տայքում և Կղարջքում մեծանում էր քաղկեդոնականության տարածումը, որն անկասկած միանշանակ չէր ընդունվում տեղաբնիկ հայերի կողմից, ինչի ապացույցն են վերոնշյալ երկու Վարքերը: Գրիգոր Խանձթեցու աշակերտը, համաձայն վարքագրի, եկել էր Միջնաձորից և հաստատվել «Բերդի»-ում (վրացերեն բնագրում՝ ბერთისა (Բերթիսա))[23]: Կարծում ենք, այս «Բերդին» Տայք նահագի Բերդաց փոր

---

[22] **Георгий Мерчул**, Житие Григория Хандзтийского, перевод Н.Я. Марра (Тексты и разыскания по армяно-грузинской филологии, кн. VII), СПб., 1911, с. 113–114.

[23] Նույն տեղում, էջ 38, 113:

գավառի Բերդիկն[24] է: Իսկ Տայքում մինչև IX դ. երկրորդ կեսը հայտի էր Սահակ Մռութ եպիսկոպոսը, որն էլ Վարդան վարդապետի վկայությամբ «հալածեալ անտի [Տայքից – Լ.Ն.] վասն հաւատոյ»[25]: Վերոհիշյալ վկայությունների համադրությունից հետևում է, որ երբ քաղկեդոնական հոգևոր գործիչը գալիս է Տայք, հալածանքների է արժանանում տեղի հոգևորականության կողմից: Սակայն շուտով քաղկեդոնադավանները հաղթում են և հալածում ու փախուստի են մատնում միաբնակություն դավանողներին, որոնց առաջնորդ Սահակ Մռութը Վարդանի վկայությամբ ապաստանում է Հայոց արքա Աշոտ Ա-ի (885–890) մոտ:

Այսպիսով, սկզբնաղբյուրների տեղեկությունների քննությամբ կարելի է փաստել Տայքում քաղկեդոնականության բռնի տարածումը, հատկապես, հասարակ բնակչության շրջանում: Այնուհանդերձ, այնտեղ անգամ XI դ. շարունակեցին գոյատևել միաբնակություն դավանողների համայնքներ:

Տայքում քաղկեդոնականության արմատավորվելուն և լայնորեն տարածվելուն նպաստեցին հատկապես Բագրատունիների վրացական ճյուղի գլխավորությամբ տեղի իշխող վերնախավի կողմից քաղկեդոնականություն ընդունելը: Տայքում քաղկեդոնականության տարածման հետևանքով Հայ եկեղեցուց ան-

---

[24] Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Ե., 1963:

[25] Հավաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, ի Վենետիկ, 1862 (այսուհետև՝ Վարդան վարդապետ), էջ 85:

ջատված Վրաց եկեղեցին[26] սկսեց փորձեր կատարել այնտեղ տարածելու սեփական ազդեցությունը:

Սակայն Տայքը մինչև IX դ. վերջը եղել և մնում էր Հայ առաքելական եկեղեցու ենթակայության տակ՝ ունենալով իր եպիսկոպոսները: Այդ են վկայում հայկական վաղմիջնադարյան աղբյուրները: Գրիգոր Լուսավորիչը կաթողիկոս ձեռնադրվելուց հետո Հայաստանի տարբեր նահանգներում կարգում է եպիսկոպոսներ, որոնց թվում էր Տայքի եպիսկոպոսը: Սակայն վերջինիս անունը հայտնի չէ[27]: Ագաթանգեղոսի երկի հայերեն խմբագրությունում հիշվում են միայն տասներկու եպիսկոպոսի անուն, որոնց մեջ բացակայում է Տայքի եպիսկոպոսը[28]: Իսկ Ագաթանգեղոսի հունական խմբագրությունում նշվում է Աղբիոս եպիսկոպոսի անունը, որին կոչում են սպարապետական տան՝ Մամիկոնյանների եպիսկոպոս՝ «նա Տարոնի և Տայքի եպիսկոպոսն էր»[29]: Աղբիոսին Մամիկոնյանների եպիսկոպոս համարելը, թերևս նրա՝ այդ նախարարական տան տոհմական տիրույթների՝ Տայքի ու Տարոնի եպիսկոպոս լինելու հետևանք էր: Հավանաբար Ուխտանեսի հիշած Տայքի եպիսկոպոսը հենց այս Աղ-

---

[26] Վրաց եկեղեցու բաժանման մանրամասների ու թվականի վերաբերյալ տե՛ս **Ակինեան Ն.**, Կիտրոն կաթողիկոս Վրաց, պատմութիւն հայ-վրական յարաբերութեանց եօթներորդ դարու մէջ, պատմական ուսումնասիրութիւն, Վենետիկ, 1910, էջ 243:

[27] **Ուխտանէս եպիսկոպոս,** Պատմութիւն Հայոց, Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, ժ. դար, Ե., 2011, էջ 503:

[28] Ագաթանգեղայ պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և **Ս. Կանայանցի,** աշխարհաբար թարգմանությունը **Ա. Տեր-Ղևոնդյանի,** Ե., 1983, էջ 470 (այսուհետև՝ Ագաթանգեղոս):

[29] **Բարթիկյան Հ.,** Ագաթանգեղոսի Պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք), թարգմանություն բնագրից՝ **Հ. Բարթիկյանի,** առաջաբան և ծանոթագրություններ՝ **Ա. Տեր-Ղևոնդյանի,** Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա, էջ 178:

բիոսն էր: Զ. Ալեքսիձեն, սակայն, ժխտում է այդ փաստը՝ պնդելով, որ Տայքի եպիսկոպոսի անունը հայտնի չէ[30]: Նա նաև հավելում է, որ դեռևս հաստատ հայտնի չէ, թե ընդհանրապես եպիսկոպոսներ ձեռնադրվել են հայերի կողմից քրիստոնեության ընդունման առաջին տարիներին[31]: Սակայն կասկածից վեր է, որ քրիստոնեության ընդունման սկզբնական ժամանակաշրջանում Գրիգորը եպիսկոպոսներ է ձեռնադրել Հայաստանում:

Մինչ Քաղկեդոնի IV տիեզերական ժողովի գումարումը (451 թ.) և դրանից հետո աղբյուրները զանազան առիթներով հիշում են Տայքի եպիսկոպոսներին: Փավստոս Բուզանդը, թվելով Հռոմի և Պարսկաստանի միջև Հայաստանի առաջին բաժանումից (387 թ.) հետո Պարսից բաժնի եպիսկոպոսներին, հիշում է նաև «եպիսկոպոսն Տայոց Կիրակոս, որ Շահապ անուն կոչէր, այր ճշմարիտ աստուածապաշտ ըստ կամացն աստուծոյ, և ուղիղ ճշմարտութեամբ մառաջնորդէր ժողովրդեանն իւրում»[32]: Տայքի հաջորդ եպիսկոպոսը, որը հիշվում է պատմիչների մոտ, Արտաշատի ժողովի մասնակից Տաճատն էր (450 թ.)[33]: V դ. կեսերին հայտնի էր նաև Աբրահամ երեցը Տայոց գավառի Զենակս գյուղից, որի մասին վկայում է Ղազար Փարպեցին[34]: Նա առավել

---

[30] ալեքսիձე Զ., ვინ იყო ტაოს პირველი ეპისკოპოსი, საისტორიო კრებული, წელიწდეული, 1, მხედარი, 2011, էջ 18:

[31] Նույն տեղում:

[32] Փավստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները **Ստ. Մալխասյանցի**, Ե., 1987, էջ 410:

[33] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ **Գ. Տէր-Մկրտչեան** եւ **Ստ. Մալխասեան**, Տփղիս, 1904 (այսուհետև՝ Ղազար Փարպեցի), էջ 44, Եղիշէի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ **Ե. Տէր-Մինասեան**, Ե., 1957, էջ 28:

[34] **Ղազար Փարպեցի**, էջ 94:

հայտնի է որպես Աբրահամ Խոստովանող մատենագիր[35] և 463 թ. ձեռնադրվել է Բզնունիք գավառի եպիսկոպոս[36]: Ծնունդով Տայքից էր նաև Գյուտ Ա Արահեզացի (461–478) կաթողիկոսը[37], հավանական է, որ նրանք երկուսն էլ իրենց հոգևոր գործունեությունը սկսել են Տայքում, թեև աղբյուրներն այդ մասին լռում են:

Տայքի եպիսկոպոսը մասնակցել է նաև 506 թ. Դվինի առաջին եկեղեցական ժողովին, որի անունն Ատատեա էր[38]: Այդ ժողովն ուղղված էր նեստորականության և քաղկեդոնականության դեմ[39]: Մովսես Կաղանկատվացին հիշում է Տայքի եպիսկոպոս Ստեփանոսին, որը մասնակցել է հայոց հավատը հաստատուն պահելու վերաբերյալ Աղվանից կաթողիկոս Տեր Աբասին (551–595) ուղղված Հայոց կաթողիկոս Հովհաննես Բ Գաբեղենացու (557–574) գրած նամակի կազմմանը[40]: Ստեփանոսի մասին վկայված է նաև Գիրք Թղթոցում[41]:

Տայքի հոգևոր դասի ներկայացուցիչներից էր Հայոց կաթողիկոս Ներսես Գ Տայեցին (641–661): Վերջինս, ինչպես վկայում է Սեբեոսը, Տայքի Իշխան գյուտից էր[42], սակայն պատմիչը նրան չի դասում Տայքի եպիսկոպոսների շարքին: Ներսեսին՝ որպես

---

[35] Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Ե., 2002, էջ 10:

[36] Նույն տեղում:

[37] **Ղազար Փարպեցի**, էջ 110:

[38] «Գիրք թղթոց», Մատենագրութիւն նախնեաց, Թիֆլիս, 1901 (այսուհետև՝ «Գիրք թղթոց»), էջ 41:

[39] Ազգապատում հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատուած, գրեց Մաղաքիա արքեպիսկոպոս **Օրմանեան**, հ. Ա, Էջմիածին, 2001, սյունակ 583–592:

[40] Մովսէս Կաղանկատուացին եւ իր «Աղուանից աշխարհի պատմութիւն»-ը, Մատենագիրք Հայոց, հ. ԺԵ, Ժ. դար, Ե., 2011, էջ 168:

[41] «Գիրք Թղթոց», էջ 81:

[42] Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ.Վ. Աբգարյանի, Ե., 1979, էջ 166:

Տայոց եպիսկոպոս են հիշում Հովհաննես Դրասխանակերտցին[43] և Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը[44]: Ներսես Գ-ի հրավիրած Դվինի 645 թ. կամ 648 թ. եկեղեցական ժողովին ևս մասնակցել է Տայքի Իսրաել անունով եպիսկոպոսը, որը վկայված է Կանոնագրքում[45]: Տայոց Սարգիս եպիսկոպոսը մասնակցել է 726 թ. կաթողիկոս Հովհաննես Գ Օձնեցու (717–728) հրավիրած Մանազկերտի եկեղեցական յոթերորդ ժողովին[46]: Տայքի վերջին եպիսկոպոս է հիշվում վերոհիշյալ Սահակ Մռուտ վարդապետը: Այդ մասին վկայում է Վարդան պատմիչը[47]:

Եկեղեցական ժողովներին վերը թվարկված եպիսկոպոսների մասնակցությունն անգամ բավարար է փաստելու, որ Տայքի եպիսկոպոսական թեմը շարունակում էր մնալ Հայոց եկեղեցու կազմում: Ընդ որում, նրա հոգևոր հովիվը եկեղեցական դասի ներկայացուցիչների մեջ մշտապես հիշատակվում է սկզբնական շարքերում, ինչից էլ կարելի է ենթադրել, որ Տայքի եպիսկոպոսները եղել են ազդեցիկների թվում:

Իսկ քաղկեդոնականության տարածմանը Տայքում նպաստեց նաև երկրամասի ամուր, անմատչելի դիրքը: Հայաստանի մյուս վայրերից հալածվող քաղկեդոնականները թաքնվում և

---

[43] Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 83:

[44] Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 88:

[45] Կանոնագիրք Հայոց, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, հ. Բ, Ե., 1971, էջ 214, Օրմանյան Մ., նշվ., աշխ., սյունակ 829:

[46] «Գիրք Թղթոց», էջ 223: Տայքի եպիսկոպոսի մասին մանրամասն տե՛ս նաև Տէր-Մինասեանց Ե., Հայոց եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ, Ս. Էջմիածին, 1908, ծանոթ. 4, էջ 191:

[47] Վարդան վարդապետ, էջ 85:

ապաստանում էին այստեղ, որի հետևանքով էլ ժամանակի ընթացքում նրանք մեծ թիվ կազմեցին երկրամասում:

Лиана С. Назарян, *Институт истории НАН РА,* **Распространение халкедонидства в Тайке** – Тайк один из тех провинций Великой Армении, где широко распространилось халкедонидство. Оно оставило свой след в культурной, национальной и лингвистической жизни провинции. Тайк и местное население постепенно стало «грузинским», что характеризовало их религию, а не национальность. Несмотря на распространение халкедонидства в регионе, тем не менее, Тайк был и до конца IX в. оставался неотделимой частью Армянской церкви, имея своего епископа.

Liana S. Nazaryan, *NAS RA Institute of History,* **The Spreading of Chalcedonianism in Tayk** – Tayk was one of the provinces of Armenia Major where chalcedonianism was widely spread. It left its traces on the ethnic, linguistic image and cultural life of the province as well as the changing of the toponym. Tayk and its local population was gradually "Georganized" which characterized their confession and not the ethnicity. Notwithstanding the spreading of chalcedonianism in the province, never the less, up to the 9th c. Tayk remained an inseparable part of the Armenian Church having its own bishop.

ԱԼԲԵՐՏ Ա. ԽԱՌԱՏՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.դ., պրոֆեսոր,
ԳԱԱ թղթակից անդամ

ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ԷԳԵՅԱՆԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐՈՒՄ (XVII–XVIII ԴԴ.)

Բանալի բառեր՝ Օսմանյան կայսրություն, Զմյուռնիա, գաղթօջախ, արհեստ, առևտուր, տնտեսություն:

XVII–XVIII դդ. բնաշխարհից դուրս եկած հայ գաղթական բազմությունների մեջ, թերևս, ամենաբազմամարդը հողագործներն էին, թեև այստեղ դժվար է սոցիալական ճշգրտումներ մտցնելը, այնուհետև արհեստավորները և առևտրականները (և՛ քաղաքային, և՛ գյուղատնտեսական շրջաններում): Հատկապես այս երկու խավերը նոր հանգրվաններում հաստատվելու ավելի լայն կարելիություններ ունեին. միջնադարյան արևելյան քաղաքում և գավառում արհեստներն ու առևտուրն ընկած էին մարդկանց առօրեական կենցաղավարության հիմքում, որ հնարավորություն էր տալիս այդ ոլորտներում զբաղված մարդկանց համեմատաբար անհիվանդագին և անկաշկանդ հարմարվելու նոր միջավայրին, անծանոթ տնտեսական ու հասարակական պայմաններին: Ստույգ կամ դրան մոտ վիճակագրական տվյալներ չկան, թե առանձին գաղթերի ժամանակ հայ գաղթականների (Արևմտյան կամ Արևելյան Հայաստանից) որ մասն է տեղավորվել Զմյուռնիայում կամ փոքրասիական այլ քաղաքներում, և որ

մասը՝ գյուղատնտեսական՝ հողագործական շրջաններում, սկսած Կիլիկիայի անկման ժամանակներից (XIV դ. վերջին քառորդ) և վերջացրած Աղա Մահմադ Խանի և Էնկյուրիի հայերի գաղթով XVIII դ. 90-ական թթ.): Էլ չենք խոսում X–XI դդ. կամ դրանց հետևող նույնպես հեռավոր ժամանակների հայկական հնամենի գաղթօջախների մասին, որոնց Էգեյանի ափերին հաստատվելը, անառարկելի իրողություն է՝ անկախ աղբյուրների սակավությունից կամ կցկտուր որակներից: Ավելացնենք նաև, որ խնդրո առարկա միջնադարյան իրականության մեջ հողագործությունը, արհեստները և առևտուրը խորը անջրպետներով բաժանված չէին միմյանցից, որ հատկապես նպաստավոր էր գաղթականության համար, որը կենսապահովման պահանջներից կամ անծանոթ միջավայրին հարմարվելու թելադրանքով առավել ջանքեր կարող էր գործադրել իր ունակությունների ամբողջ ներուժը գործնական շրջանառության մեջ ներդնելու համար: Արհեստավորը ևս կարող էր զբաղվել առևտրով կամ հողագործությամբ, ինչպես և հողագործը՝ հանդես գալով շուկայական սուբյեկտի դերում, առևտրականը՝ հողագործի և այլն: Միջնադարյան քաղաքներում, այսուհանդերձ, արհեստագործությունն ուներ իր հաստատ, կայուն տեղը, որպես սոցիալական որոշակի տարր՝ հասարակական արտադրության և փոխհարաբերությունների մեջ և հայ արհեստավորությունն այս տեսակետից բացառություն չէր կարող կազմել: Էսնաֆի (մասնագիտությունների կորպորատիվ միավորման)[1] մեջ մտնող հայ արհեստավորութ-

[1] Էսնաֆի՝ մասնագիտական կորպորացիայի մեջ էին մտնում բոլոր սոցիալական խավերը, բացի ենիչերիներից, պետական ծառայողներից և հոգևորականներից: XVII դ. կեսին Կ. Պոլսում կային 1109 արհեստավորական միա-

յունը մեծ քաղաքներում անդամակցում էր կրոնադավանական խառը խմբավորումներ ներկայացնող արհեստավորական այդ կազմակերպություններին, որոնք Օսմանյան Թուրքիայում գլխավորում էին մահմեդական թուրքերը: Բուն արհեստանոցներից սկսած՝ իրեն ամենուրեք զգացնել էր տալիս կրոնական խտրականությունը, որին ծանոթ էին դեռևս հայրենիքում գործառած և հետագայում գաղթի ուղիները բռնած հայ արհեստավորները: Հայկական նահանգներում, գրում է Հ. Անասյանը, նրանք «իրենց արհեստներն ի գործ դնելու իրատւնքին տիրանալու համար բռնադատտում էին իսլամների հետ միասին անդամակցելու թուրքական արհեստատրական միատրումներին, իսկ անդամակցելու համար՝ նրանց նման ենթարկտում էին իսլամական սահմանուած ծիսակատարութիւններին և այդ միջոցով՝ իսլամութիւնն ընդունելու թելադրանքներին»[2]: Թուրք արհեստավորական միջավայրի այդպիսի զոհ էր դարձել Թոքատից Զմյուռնիա եկած կոշկակար պատանի Բաղդասարը: Սկզբնաղբյուրի շարադրանքից ակնհայտորեն երևում է, որ Բաղդասարին և նրա հետ եկած վարպետին թույլ չեն տվել գործելու մեկուսի՝ կոշկակարների էսնաֆից առանձին (որին նախանձախնդիր էին առհասարակ արհեստավորական միությունները) և դիմել են նրանց ասպարեզից հեռացնելու միջոցների: Դիմենք բնագրին՝ «Եւ ուաթային առեալ զԲաղդասարն եւ երթայ ի Զմիւռնի քաղաք Լիկեացւոց, առ ի գործել զգործ արուեստին: Իսկ հարկահանքն

վորումներ՝ իրենց կազմում ունենալով առավելագույնը 200 հազար մարդ (Хитцель Ф., Османская империя, М., 2006, с. 148–149):

[2] Անասեան Յ., Թուրքական ֆութուվվաթը եւ հայերը (Օսմանեան կայսրութեան ծուլողական քաղաքականութեան պատմութիւնից), «Հասկ» հայագիտական տարեգիրք, Անթիլիաս-Լիբանան, 1995, էջ 223:

որք առնուին զհարկն՝ տեսեալ զԲաղդասարն, պահանջէին զհարկն, այսինքն զխարաճն, իսկ նա զի ոչ ունէր զինչս որ տայր նոցա, վասն որոյ կալեալ եդին (հարկահանները – Ա.Խ.) ի կոճեղս եւ շատ ողոքելով եւ բռնադատելով պատրեցին զմանուկն Բաղդասար եւ ոչ կամաց թլպատեալ անուանեցին Դաւուդ»[3]:

Ըստ շարադրանքի, Բաղդասարը հետագայում հրաժարվում է իրեն պարտադրված կրոնից և նահատակվում Էրզրումում (1672, 4 հունիսի)[4]:

Արտադրամասերում մահմեդական արհեստավորների ծառայական վերելքը ապահովվում էր նույն այդ կրոնական խտրականության ուժով: Նաև այն հանգամանքով, որ տիտղոսավոր կրոնի առավելություններից ելնելով, նրանք ավելի հուսալիորեն կարող էին պաշտպանել արհեստավորների տվյալ խմբի շահերը՝ ընդդեմ համքարությունից դուրս կամ զուգահեռ գործող համքարության հետ հնարավոր մրցակցական պայքարում: Ուշագրավ տեղեկություններ է պարունակում, այս իմաստով, Հ. Բարթիկյանի՝ հունարենից թարգմանաբար հրապարակած մի վավերագիրը՝ Կանդիայի ոսկերիչների կողմից համքարի պետ ընտրելու մասին: Ընտրության արդյունքները, ըստ 1696 թ. օգոստո-

---

[3] Հայոց նոր վկաները, կազմ.՝ **Մանանդյան Հ., Աճառյան Հ.**, Վաղարշապատ, 1902, էջ 152:

[4] Նույն տեղում: Հետաքրքիր է այս տեսակետից հոլանդացի նկարիչ Յան Լոյկենի (1649–1712) «Հավատի նահատակները» նկարաշարի մի կտավը, որտեղ պատկերված է հայ պատանու մաշկազերծումը քաղաքային հրապարակում՝ հավաքված բազմության առջև: Որքան էլ սյուրռեալիստական և զգայացունց, այդ կտավի համար իրական հիմք կարող էր ծառայել նաև 1710 թ. Կ. Պոլսում նահատակված Աստվածատուր Սեբաստացին. նա Ղալաթիայում շրջել էր այնպիսի հագուստով, որը վերապահված էր միայն մահմեդականներին, ուստի և պետք է հատուցեր կրոնափոխությամբ (Յովհաննէս Սեբաստացի, Պատմութիւն Սեբաստիոյ, աշխատասիրությամբ Բ.Լ. Զուգասզյանի, Ե., 1974, էջ 78–79):

սի 28 թվակիր այդ փաստաթղթի, ներկայացվել է թուրքական հոգևոր ատյան, որտեղ ասված է. «Կանդիայի ոսկերիչների համքարությունից Մուստաֆան, Իբրահիմը, Բաբա ուստան, ուստա Յորգին, Իլիան, Յակոն, Արսենը, Ջանին, Ջորջին, Սերգիսը, Կարապետը, Անտոնը, Մարդոշեն և մնացածները, ներկայանալով Հոգևոր ատյան, հաղորդում են, որ Կոյումջի բաշի (ոսկերչապետ – Ա.Խ.) են նշանակում ուստա Քյամիլին, որպեսզի նա հսկի, պատժի և Հոգևոր ատյան հայց ներկայացնի ոսկերիչներից նրանց դեմ, որոնք խարդախում են ոսկին, ինչպես և արծաթը, պատրաստում են կեղծ.ու քաշը պակաս զարդեր»[5]:

Այս վավերագրից կարելի է մակաբերել, նախ, որ էսնաֆը Օսմանյան Թուրքիայում օժտված էր ներքին կարգավորման արտոնությամբ՝ ընտրության իրավունքով, այդ թվում և իր գլխավորի ընտրության իրավունքով: Դատելով այն անուններից, որոնք շրջանառվում են՝ վավերագրում, Կանդիայի ոսկերիչների այդ էսնաֆը եղել է խառն բնույթի կրոնաէթնիկական միավորում՝ բաղկացած հույն, հայ և մահմեդական վարպետներից (ուստաներից): Այնուհետև, այս միավորումը մտել է ֆութուվվայի կազմակերպական կառույցի մեջ, որչափով կույումջիբաշիի ընտրության մասին հաշվետվությունը ներկայացվել է Հոգևոր ատյանին, որն այս դեպքում հանդես է եկել որպես ղեկավար մարմին[6]: Հոգևոր ատյանի գլուխ կանգնած էր մահմեդական շեյխը:

Մտնելով էսնաֆական կազմակերպությունների մեջ, հայ արհեստավորները Էգեյանի գաղթավայրերում նույնպես պահպանում էին իրենց ազգային, կրոնաբարոյական բարքերն ու

---

[5] Բարթիկյան Հ., Նյութեր գաղութահայ պատմության, II, «Լրաբեր» հաս. գիտ., 1987, N 10, էջ 86:

[6] Տե՛ս Անասյան Յ., նշվ. աշխ., էջ 232:

ավանդույթները, առաջնորդվում դրանցով, ինչպես և մահմեդական արհեստավորներն էին առաջնորդվում ֆութթուվայով՝ իրենց վարքագծի կրոնաբարոյական նորմերով: Սուֆի դերվիշների բարոյական պատկերացումների այդ էթիկան կարգավորում էր մահմեդական արհեստավորական խմբերի ներսում փոխադարձ հարաբերությունները և հանդես էր գալիս որպես արհեստավորության կենսագործունեությունն ապահովող գործոն՝ այդ միջավայրում, որտեղ և XIII–XIV դդ. տիրապետող դարձավ ահիիզմը՝ բարոյական կացութաձևն ու կանոնները վերահսկող ահիի՝ ընտրվի արհեստավոր ավագի գլխավորությամբ[7]:

Հայ արհեստավորությունն առաջնորդվում էր իր սեփական՝ քրիստոնեական բարոյականության ավանդութային կարգուկանոնով և վարքագծի սահմաններում, որոնք կողք-կողքի գոյատևելու իրավունք ունեին մահմեդական ֆութուվվայի հարևանությամբ: Նրանք գործում էին ամենից առաջ՝ իրենց համայնքի սահմաններում, իրենց համայնքը սպասարկելուն ուղղված արտադրական գործունեությամբ, այդ համայնքի կրոնաբարոյական սկզբունքներին համապատասխան (հոգատարություն միմյանց՝ արհեստավորների նկատմամբ, եկեղեցիների, դպրոցների շինությանը կամ նորոգմանը նյութապես նպաստելը, հանգանակությունների մասնակցելը, մատյանների գրչագրմանն աջակցելը և այլն):

Հայ արհեստավորները գործում էին Էգեյանի բոլոր գաղթավայրերում: Նրանք հիշվում են ձեռագիր վավերագրերում, ճանապարհորդների նոթերում, դամբանագրերում, հայերեն և օտարալեզու բազմաթիվ արխիվներում և այլն: Այդընի գերեզ-

[7] **Inalcik H.**, The Ottoman Empire. The Classical Age, 1300–1600. Praeger Publishers, New York-Washington, 1973, pp. 151–152.

մանատանը հայտնաբերված ամենահին շիրմաքարը պատկանում է արհեստավոր-քուղագործի՝ «Կեսարացի խայդանագործ Գէորգն որ ննջեց ի Տէր թուին 1561»[8]: Կեսարիայից, ուրեմն, Զմյուռնիա են անցել ոչ միայն վաճառականներ, այլև արհեստավորներ, ընդ որում, XVI դ. կեսին և դրանից էլ առաջ, ինչը կարող է հուշարկել Գեորգի մահվան թվականը: Ի դեպ, խայդանագործը նույնն է, ինչ շերիթճին (քուղ, ժապավեն պատրաստող վարպետ), վաղուց ի վեր ծանոթ զմյուռնահայերին. 1816 թ. զմյուռնացի նվիրատուների մի ցանկում ի թիվս այլ արհեստավորների, նշված է նաև շերիթճի[9]:

Զմյուռնիայում հանդիպում ենք արհեստավորների միավորման ոչ ֆութուվվայական, այլ լոնջայական, հիմնականում պետական, աշխարհիկ բնույթի ղեկավարությամբ գործող էսնաֆությունների: Գործում էին հացագործների, երկաթագործների, կաշեգործների, կտավագործների, կոշկակարների և այլ միավորումներ: Յուրաքանչյուր էսնաֆի վերաբերող գործերը՝ արտադրանքի տեսակների, որակի, գների, դրանց իրացման կարգուկանոնի և այլնի հետ կապվող խնդիրները քննարկվում և որոշումները կայացվում էին էսնաֆի մեծ ժողովում (մեջլիս-ի քեբիր): Այստեղ նույնպես հանդիպում ենք արտադրական միավորին՝ արտադրամասի եռաստիճան սանդղակին՝ աշկերտ (չրագ), ենթավարպետ (իգիթբաշի, խալֆա) և վարպետ (ուստա): Աշկերտից ենթավարպետ և այս վերջինից վարպետ անցումը կատարվում էր հատուկ ծիսակատարությունների ուղեկցությամբ:

Զմյուռնիայի տերունի թեմին ուղղած կոնդակներում Էջմիածնի կաթողիկոսների կողմից միշտ հիշատակվում են, ի

---

[8] Քօսեան Յ., Հայք ի Զմիտնիա եւ շրջակայս, հ. Բ, Վիեննա, 1899, էջ 25:

[9] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 29, վավ. 160, թ. 2:

թիվս բնակչության այլ շերտերի, «վայելչագործ արհեստավորները», «գեղեցկանկար արհեստավորները» և այլն: Զմյուռնիայում և Էգեյանի մի քանի քաղաքներում (Մանիսա, Այդընը, Էդրեմիշ և այլն) հայ արհեստավորները կազմել են իրենց համայնքների բնակչության մի զգալի մասը, սակայն զուտ գյուղատնտեսական շրջանների ոչ մեծ համայնքներում, կարելի է կարծել՝ բնակչության համեմատաբար փոքրաթիվ մասը կամ համատեղել հողագործությունն ու արհեստագործությունը:

Զմյուռնիայում և Էգեյանի մյուս գաղթավայրերում հաստատված արհեստավորների վերաբերյալ քիչ տեղեկություններ են պահպանվել, ամենից առաջ՝ արհեստների և դրանցով զբաղվող մարդկանց անունների հիշատակումը: Դրանք միայն ընդհանուր գծերով կարող են պատկերացումներ տալ նրանց տնտեսական գործունեության, արհեստագործական արդյունքների իրացման պայմանների ու ձևերի վերաբերյալ: XVII դ. և դեռ դրանից էլ շատ առաջ, պետք է կարծել, Էգեյանի շրջանում ևս հայերը պահպանել էին արհեստագործական արտադրության կազմակերպման նույն ձևերը, ինչ հայրենիքում, անշուշտ, արտադրամասից դուրս՝ մահմեդական միջավայրում, արդեն բոլորովին այլ պայմաններում: Զմյուռնիայում հայ արհեստավորներն ընդգրկվել էին էսնաֆական կազմակերպությունների մեջ, թեև չի բացառվում, որ, ինչպես Բալկաններում, գործեին այնպիսի արհեստավորներ, որոնք չէին մտնում կորպորատիվ կազմակերպությունների մեջ[10]: Ոչ մեծ այնպիսի համայնքներում, ինչպես, օրինակ, Նազիլիում, Մենեմենում, Քուշադայում և այլուր, արհեստավորների փոքրաթիվությունը պայմանավորված հայ

---

[10] Тодоров Н., Балканский город XV–XVI веков, М., 1976, с. 112.

բնակչության սակավամարդությամբ, սահմանափակում էր այդպիսի կազմակերպության մեջ մտնելու հարկն ու հնարավորությունը: Ի հակադրություն դրա, մարդաշատ էին Էյդեմիշի, Այդընի և Մանիսայի հայ արհեստավորները: Էյդեմիշում իրենց բարձրորակ արտադրանքի շնորհիվ ճանաչված էին հատկապես հայ մետաքսագործները: Մետաքսի հումքը, որով առատորեն լցված էր Էգեյանի ամբողջ առափնյակը՝ մետաքսի ավանդական առևտրական ճանապարհի շնորհիվ, բավական հնարավորություններ էր ընձեռում մետաքսագործության եկամտաբերությանը: Էոդեմիշում հայ արհեստավորները արտադրության մեջ էին ներգրավել նաև կանանց աշխատուժը. տներում հաստատված դազգահներով կանայք պատրաստում էին մետաքսի թաշկինակներ, գլխանոցներ, հագուստի տարրեր: Նույն իրողությունն ենք տեսնում նաև Մանիսայում, որտեղ «գաղթականութեան առաջին օրէն սկսեալ Վերի թաղեցիները ոստայնանկ եղած են ամենքն ալ եւ են տակաւին»[11]: Մանիսայում տարածված արհեստների բազմազանությունը բացատրվում է առհասարակ XIII–XIV դդ. ի վեր այդ քաղաքում իտալական առևտրական համայնքի առկայությամբ, իսկ հետագայում Մանիսայի՝ օսմանյան գահաժառանգների նստավայր դառնալու իրողությամբ, որ մի հայտնի չափով աշխուժացնում էր քաղաքային բնակչության առևտրատնտեսական կյանքը՝ խթանելով արհեստագործության զարգացումը:

Էգեյանի շրջանի քաղաքների մեջ արհեստագործության առավել խոշոր կենտրոնը մնում էր Զմյուռնիան: Արհեստավորներն այստեղ, ինչպես ամենուրեք հայկական գաղթավայրերում,

---

[11] Շահինեան Գ., Մանիսայի հայ գաղութին ծննդավայրը, «Բյուրակն», 1889, թիւ 31–32, էջ 503:

առաջ են մղել մշակույթի զարգացումը, հասարակական այդ միջին խավը, առևտրականության հետ միասին իր կենսունակությունը հաստատում էր նաև ազգային մշակույթը հովանավորելու և հարստացնելու հաճախադեպ իրողություններով: 1713 թ. Զմյուռնիայում գրչագրվել է Կիպրիանու գիրքը (աղոթքներ, վարքագրություն, բժշկական բնույթի նյութեր և այլն) «ի վայելումն ղավվսճի (կոշկակար – Ա.Խ.) Աւագի որդի Աւետիքին»[12]: Մի բառգրքի գրիչն է եղել «իզմիրցի տողրամաճիի (հյուսն – Ա.Խ.) որդի Ադամը՝ թուին ՌՃՀԵ (1726)»[13]: Այս արհեստավորներն էին, որ նյութական արժեքներով էին հագեցնում ազգային հաստատությունները, մատակարարում դրանք, նվիրատվություններ անում հիվանդանոցներին, եկեղեցուն ու վարժարանին, տնանկներին և այլն: Ուշագրավ է, որ Էջմիածնի Մայր աթոռին վակֆային նվիրատվություններ են արել գերազանցապես արհեստավորական խավերի մարդիկ: Զմյուռնիայում Էջմիածնին վակֆ արած սեփականությունների մեջ XIX դ. առաջին կեսին հայտնի էին պասմաճի (չթագործ) Վարդանի պարտեզը, պերպեր (վարսավիր) Հակոբի, պերպեր Աստվածատուրի, դերձակ Աբիքի, սահաթճի (ժամագործ) Սարգսի, տողրամաճի Ավետիսի և այլոց տները, պարտեզները, ագարակները և այլն[14]: Նվիրատուների այս ցանկի մեկ այլ տարբերակ հնարավորություն է տալիս մի որոշ չափով գաղափար կազմել Էգեյանի այս տարածքների հայկական համայնքներում տարածված արհեստների մասին, որչա-

---

[12] Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի Մատենադարանին, հ. Բ, Անտօնեան հաւաքածոյ, կազմ.՝ **Ն. Ակինեան, Հ. Ոսկեան**, Վիեննա, 1971, էջ 190:

[13] Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային Մատենադարանի հայոց, կազմ.՝ **Բ. Կիպէէսէրեան**, Անթիլիաս, 1961, էջ 603:

[14] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 248, վավ. 1090:

փով Նվիրատուները ներկայացնում էին առհասարակ Զմյուռնիայի տերունի թեմի ժողովրդին: Այստեղ շրջանառում են ամենատարբեր բնույթի արհեստների մարդիկ՝ չիլինկիր (դարբին) մահտեսի Թագվորը, պերպեր Ծատուրը, տողրամաճի Խաչիկը, հալաջի Հովհաննեսը, յորղանճի (վերմակագործ) Հարոնը, պիլեզիկճի (ապարանջան պատրաստող) մահտեսի Հարությունը և ուրիշներ[15]: Արհեստների այս բազմազանությունը նկատի ունենալով՝ դժվար է համաձայնել այն կարծիքին, թե արհեստները «այնչափ ընդհանուր չեն տարածուած հայոց (զմյուռնաբնակ – Ա.Խ.) մեջ, կը գտնուին աննշան թուով ժամագործ, ոսկերիչ, դարբին, վերմակագործ, դերձակ, կոշկակար, ատաղձագործ եւն»[16]:

Կաթոլիկ հայերը, որոնք հիմնականում գաղթել էին Նախիջևանից և հետագայում Էնկյուրիից, զբաղվում էին տարազագործությամբ, ոսկերչությամբ, երկաթագործությամբ և այլն: Վերջինս, ի դեպ, բավական տարածված էր Զմյուռնիայի և կից բնակավայրերի ու քաղաքների արհեստների ասպարեզում, այդ թվում և հայկական համայնքներում, որովհետև տեղական հումքը լիովի ընձեռում էր դրա հնարավորությունը: XIII դ. արդեն հայտնի էին երկաթահանքերը՝ Սիպիլ լեռան փեշերին, Մագնեզիայի (Մանիսա) մոտ[17]: Զմյուռնիայում հնագույն արհեստներից էր գորգագործությունը, որով զբաղվում էին կայսրության տարբեր ազգերի հպատակներ: 1740-ական թթ. Կ.Պոլսում ռուսական ռեզիդենտ Ա. Նեպլյուևը գրում էր, որ այստեղ հյուսվում են

---

[15] Նույն տեղում, թղթ. 100, վավ. 159/II:

[16] Քոսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 288:

[17] Жуков К.А., Эгейские эмираты, в XIV–XV вв., М., 1988, с. 144.

ուղտի բրդից գորգեր, որոնք բարձր են գնահատվում[18]: Ներկարարարությունը ևս բավական լայն ասպարեզ ուներ բամբակագործական ապրանքների և կտավագործության հետ կապված արհեստների խմբում, կաշվի, մետաքսի և բրդեղենի ու դրանցից պատրաստվածն ապրանքատեսակների տնայնագործական արտադրության մեջ: Տարբեր որակների ու արդյունավետության ներկանյութերն այստեղ ստացվում էին բուսական նյութերից, ինչպես և հանքային ծագում ունեցող պաշարներից[19]: Քաղաքաբնակ արհեստավորները զբաղվում էին նաև հողագործությամբ՝ ձեռք բերելով որոշակի չափի հողամասեր (լրիվ չիֆթ կամ ավելի փոքր չափերի): Սուլթան Սելիմի օրենսգիրքը ուշագրավ մեկնաբանություններ է հուշարկում այս հարցի վերաբերյալ: «Քաղաքի բնակիչները,- ասված է օրենքներից մեկում,- քաղաքի սահմաններում կարող են չիֆթլիք ունենալ: Նրանք թող հարկ վճարեն ըստ այն բանի, թե ինչքան հող ունեն լրիվ չիֆթի կամ կես չիֆթի համեմատ: Նրանց ասածը, թե «մենք քաղաքացիներ ենք և չիֆթ ռեսմի չենք վճարում», նշանակություն չունի: Նշանակությունը տրվում է հողին»[20]:

Հիրավի, արհեստավորները դեռևս մինչև Սելիմի ժամանակները կարող էին տրտնջալ և անգամ փորձել՝ հրաժարվելու գյուղատնտեսական բնույթի հարկեր վճարելուց, որովհետև արդեն իսկ վճարում էին իրենց՝ արհեստավորական արտադրանքի համապատասխան հարկերը: Բայց, ինչպես կարելի է կարծել, նրանք բեյությունների, իսկ դրանից առաջ՝ սելջուկների ժամա-

---

[18] Данциг Б., Русские путешественники на Ближнем Востоке, М., Мысль, 1965, с. 79.

[19] Жуков К.А., նշվ. աշխ., էջ 113–114:

[20] Книга законов султана Селима, М., 1969, с. 144.

նակ (XI–XIV դդ.) հողի համար սահմանված հարկեր չեն վճարել, որ արդեն պարտադիր էր դարձել XV դարում: Իրազեկ ուսումնասիրողն այս առթիվ գրում է, որ Արևմտյան Անատոլիայում արհեստավորներն ազատ էին ռայա քրիստոնյաների վճարած ռեսմ-ի չիֆթ հարկից (22 աքչեի չափով), բայց Մեհմեդ II-ի ժամանակ նրանք արդեն վճարել են այդ, ինչպես և մյուս հողահարկերը, ինչպես և մյուս ռայաները[21]: Զքավոր կամ ոչ հարուստ արհեստավորները, բնականաբար, չէին կարող կրկնակի հարկ վճարել և զբաղվել նաև հողագործությամբ, ուստի կարելի է եզրակացնել, որ օսմանյան հարկային համակարգն իր ծանրությամբ և պարտադրիչ բնույթով արագացնում էր հողի սեփականատիրական հարաբերությունների փոփոխությունները օսմանյան հասարակության մեջ՝ հիմքում ունենալով, սակայն, թիմարի տրոհման դեմն առնելու և այդ կանխելու իրավական ուղղվածությունը:

Արհեստավորները ևս վճարում էին իրենց արտադրական գործունեությանը համապատասխան հարկեր: Սուլեյման Քանունիի ժամանակ ևս հարկի չափերն ամրագրվել են իրավականորեն, որ մտել է ջիզյեի (խարաջ) ընդհանուր գումարի մեջ՝ հարուստներից՝ 4 ոսկի, էսնաֆից՝ 2, չքավորներից՝ 1[22]: Արհեստավորների վճարած հարկերից էին՝ **խարաջը**, որ տեսանք Զմյուռնիայում նահատակված Բաղդասարի օրինակով, **իհթիսաբ** ռեսմի հարկը[23], որ հավաքվում էր շուկայում՝ արտադրանքն իրացնելու դիմաց, իսկ մնացյալ դեպքերում այլ հարկեր՝ սահ-

---

[21] Жуков К.А., նշվ. աշխ., էջ 121:

[22] Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, էջ 636–637:

[23] Shaw S., History of the Ottoman Empire and Modern Turkey. Vol. 1, Cambridge, 1976, p. 120.

մանված շերիով և աշխարհիկ օրենսդրությամբ: Շուկայում արհեստավորական և գյուղատնտեսական ապրանքների գները և որակը պետությունը կարգավորում էր մուհթեսիբների միջոցով, որոնց գործունեությունը վերահսկում էր կադին (դատավորը): Ղ. Ինճիճյանի ժամանակ (XVIII դ. երկրորդ կես – XIX դ. առաջին տասնամյակներ) կադին այդ գործը կատարում էր իր երկու նայիբների (որոնք նույնն են, ինչ մուհթեսիբը) միջոցով[24]:

XVIII դ. վերջերին Օսմանյան Թուրքիայում նկատելի է դառնում տնայնագործական արտադրության դանդաղ, բայց զգալի զարգացումը, երբ արտադրության ասպարեզում հայտնվում են իրենց աշխատողներով ու արդյունքներով ծավալուն արհեստանոցներ, որոնք վկայում էին ապրանքային արտադրության թեկուզ և թույլ, բայց և որոշակի զարգացման իրողության մասին[25]: Այս՝ որակական փոփոխությունների նախաշեմին Զմյուռնիան ևս իր մասնակցությունը բերեց բամբակի և բրդի գործվածքների արտադրության աշխուժացմանը: Մետաքսի, կերպասի և չթի արտադրության ոլորտում հայտնվեցին նաև հայ արհեստավորները՝ հենվելով տեղական հումքի ընձեռած կարելիությունների վրա: Էգեյանի շրջանի հայկական համայնքների արհեստագոր-

---

[24] **Ինճիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ե, Վենետիկ, 1804, էջ 93:

[25] Հակառակ այս ակնհայտ փաստին, Մ. Մեյերը, ելնելով մարքսիստական ընդհանուր դրույթից, կարծում է, որ ապրանքային արտադրության ընդլայնման, գույքային անհավասարության խորացման համեմատ էսնաֆը վերածվում է ապրանքային արտադրությունը արգելակող ուժի (տե՛ս Проблемы генезиса капитализма, М., 1978, с. 261): Տեղական արտադրությունը կաշկանդող իրենց ողջ բնութագրով հանդերձ՝ արհեստավորական միավորումներն Օսմանյան Թուրքիայում մնում էին տնտեսական այն միակ և կենսունակ գործոնը, որ առհասարակ կարող էր խթանել ընդլայնված վերարտադրությունը:

ության մեջ այս տասնամյակներին առաջնակարգ նշանակություն է ստանում մետաքսի և բրդյա նուրբ գործվածքեղենի արտադրությունը՝ ավանդական ոստայնանկության հիման վրա: Այս արհեստի տարածման և հայ համայնքների սոցիալական առօրյայում դրա ձեռք բերած հեղինակության մասին է վկայում զմյուռնահայերին ուղղված՝ Սիմեոն կաթողիկոսի կոնդակը (1764, 10 մարտի), որտեղ մաղթանքներ են հղվում «գեղեցկանկար արհեստատրաց»[26]:

Անտարակույս, Սիմեոնը նկատի ուներ ծաղկանկար նուրբ գործվածքներով թաշկինակների ու գլխանոցների արտադրության մեջ ներգրավված արհեստավորներին, որոնց արտադրած արդյունքները լայն պահանջարկ ունեին Զմյուռնիայում և Էգեյանի առափնյակում: Կաթողիկոսը կարող էր նկատի ունենալ Եղվարդ գյուղից 1845 թ. կողմերը Զմյուռնիա գաղթած Հովհաննեսին և նրա որդուն՝ Կարապետին, որոնք «Իզմիրի գետեզերքի հողերու վրայ գլխի յազմա տպելու և ներկելու գործարան մը հիմնած էին, որ մինչև 1810 թուականին շարունակուեցաւ»[27]:

Դրանից հետո էլ, սակայն, տասնամյակներ անց Եղիվարդյանների արհեստանոցը շարունակել է գործել, ինչը վկայում է Ղ. Ալիշանը՝ գրելով, որ Զմյուռնիայում «նշանաւոր են գործարանսն ծաղկենկար կտաւոց եւ ի թղթարանն՝ ѣհաստատեայ ձեռն ճարտարաց հայոց»[28]: Վերջին դեպքում խոսքը վերաբերում է 1840-ական թթ. Հակոբ Տյուզյանի հիմնած թղթի գործարանին[29]:

---

[26] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 243, վավ. 22:

[27] Մատենադարան, ձեռ. N 10272:

[28] **Ալիշան Ղ.**, Քաղաքական աշխարհագրութիւն, էջ 345:

[29] Արշալոյս արարատեան, 1847, թիւ 285: Տե՛ս նաև՝ **Մենեվիշեան Գ.**, Ազգաբանութիւն ազնուական զարմին Տիւզեանց, Վիեննա, 1890, էջ 37: Զմյուռնիայի թղթի գործարանը թանզիմաթից քիչ առաջ և անմիջապես հետո գոր-

Նրբահյուս գործվածքների զմյուռնացի վարպետները, ինչպես երևում է, բավականաչափ անդուր մրցակիցներ դարձան պոլսահայ իրենց արհեստակիցների համար: Հավանաբար, հենց այս՝ Եղիվարդյանի գործարանն էր, որ պայքարի թիրախի դարձրին պոլսեցի ջուլհակները: Վերջիններս գործեցին անվրեպ՝ օսմանյան իշխանությունների միջոցով հասնելով նրան, որ առհասարակ արգելել տվեցին նուրբ գործվածքների արտադրությունը Զմյուռնիայում:

Բնականաբար, իր տերունի թեմին շտապեց օգնության հասնել Էջմիածինը. Կ. Պոլսի ջուլհակների գլխավորներին՝ Մեյրամղուլին, Կ. Տրճանենցին, տիրացու Գեորգին (Էսնաֆի գանձապետը) և Կ. Նուրյանին ուղղած իր գրության մեջ (1784, 15 մայիսի) Ղուկաս կաթողիկոսը հորդորում էր խաղաղությամբ հարթել խնդիրը՝ «զի Զմիւռնիոյ դիւլպէնդճոց գործն մի խափանեսցեն, այլ հրաման առցեն յարքունուստ դարձեալ ի գործ արկանել ... զարհեստն իւրեանց եւ կենցաղավարիլ»[30]:

Կաթողիկոսը հիշեցնում էր պոլսեցիներին, որ հաշվի առնեն նաև Մայր աթոռի շահերը. Զմյուռնիան տերունի թեմ էր և նրա արհեստավորների տնտեսական քայքայումը կվնասեր նաև Էջմիածնին:

Իրավական տեսակետից, ի դեպ, ուշագրավ է պոլսահայ արհեստավորների մեղադրանքն ընդդեմ զմյուռնացիների, որ պարզվում է կաթողիկոսի հիշյալ գրությունից. «Քանզի եւ զարգիլման յաւէտ քան զկար իւրեանց ի վեր բեռնադրեալ ապրանօք

ծարկված թեթև արդյունաբերական ձեռնարկություններից էր, որ լրացնում էր Կ. Պոլսում շարք մտած ֆեսի գործարանի, Պելքոզի զինվորական հանդերձանքի ֆաբրիկայի, Պեյքոզ-Ինջեքյոյի հախճապակու գործարանի և այլնի շարքը (Ortayli L., Imparatorlugun en Uzun Yuzyili, Istanbul, 2005, s. 199).

[30] Մատենադարան, ձեռ. 2803, թ. 429:

ձեռնարկին տանել զապրանսն յիզմեայ եւ ի ուզունճայ (բատիստե գործվածքի տեսակներ – Ա.Խ.) եւ այնու որպէս թէ վնասատու եղեն առից եւ տրից պոլսեցի մերազուն դոլբէնտճի եղբարց, ուստի եւ նոքա առ ի զդէմ ունել անդր (Կ. Պոլիս – Ա.Խ.) գնացողաց, փոխանակ ի մասնաւոր վրիժառութեան՝ առհասարակ զմեզ արգելեն ի գործոյ, համանգամայն զտպարանս (արհեստանոցը – Ա.Խ.) խափան տալով»[31]:

Ուրեմն, զմյուռնացի արհեստավորների բարձրորակ արտադրանքը պահանջարկ է ունեցել այդ քաղաքի շրջակայքից դուրս, անգամ հեռավոր Կ. Պոլսի շուկայում, և պոլսահայ արհեստավորները նրանց դեմն առնելու համար այլ միջոց չեն ունեցել, քան բողոքելը և վարչական միջամտության դիմելը: Այնուհետև, նույնպես հետաքրքրություն է հարուցում էսնաֆի գործունեության՝ արտադրանքի իրացման սահմանների հարցը. կնշանակի, Զմյուռնիայի շուկան ևս իշխանությունների կողմից ճանաչված է եղել որպես պոլսեցի մետաքսագործների մենաշնորհային տարածք, որտեղ ոտիշներն իրավունք չունեին այդ արհեստագործական ապրանքատեսակներն արտադրելու և իրացնելու: Զմյուռնացի արհեստավորները խախտել են այդ մենաշնորհը և պատժվել՝ կանգնելով արհեստանոցի փակման փաստի առջև:

Հայտնի չէ, թե ինչով ավարտվեց զմյուռնացի և պոլսեցի այս արհեստակիցների ընդհարումը: Կարող ենք ասել միայն, որ զմյուռնացիների նշված կախվածությանը վերջ տրվեց 1790 թ., երբ օսմանյան իշխանությունները կերպասի արտադրության արտոնագիր տրամադրեցին զմյուռնացի մի հայի: Արհեստանոցը գործելու էր վակֆային սեփականատիրական հիմունքներով՝

---

[31] Նույն տեղում:

այն տարեկան հարկ էր վճարելու Կ. Պոլսի բարեգործական հաստատություններից մեկին: Ղուկաս կաթողիկոսն այս ձեռնարկի առթիվ շնորհավորում էր հիմնադիրներին՝ տամղաճի (դրոշմադիր) Ստ. Խաչատրյանին և քեղխուդա (վակֆի վերակացու) Հ. Դովլաթյանին, որոնք հիմնել էին այդ արհեստանոցը[32]:

Ա. Այվազյանը գրում է, որ այդ չթագործական արհեստանոցը հիմնել էր Տամկաճյան ընտանիքի անդամներից մեկը. «Սոյն հարազատներէն (Տամկաճյան – Ա.Խ.) մեկը մայրաքաղաքս գալով, 1790-ին ... սուլթան Սելիմի խնդիր կը մատուցանէ եւ կը յաջողի առանձնաշնորհութեան հրովարտակ ստանալ՝ Զմիտնիոյ մէջ տպածոյի գործարան մը (պասմահանէ) հաստատելու՝ հատուկ վակֆնամէով մը»[33]:

Չթագործարանը բացվել էր արքունի ֆերմանով, որի շնորհիվ զմյուռնահայ արհեստավորները դադարում էին կախում ունենալուց Կ. Պոլսի իրենց արհեստակիցներից, որովհետև պետական ձեռնարկությունը նրանց համար ընդհանրապես ապահովում էր արտադրանքի սպառումը կայսրության սահմաններում՝ ազատելով շուկայական իրացման հետ կապված դժվարություններից: Զմյուռնացի ձեռնարկուներին ուղղված՝ Ղուկաս

---

[32] Դիւան հայոց պատմութեան, գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ 573:

[33] **Այվազեան Ա.**, Յոնիական հայ գաղութի նահապետներէն, «Արեւելք», 3 սեպտեմբերի 1900: Տամկաճյան ընտանիքից էր, ի դեպ, ականավոր հրապարակախոս Ստեփան Ոսկանյանի հայրը (նույն տեղում): Նույն հոդվածում այս հեղինակը նշում է. «Տամկաճեան գերդաստանի անդամներէն չորս եղբայրներ, չորսն ալ յազվայի եւ ծաղկենկար վարշամակներու գործով ընկերովի կը զբաղին եղեր ի Զմիտին, ԺԸ դարու վերջին քառորդին մէջ»: Այստեղ նկատենք, որ ժամանակին յազվաճի (գործվածքին նախշ դրոշմող) գործավոր էր եղել XIX դ. առաջին քառորդին հարստացած և զմյուռնահայության լուսավորության մեկենաս դարձած Հակոբ Սարգսյանը. որն այդ արհեստը կատարելագործելով՝ լուրջ հաջողությունների էր հասել Եվրոպայում՝ Վիեննայում (նույն տեղում, 8 սեպտեմբերի 1900):

կաթողիկոսի օրհնության գիրը (1792 թ. հունիսի 15) բավականաչափ լույս է սփռում այդ իրողության վրա, որտեղ նա նշում է, որ օսմանյան իշխանությունը «իւրովք արքունական ազդողագոյն հրովարտակօք հրամայեալ է կառուցանել ի քաղաքոջդ ընդարձակ տպարան եւ ձեզ՝ անվեհեր համարձակութեամբ գործել ի նմա արուեստ ձեր՝ եւ թէ որպէս ինքեանք՝ պարոն տիրացու Ստեփաննոսն եւ խոջայ Յովհաննէսն կացուցեալք են լինիլ ի վերայ տպարանին... եւ թէ զիարդ յաջողմամբ Տեառն գլխատրեցեալ է մեծակառոյց եւ գեղեցկաշէն գործարանդ անկասկած յումեքէ արհեստագործէք առատ շահեկանութեամբ»[34]:

Այդ արհեստանոցում արտադրվում էին թաշկինակներ, երեսկալներ, հագուստի բաղադրիչներ և այլն: Այն հաջողությամբ գործեց շուրջ քառորդ դար՝ մինչև 1817 թ. ամռանը բռնկված հրդեհը, երբ այրվեցին բազմաթիվ տներ, «200-ի չափ աւելի պակաս ի տանց հայոց, հին եւ նոր պասմախանայից ի յաճիւն դարձեալ», ինչպես հայտնում էր Զմյուռնիայի առաջնորդ Փիլիպոսը Ներսես Աշտարակեցուն[35]: Թվում է, թե տերերը դրանից հետո կարողացել էին նորոգել արհեստանոցը և վերսկսել իրենց արտադրությունը, համենայն դեպս, մինչև XIX դ. երկրորդ կեսը, երբ այն քանդվեց՝ կապված Զմյուռնիա-Քասաբա երկաթուղային կայարանի կառուցման հետ[36]: Համենայն դեպս, այս արհեստանոցը գործեց շուրջ 60-ամյա մի ժամանակաշրջանի տևականությամբ, որ քիչ է հանդիպում օսմանյան ժամանակակից մանուֆակտուրաների պատմության մեջ: Մանածագոր-

---

[34] Դիւան հայոց պատմութեան, գիրք Դ, էջ 573:

[35] Մատենադարան, արխիվ Ա. Երիցյանի, թղթ. 159, վավ. 170:

[36] Քօսեան Յ., նշվ. աշխ., հ. Ա, Վիեննա, 1899, էջ 35, Պոյաճեան Գ., Եգեպանի դիցուհին՝ Զմիւռնիան եւ զմիւռնահայ գաղութը, «Յառաջ», 1972, 1 հոկտեմբերի:

ծական ձեռնարկությունները, որոնք հիմնվել էին XVIII դ. Կ. Պոլսում, Սալոնիկում, Ադրիանուպոլսում, ինչպես և Յալովայի թղթի գործարանը, երկար ժամանակ չեն գործել և փակվել են կարճատև գործունեությունից հետո: Օտարերկրյա անհամեմատ ուժեղ մրցակցությունը և օսմանյան վերնախավի ու արքունիքի՝ հիմնական սպառողի քմահաճույքները անհաստատ էին դարձնում այս ձեռնարկությունների գոյության երաշխիքները[37]:

XVIII դ. Էգեյանի ծովամերձ շրջաններում օսմանյան տնտեսության աշխուժացման դրսևորումներ, այսուհանդերձ աչքի էին զարնում: Բավական ծավալների էր հասնում բամբակագործական արտադրանքը: Փոքրասիական կտրվածքով՝ Թիրեում, Բերգամայում, Դենիզլիում հայ արհեստավորները ներգրավվել էին բամբակագործական մանուֆակտուրային արտադրության մեջ, ինչը տեսանք Զմյուռնիայի օրինակով: Այս քաղաքում վարպետ արհեստավորների մի մասը մասնագիտացել էր բամբակի հումքը և գործվածքեղենը ներկելու արհեստի մեջ: XIX դ. բամբակն այստեղ եփվում էր ալկալիական թույլ լուծույթի, ապա ծիթայուղի մեջ, իսկ մաքրվելուց հետո ստանում էր ապրանքային հրապուրիչ գույն[38], որ, ի դեպ, հատուկ էր տեղական բարձրորակ արտադրանքին: XVII դ. երկրորդ կեսին Զմյուռնիայի բեզեստենի ընդարձակումը վկայում է այն մասին, որ տեղական արհեստները այս ժամանակաշրջանում զգալի առաջշարժում էին ապրել: Ի դեպ, այդ համընկնում է ժամանակային այն փուլին, երբ Էգեյանի մերձափնյա տարածքներում ավելի քան երբևէ, բնակություն էին հաստատում հայ գաղթականները: Հայ

---

[37] Мейер М.С., К характеристике экономической жизни городов Османской империи в XVII веке. В кн.: Проблемы генезиса капитализма, М., 1978, с. 271–272.

[38] Eton W., A survey of the Turkish Empire, New York, 1973, p. 227.

արհեստավոր վարպետներն իրավունք ունեին առանձին խանութներ բանալ (որոշակի առանձնաշնորհումի դիմաց՝ գումար ներդնելով), առևտուր անել բեզեսթենում[39] այլակրոն արհեստավորների հետ միասին: Պետք է կարծել, որ այստեղ հայ արհեստավորներն ունեցել են առանձին տարածք, մահմեդականների խանութներին կից, ինչպես Օսմանյան Թուրքիայի միջնադարյան բեզեսթեններում: Ինչպիսին էթնիկական հանրություններն էին առանձին թաղամասեր զբաղեցնում քաղաքներում, այնպիսին էլ նրանց առանձնացած համախմբումն էր բեզեսթեններում:

Հայ արհեստավորները փոքրասիական արտադրությանը մասնակցում էին նաև բրդի վերամշակման, և ինչպես տեսանք, դրա բազմատեսակ արտադրության ասպարեզում: Հումքի առկայությունը բավական հնարավորություններ էր տալիս այդ արտադրությունը ծավալելու համար: Մանիսայում և Այդընում, ինչպես և կից շրջաններում, ոչխարաբուծությունը դեռևս XV–XVI դդ. զգալի տարածում ուներ: Այս իմաստով անհրաժեշտ է դիտել, որ Այդընի լիվայում ռայային թույլ էր տրվում տնօրինել մի քանի դյոնյում հողամաս՝ արոտավայրի համար, ընդսմին, այդպիսի հողը թափու (այս դեպքում՝ հողօգտագործման) չէր տրվում: Ավելին, այս լիվայի՝ այդ ժամանակներում գործող օրենքի մեջ կարելի է տեսնել քոչվոր-անասնապահների (որպիսիք էին այս առափնյակում հաստատված տարբեր թուրքական ցեղերը)՝ հողի նկատմամբ ունեցած ավանդական վերաբերմունքի իրավական դրսևորումները. «Նկատի ունենալով,- ասված է այնտեղ,- որ քաղաքացիների և գիուղական բնակիչների անասունների համար թողնված հողի մշակումն ու հերկումը բոլորին վնաս է պատճառում, այդ անելը անվերապահորեն արգելել»:

---

[39] Porter J., Turkey. Its History and Progress, Vol. 2, London, 1854, p. 399.

Պետք է եզրակացնել, որ քաղաքների մարդաշատ դառնալը սկսել էր սահմանափակել երբեմնի արձակ տարածություններ դուրս եկող անասնապահների տեղաշարժման շառավիղը և որ գործող օրենքները նրանց համար ապահովում էին իրենց զբաղմունքը շարունակելու հնարավորություն:

XV–XVII դդ. թուրքական քաղաքների արհեստագործական արտադրությունը բավականաչափ ազատորեն, իր արդյունքների որակի շնորհիվ, կարողանում էր այս կամ այն չափով հակակշռել Եվրոպայից ներմուծված ապրանքներին: XV դ. երկրորդ կեսին եվրոպական (ֆրենկի) բատիստը և դրապը, մանավանդ Լոնդոնի դրապը, Բրուսայի շուկայում փոխանակվում էին տեղական արհեստագործական ապրանքների հետ: Զմյուռնիայում ևս, ոչ պակաս չափով, քան թուրքական առևտրատնտեսական մյուս կենտրոններում, կատարվում էր շուկայական գնի վրա հենվող ապրանքափոխանակություն: Այս ամենով հանդերձ, տեղական արտադրանքը, այս դեպքում՝ Զմյուռնիայի արհեստավորների արտադրանքը, անկախ եվրոպական ապրանքների հետզհետե ընդլայնվող տեսականուց, ուներ իր կայուն սպառողը:

Алберт А. Харатян, *Институт истории НАН РА, д.и.н., проф., член корреспондент НАН,* **Ремесла в армянских колониях Эгейского побережья (XVII–XVIII вв.)** – В армянских колониях ремесленники в качестве социальной прослойки имели стабильное положение в эснафах Османской империи. Городские ремесленники в Смирне, Айдыне, Манисе и др. местах вынуждены были становиться членами мусульманских ремесленнических организаций, подвергаясь при этом религиозной дискриминации. В Смирне действовали светские либо управляемые со

стороны государства ремесленные организации лож. Связанные с эснафом вопросы – ассортимент производимой продукции, его качество, цена, реализация товара – решались на собрании эснафа. В Смирне и других городах действовали ремесленные организации пекарей, сапожников, ювелиров, цирюльников, ткачей. В документах упоминаются также часовщики, портные, столяры, шелкопряды, производители ситца и т.д. Особенно большое число армян-ремесленников было задействовано в производстве по переработке хлопка и шерсти в Смирне, Тире, Бергаме, Айдыне, Манисе и Денизли.

Albert A. Kharatyan, *NAS RA Institute of History, Doctor of Historical Sciences, Professor Corresponding Member of NAS,* **Craftsmanship in the Armenian Colonies on the Aegean Shore (XVII-XVIII)** – In the Armenian colonies the craftsmen representing a certain social layer had a stable position in the esnafs. The urban craftsmen of Smyrna, Aydyn, Manisa and other different locations were forced to become members of Muslim craft unions, while being subjected to religious discrimination. In Smyrna there were either secular or government controlled craft unions of lodges. Such issues as the assortment of products, their quality, price and sales were resolved at the esnaf meetings. In Smyrna as well as other cities craft unions of bakers, shoemakers, jewelers, barbers and weavers functioned. In written records craft unions of watchmakers, tailors, carpenters, silk-weavers, calico producers, etc. are also mentioned. The great majority of Armenians were mainly involved in the cotton and wool production in Smyrna, Tyr, Bergam, Aydyn, Manisa and Denisli.

ԱՆԱՀԻՏ Ս. ԱՍԱՏՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ, ԵՊՀ

ԿԱՐԱՊԵՏ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵՆՈՐՈԳԻՉ

Բանալի բառեր՝ Բարենորոգչություն, աստվածաբան, կրթություն, հոգևորական, քարոզ, հավատացյալ:

Կարապետ Տեր-Մկրտչյանը Հայ Եկեղեցու պատմության մեջ հայտնի է ոչ միայն որպես հոգևոր առաջնորդ, հրապարակախոս, խոշորագույն գիտնական, այլև՝ որպես բարենորոգիչ:

Ստանալով եվրոպական առաջադեմ կրթություն՝ Կ. Տեր-Մկրտչյանը, ինչպես նաև Գարեգին Հովսեփյանն ու Երվանդ Տեր-Մինասյանը, համարվում էին Մայր եկեղեցու նորաթուխ «փրկիչները», բարենորոգիչները, ովքեր, ունենալով գիտական մեծ պաշար, ցանկանում էին Եկեղեցին բարեփոխել, բարենորոգել՝ հավատարիմ մնալով ավանդական դավանությանն ու Հավատամքին: Սակայն, ինչպես պատմությունը ցույց տվեց, ոչ բոլորն ընկալեցին ու ընդունեցին բարենորոգիչների տեսակետներն ու առաջարկները, ավելին՝ նրանց ճնշեցին, փորձեցին մեկուսացնել[1]:

Հայ եկեղեցու բարենորոգչական շարժումը մեծապես կապված է Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի (Քերեստեճյան (1866–

[1] **Հովհաննիսյան Հ.,** Հայ Առաքելական եկեղեցու բարենորոգության հիմնահարցը 1901–1906 թթ., Ե., 2008, էջ 127–130:

1882 թթ.)) կաթողիկոսի հետ: Նա էր, որ սկիզբ դրեց բարեփոխումներին. հիմնադրեց Էջմիածնի հոգևոր ճեմարանը, որի նպատակն էր Մայր եկեղեցու համար կիրթ և գիտուն հոգևորականներ պատրաստել, նորացվեց Հայ եկեղեցու հոգևոր երաժշտությունը և, ի վերջո, 1868 թ. լույս ընծայվեց Մայր Աթոռի պաշտոնական թերթը՝ «Արարատ»-ը:

Մայր Աթոռում բարենորոգչական շարժման ընդլայնման հաջորդ քայլը կապված է Մաղաքիա Օրմանյանի՝ ճեմարանում վարած գործունեության հետ: Մակար Ա Թեղուտցի կաթողիկոսի (1885–1891 թթ.) հրավերով 1887 թ. ճեմարանում աստվածաբանություն դասավանդելու համար Էջմիածին է ժամանում Մաղաքիա Օրմանյանը: Նրա և ժամանակի հայտնի այլ մանկավարժների (Սեդրակ Մանդինյան, Կարապետ Կոստանյան, Փիլիպոս Վարդանյան և այլն) ուսուցչության տարիները համարվում են Մայր Աթոռի հոգևոր ճեմարանի ծաղկման շրջանը: Մ. Օրմանյանի ուսուցչության արդյունքն էր այն, որ «նրա մանկավարժական աշխատանքի առաջին տարվա ավարտին հինգ շրջանավարտներ՝ Կարապետ Տեր-Մկրտչյանը, Աստվածատուր Դալլաքյանը, Սեթ Հարությունյանը, Հովհաննես Մուսաբեկյանը և ճեմարանի ռեկտոր Արշակ Նահապետյանը դիմեցին Մակար կաթողիկոսին՝ խնդրելով իրենց ընդունել Մայր Աթոռի միաբանության կազմում՝ այդ կերպ, փաստորեն, դրսևորելով հոգևոր ծառայության անցնելու իրենց պատրաստակամությունը»[2]: Մաղաքիա Օրմանյանն իր կարճատև դասավանդման ընթացքում (1888 թ. հուլիսի 19-ին Ռուսաստանի պարտադրանքով նա

---

[2] Ղազարյան Խ., Բարենորոգչական նախաձեռնությունները Հայ Առաքելական եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի առաջին կեսին, Ս. Էջմիածին, 1999, էջ 21:

հարկադրված հեռացավ Էջմիածնից՝ վերադառնալով Կ. Պոլիս) վճռորոշ ազդակներ է հաղորդել բարենորոգչական շարժմանը[3]:

Հայ հոգևորականների առաջադեմ տեսակետների ու գործողությունների ձևավորմանն էապես նպաստել էր եվրոպական, հատկապես գերմանական ուսումնառությունը: Իսկ դրա արդյունքները Հայ եկեղեցում արդեն իսկ նկատելի էին 1890-ական թվականներին, երբ Գերմանիա մեկնած առաջին ուսանողները, ավարտելով ուսումը, վերադարձան Էջմիածին:

Վերադառնալով Մայր Աթոռ՝ Կ. Տեր-Մկրտչյանը ստանձնում է տարբեր պաշտոններ՝ «Արարատ»-ի խմբագիր, Գևորգյան ճեմարանի ռեկտոր, ռեկտորի փոխանորդ ևն: Նա 1894 թ. սկսած ղեկավարում էր Մայր Աթոռի պաշտոնաթերթի խմբագրական աշխատանքները: «Արարատ»-ում տպված նրա հոդվածները խոսում են նրա գաղափարների, գործունեության ուղղվածության և որ մեզ համար առավել կարևոր է՝ բարենորոգչական շարժման նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին:

Վերլուծելով Կ. Տեր-Մկրտչյանի գործունեությունը՝ առաջին իսկ հայացքից ակնհայտ է դառնում այն փաստը, որ քարոզը մեծ դեր է կատարել նրա գործունեության մեջ: Նա այն համարում էր սեփական գաղափարների տարածման լավագույն միջոցը, քանի որ քարոզն էր, որ ամենամոտն էր հոգևորականին ականջ դնող հավատացյալի սրտին[4]:

«Արարատ»-ում 1894 թ. տպված հոդվածների մեծամասնության ուղղությունը եկեղեցական բարեփոխումներն էին: Հե-

---

[3] Հովհաննիսյան Հ., նշվ. աշխ., էջ 132:

[4] Կ. Տեր-Մկրտչյանի կիրառած քարոզները, քարոզների մեթոդաբանությունը խորը ուսումնասիրության է ենթարկել Խաչիկ Ղազարյանը (տե՛ս Ղազարյան Խ., նշվ. աշխ., էջ 28–41):

ղինակը գտնում էր, որ պետք է բարեփոխել և նորոգել Հայ եկեղեցին բոլոր ոլորտներում: Նախ և առաջ, նա բարձրացնում էր հոգևորականների գիտական պատրաստվածության խնդիրը: Կ. Տեր-Մկրտչյանը փաստում էր, որ եկեղեցում տիրող նմանատիպ իրավիճակի գրեթե ամբողջ պատասխանատուն հանդիսանում են հոգևորականները: Նա գտնում էր, որ պետք է բարձրացնել հոգևորականների գիտական պատրաստվածությունն ու աստվածաբանական գիտելիքների պաշարը: Խոսելով հատկապես հոգևորական-հավատացյալ կապն ապահովող քարոզի մասին՝ հեղինակը գրում է. «Մեզանում քարոզ է կոչուում այն ամէնը, ինչ հոգևորականը խօսում է եկեղեցում, լինի դա մի միջնադարեան առասպէլ, թէ ազգասիրական ճառ: ... Մեր ժողովուրդը սիրում է արդարև և մեծ պահանջ ունի քարոզ լսելու, բայց այդ պահանջին բաւականութիւն տուած չենք լինի, եթէ միայն քարոզութիւնների թիւն աւելացնել աշխատենք՝ առանց նոցա բովանդակութեան վերայ ուշադրութիւն դարձնելու: Շատ բան կարող է գրաւիչ, հետաքրքրական, օգտակար նոյն իսկ լինել, բայց եկեղեցում խօսելով միայն քարոզ չի դառնայ»[5]: Ըստ նրա՝ քարոզը հոգևորականի համար պետք է դառնա գործիք Աստծո խոսքը հավատացյալին հասցնելու համար, իսկ հոգևորականն էլ այդ դեպքում պետք է իմանա Աստծո խոսքը, նախ ինքը հասկանա, թե ի՞նչ է ուզում փոխանցել հավատացյալին: Նա գտնում էր, որ քարոզիչը պետք է իմանա ճարտասանության կանոնները, պետք է պահպանի քարոզի թեմատիկ միասնությունը, քարոզը պետք է լինի տրամաբանական, տեղին, ունենա պատմական հենք: «Հոգեւորական ասպարէզը» հոդվա-

[5] Տէր-Մկրտչեան Կ., Քարոզի նշանակութիւնը և գործադրութեան եղանակը, «Արարատ», 1895, էջ 44:

ծում Կ. Տեր-Մկրտչյանը ներկայացնում է այն պահանջները, որոնք անհրաժեշտ են հոգևորականների հոգևոր դաստիարակության և աստվածաբանական կրթության համար, վեր է հանում այդ ոլորտներում անհրաժեշտ բարեփոխումների խնդիրը[6]:

Հոգևորականների կրթությունն ու առհասարակ կրթական բարեփոխումները ունեն առանցքային նշանակություն Կ. Տեր-Մկրտչյանի բարենորոգչական գործունեության մեջ: Նա Հայ եկեղեցու բարենորոգչության խնդրի լուծումը կապում էր հոգևորականների կրթության խնդրի լուծման հետ: Նա գտնում էր, որ կրթական բարենորոգումներն իրականացնելուց հետո միայն կարելի է խոսել եկեղեցու այլ ոլորտների բարեփոխման մասին: Խոսելով Հայ եկեղեցու բարեկարգման մասին՝ նա գտնում էր, որ այն կարող է իրագործվել Եկեղեցու կենտրոնը՝ Էջմիածինը, բարեփոխելուց հետո միայն:

Շատ արժեքավոր է հատկապես Տեր-Մկրտչյանի «Բարեկարգութիւն և Բարեզարդութիւն» հոդվածը[7]: Ճիշտ է, հոդվածին նախորդող նյութերում նա արծարծել էր բարենորոգչական գաղափարներ, սակայն այս հոդվածը համարվում է առաջինը, որտեղ հեղինակը բացահայտ հայտարարում է, որ Հայ եկեղեցին ունի վերափոխման, բարեկարգման խնդիր: Այդ հոդվածում հեղինակը հայ ժողովրդի ազգապահպան կենտրոն է համարում եկեղեցին, որը, սակայն, անկում էր ապրում իր անկիրթ հոգևորականների պատճառով: Նա անհրաժեշտ է համարում «Արարատ»-ի ակտիվությունն ու մասնակցությունը բարենորոգչական

---

[6] **Տէր-Մկրտչեան Կ.**, Հոգեւորական ասպարէզը, «Արարատ», 1895, էջ 77–78:

[7] **Տէր-Մկրտչեան Կ.**, Բարեկարգութիւն և Բարեզարդութիւն, «Արարատ», 1895, էջ 361–362:

շարժմանը: Ուշագրավ է, որ 1895 թ. սեպտեմբերին հրատարակած այս հոդվածից հետո նա որոշ ժամանակ չի անդրադարձել բարենորոգման խնդրին, որը պայմանավորված էր 1895-1896 թթ. համիդյան կոտորածներով:

Կ. Տեր-Մկրտչյանը քննարկել է նաև եկեղեցու ներքին բարեգործության (աղքատախնամություն, հիվանդախնամություն) խնդիրը: Իր «Բեթելի անկելանոցը Բիլեֆելդի մոտ» հոդվածում նա անդրադարձել է աղքատախնամության խնդրին, որը փորձում էր լսելի դարձնել Հայ Եկեղեցում[8]: Նա ցանկանում էր եկեղեցում հիմնել անկելանոցներ, ինչպիսիք կային Գերմանիայում և ինչպիսիք Հայ Եկեղեցին ունեցել էր դեռևս Ներսես Ա Մեծի ժամանակ:

Բարենորոգչական շարժման շրջանակում Կ. Տեր-Մկրտչյանին հուզող հաջորդ խնդիրը կիրակնօրյա դպրոցների ստեղծումն էր: Վերջինս համոզված էր, որ Հայ եկեղեցում անհրաժեշտ են կիրակնօրյա դպրոցները, քանզի ցարական կառավարությունն անընդհատ փորձում էր զրկել Հայ եկեղեցուն հայկական դպրոցների նկատմամբ ունեցած իրավունքներից, և դպրոցները դնել հսկողության տակ: Գնալով ավելի ակնհայտ էին դառնում կառավարության միջամտությունները դպրոցական ծրագրին, ուսուցչական համակարգին և տվյալ պարագայում մեծ էր կիրակնօրյա դպրոցների դերը: Այս առումով շատ բնութագրական է նրա «Կիրակնօրյա դպրոցները և մանկանց ժամապաշտութիւնը Գերմանիայում» հոդվածը, ուր ներկայացված է Բեռլինի կիրակնօրյա մի դպրոցի առօրյան, որը գործում էր համալսարանի ավետարանական աստվածաբանության ֆա-

[8] Տէր-Մկրտչեան Կ., Բեթելի անկելանոցը Բիլեֆելդի մոտ, «Արարատ», 1895, էջ 182-188:

կուլտետի հովանավորությամբ: Նկարագրելով մանուկների զբաղվածությունն ու առօրյան՝ Կ. Տեր-Մկրտչյանը գրում է. «Նոցանից շատերը ս. Գրքից աւելի շատ տեղեկութիւններ և աւելի շատ կրօնական հասկացողութիւն ունէին, քան, աւաղ, բազմաթիւ եկեղեցական պաշտօնեաներ մեզանում»[9]: Նա հատկապես շեշտադրում էր եկեղեցական համայնքներում երեխաների համար ժամերգությունների կազմակերպումը, այս գործում կարևորում աստվածաբանների դերը և, փաստորեն, մեկ անգամ առաջ ևս քաշում հայ հոգևորականների աստվածաբանական կրթության հարցը:

Կ. Տեր-Մկրտչյանի՝ Հայ եկեղեցու բարենորոգչությանն ուղղված այս և այլ առաջարկները միանշանակ չընդունվեցին: Անգամ շատ հոգևորականներ նրան մեղադրում էին Հայ եկեղեցում բողոքական գաղափարների տարածման մեջ՝ վկայակոչելով այն փաստը, որ վերջինս սովորել էր Գերմանիայի տարբեր համալսարանների ավետարանական ֆակուլտետներում: Հայ հոգևորականները այդպես էլ չկարողացան ընդունել, որ Կ. Տեր-Մկրտչյանը Գերմանիայում ստացած իր գիտելիքները ցանկանում էր ներդնել Հայ եկեղեցու բարեկարգման գործում, նա ցանկանում էր հասնել բնակչության հոգևոր կրթության և դաստիարակության կազմակերպմանը և լրացնել մեր եկեղեցում դարերի ընթացքում կուտակված թերացումները:

Կ. Տեր-Մկրտչյանի գաղափարների դեմ դուրս եկավ հակառակորդների մի ստվար բանակ, որոնք հրապարակային քննադատության էին ենթարկում նրա գաղափարները: Այս առումով հատկապես ակտիվ էին «Մշակ» և «Հայրենիք» լրագրերը:

---

[9] **Տէր-Մկրտչեան Կ.**, Կիրակնօրյա դպրոցները կամ մանկանց ժամապաշտութիւնը Գերմանիայում, «Արարատ», 1895, էջ 299-300:

«Մշակ»-ը՝ Թիֆլիսից (Թբիլիսի), իսկ «Հայրենիք»-ը՝ Կ. Պոլսից պայքարում էին Կ. Տեր-Մկրտչյանի տեսակետների դեմ: Եվ դեռ ավելին՝ Կ. Տեր-Մկրտչյանի կոչը բարեփոխումների հարցում համագործակցելու վերաբերյալ դարձավ նոր հարձակումների առիթ: Այսուհետ նրան մեղադրում էին կղերական մտայնություններ ունենալու, հոգևորականներին ժողովրդից անկախ և ինքնուրույն գործելու կոչ անելու և այլ մեղադրանքների համար: Չնայած հոգևորականների դժգոհությանը և քննադատական հոդվածներին՝ նա շարունակում էր արծարծել Հայ եկեղեցու բարենորոգչության խնդիրը և փորձում ուղիներ գտնել դրա լուծման համար: Նա իր «Հոգեւորականի առաջնորդող գաղափարը» հոդվածում գրում է. «Ինչու՞ մենք արժանաւոր հոգևորականներ չունինք և չենք ունենում ... Ամենքն այդ խնդրի լուծումը միմեանց վերայ են ձգում. ժողովուրդը մեղադրում է բարձր հոգևորականութեան, որ նա անարժաններին ձեռնադրում է, հոգևորականութիւնը մեղադրում է ժողովրդին, որ նա անարժաններին է ընտրում. մամուլը, հասարակական գործիչը երկուսին ևս մեղադրում է. բայց հարցը մնում է չլուծուած»[10]: Այս խնդրի լուծման միակ ճանապարհը հեղինակը կրկին անգամ համարում էր կրթությունը, քանզի հայ հոգևորականների անկիրթ, անմիտ արարքների հետևանքով հասարակությունը հոգևորականությանը դիտարկում էր իբրև առանձին դասակարգ, որն ուներ սեփական շահեր և կտրված էր բնակչության մյուս շերտերից: Այստեղ Կ. Տեր-Մկրտչյանը կրկին վեր է հանում հոգևորականների աստվածաբանական կրթության անհրաժեշտությունը, ինչի առկայությունը կվերացներ հոգևորականների և հասարակության

[10] Տէր-Մկրտչեան Կ., Հոգեւորականի առաջնորդող գաղափարը, «Արարատ», 1896, էջ 569-570:

միջև ստեղծված անջրպետը: Նա ցանկանում էր եվրոպական համակողմանի կրթություն ստացած հայ հոգևորականներով համալրել Գևորգյան ճեմարանի ուսուցչական կազմը և արդեն տեղում կրթված հայ հոգևորականության նոր սերունդ տալ[11]:

Կ. Տեր-Մկրտչյանը 1898 թ. վերսկսեց եկեղեցու բարենորոգչության թեմայով նոր հոդվածների հրատարակումները, այն է՝ «Ի՞նչ կարիք ունի Հայոց եկեղեցին»[12], «Աստուածաբաններ պէ՞տք են»[13], «Կրոնատրներ պէ՞տք են»[14], «Կրկին քահանայական հարցը և աստուածաբանութիւնը»[15]: Այդ հոդվածներում ևս նա հիմնականում ընդգծում էր հոգևորականների կրթության կարևորությունը:

Նա «Ի՞նչ կարիք ունի Հայոց եկեղեցին» հոդվածում մատնանշում էր, որ Հայ եկեղեցում առաջացած կարևոր հիմնահարցերից է նաև հայ հոգևորականի նյութական անապահովությունը: Ճեմարանի սաների հոգևոր ասպարեզից հեռանալն ու այլ բնագավառներում աշխատանքի փնտրտուքը նա բացատրում էր հայ հոգևորականների սոցիալական ծանր վիճակով: Նա նման վերաբերմունքը բացատրում էր նրանով, որ Հայաստանում տարիներ ի վեր հոգևորականների դեմ մղվող պայքարը ստեղծել էր ոչ այնքան դրական մթնոլորտ, և շատերը պարզապես հեռանում էին՝ չցանկանալով շարունակել ծառայությունը

---

[11] Նույն տեղում, էջ 573:

[12] **Տէր-Մկրտչեան Կ.**, Ի՞նչ կարիք ունի Հայոց եկեղեցին, «Արարատ», 1898, էջ 81–83:

[13] **Տէր-Մկրտչեան Կ.**, Աստուածաբաններ պէ՞տք են, «Արարատ», 1898, էջ 199–204:

[14] **Տէր-Մկրտչեան Կ.**, Կրոնատրներ պէ՞տք են, «Արարատ», 1898, էջ 254–258:

[15] **Տէր-Մկրտչեան Կ.**, Կրկին քահանայական հարցը և աստուածաբանութիւնը, «Արարատ», 1898, էջ 344–349:

հոգևոր ասպարեզում: Հոգևորականության նկատմամբ նմանատիպ վերաբերմունքը Տեր-Մկրտչյանը բացատրում էր ժողովրդի անկրթությամբ և հոգևոր դաստիարակության բացակայությամբ:

Տեր-Մկրտչյանն իր «Աստուածաբաններ պէ՞տք են» և «Կրոնաւորներ պէ՞տք են» հոդվածներում կրկին առաջ է քաշում հայ հոգևորականների աստվածաբանական կրթության խնդիրը և միաժամանակ կարևորում վանական դասի առկայությունը Հայոց եկեղեցում[16]: Սակայն կարևորության հետ մեկտեղ, նա ընկալում և ընդունում էր, որ կրոնավորների կամ վանական դասի առկայությունը տվյալ ժամանակաշրջանի համար, մեղմ ասած, իրականությունից շատ հեռու էր:

Հայ մամուլի, հոգևորականների և հասարակական գործիչների «հարձակումները» 1890-ականներին չկարողացան կասեցնել Տեր-Մկրտչյանի բարենորոգչական գործունեություն տարածումը: «Կրթուած քահանաներ և ժողովուրդը» հոդվածում նա անդրադառնում է հոգևորականների կրթության խնդրին, հատկապես՝ խոչընդոտներին: Նա գտնում էր, որ կրթված լինելը չպետք է համարվի նախադրյալ արտոնությունների համար, և յուրաքանչյուր կրթություն ստացած հոգևորական չէ, որ արժանի է բարձր պաշտոնների: Կ. Տեր-Մկրտչյանը հոգևորականի համար բնութագրական էր համարում «իսկական հոգեւորականին վայել առաքինութեան փայլը եւ հմտութիւնը»[17]: Նա գտնում էր, որ այդ հատկանիշները ձեռք են բերվում միայն հավատով և

---

[16] Տէր-Մկրտչեան Կ., Կրօնաւորներ պէ՞տք են, «Արարատ», 1898, էջ 254–258:

[17] Տէր-Մկրտչեան Կ., Կրթուած քահանաներ և ժողովուրդը, «Արարատ», 1899, էջ 67:

անսպառ աշխատասիրությամբ: Իսկ այս ամենը կարող էր ամբողջանալ միայն հոգևոր աստվածաբանական կրթության առկայությամբ:

Տեր-Մկրտչյանը կարևոր նշանակություն էր տալիս նաև եկեղեցական արարողակարգին: Նա կարևորում էր հայ ժողովրդի մեջ պաշտամունքի հետ կապված նոր գիտակցության ձևավորումն ու արմատավորումը: Նա հասկանում էր, որ արարողությունների վերափոխումը սկզբնական շրջանում կստեղծի քաոտիկ իրավիճակ, իսկ ժողովուրդը պատրաստ չի նման համակարգային, խորը փոփոխությունների: Նախ անհրաժեշտ է վերափոխել մարդկանց գիտակցությունը, ստեղծել նախադրյալներ, որոնք կնպաստեին կրոնական համակարգում հետագա փոփոխությունների իրականացմանը: «Մարդկանց գիտակցության վերափոխումը պետք է տեղի ունենար ժամերգության ընթացքում դավանանքի, ծեսերի և պաշտամունքային արարողակարգի նշանակության վերաբերյալ՝ համայնքի անդամներին կատարվող պարզաբանումներով»[18]: Այս տեսանկյունից նա մտահոգիչ էր համարում այն, որ «Մեր եկեղեցին ժամակարգութիւնների համար հաստատուն հրահանգներ չունի: Առ այժմ գոհ պէտք է լինինք, եթէ գոնէ Մաշտոցի եւ կենդանի աւանդութեան գծած սահմաններից չելնեն»[19]:

Նա պայքարում էր նաև հավատացյալների կողմից եկեղեցուն պատկերներ և առարկաներ նվիրելու համատարած երևույթի դեմ, որն ուներ բարեփոխման կամ բարեկարգման խնդիր:

---

[18] **Ղազարյան Խ.**, Նշվ. աշխ., էջ 60:

[19] **Տէր-Մկրտչեան Կ.**, Աղավաղումներ և օտարամոլութիւններ մեր եկեղեցոյ արարողութեան մէջ, «Արարատ», 1899, էջ 504:

Հայ եկեղեցու բարենորոգչությանն առնչվող վերը նշված գաղափարները հետագայում կրկին արծարծվեցին Կ. Տեր-Մկրտչյանի ծրագրերում: 1900–1901 թթ. կատարած դիտարկումներն ու նոր առաջարկները բարելավված կրթության և նոր ընտրակարգի միջոցով հոգևորականության բարեփոխման վերաբերյալ սուր պայքարի նոր ալիք բերեցին նրա դեմ: Քննադատությունների գագաթը Լևոն Սարգսյանի «Հին ցաւ» գրքույկն էր, որին ի պատասխան Տեր-Մկրտչյանը հրատարակեց համանուն հոդված «Արարատ»-ի հուլիսյան համարում[20]: Լ. Սարգսյանը իր գրքույկում բարենորոգչական շարժման պարագլուխ էր դիտարկում Կ. Տեր-Մկրտչյանին[21]: Նա հայտարարում էր, որ Մ. Օրմանյանի շնորհիվ ձևավորվել էր հոգևորականների նոր սերունդ, որն անտեսում էր հայոց պահանջներն ու կարիքները՝ գտնելով, որ պետք է աշխատել լավ հոգևորականներ ունենալ, որոնք կհրաժարվեն դասակարգային շահերից, և որ գլխավորն է՝ աստվածաբանությունից[22]: Նա Եվրոպայում աստվածաբանական կրթություն ստացած հայ հոգևորականներին (Գ. Հովսեփյան, Գ. Չորեքչյան, Գ. Տեր-Մկրտչյան, Երվ. Տեր-Մինասյան) մեղադրում էր «կղէրական գերիշխանութիւն քարոզելու մէջ»:

Ի պատասխան այս և նմանատիպ այլ մեղադրանքների՝ Կ. Տեր-Մկրտչյանը, քննադատելով Լ. Սարգսյանին և նրա համախոհներին, քննարկում է խնդրի նաև անձնական տեսանկյունը: Ըստ Կ. Տեր-Մկրտչյանի՝ հակառակորդները նույնացնում էին «բարենորոգիչ» հայ հոգևորականների անձն ու գործը և անձնական որոշակի խնդիրները տեղափոխում էին հոգևոր ոլորտ:

---

[20] **Տէր-Մկրտչեան Կ.**, Հին ցաւ, «Արարատ», 1900, յուլիս, էջ 338–343:
[21] **Սարգսյան Լ.**, Հին ցաւ, Մոսկուա, 1900, էջ 26–42:
[22] Նույն տեղում, էջ 45, **Հովհաննիսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 181–186:

«Նորա (Լ. Սարգսյանի – Ա.Ա.) առարկութիւնների ուղն ու ծուծը այն է, թէ նոր հոսանքի մէջ կղերական ոգի է իշխում, որի կազմող տարրերն են, ինչպէս տեսանք աստուածաբանութիւնը եւ դասակարգային շահերը»[23]: Բարենորոգչական շարժման ջատագովներին ուղղված այս մեղադրանքը Կ. Տեր-Մկրտչյանը բնութագրում է իբրև բացարձակ սուտ և երևակայության արդյունք: Ընդհանրացնելով իր խոսքը՝ նա եզրակացնում է, որ այդ հին ցավը երբեք չի բուժվի վերացական պահանջներ դնելով, արդեն իսկ կիրառած քայլերը մերժելով և այդ ուղղությամբ գործունեություն ծավալած անձանց հալածելով[24]:

Տեր-Մկրտչյանի բարենորոգչական ծրագրի մի մասն էր կազմում Աստվածաշնչի նոր՝ քննական, հրատարակությունը: Այս գործի հրատապ և կարևոր լինելը բազմիցս շեշտվել է, և այդ ուղղությամբ գործուն քայլեր է իրականացրել դեռևս Մակար Թեղուտցի կաթողիկոսը: Չնայած Կ. Տեր-Մկրտչյանի կողմից Մատթեոսի ավետարանի արևելահայերեն թարգմանության իրականացմանը, հրատարակության որոշ նախապատրաստական աշխատանքներին՝ այն անավարտ մնաց:

Նրա բարենորոգչական գործունեության հաջորդ քայլը Ադոլֆ ֆոն Հառնակի «Քրիստոնեության իսկությունը» գրքի հայերեն թարգմանությունն էր: Վերջինս 1901–1903 թթ. «Արարատ»-ի համարներում տպագրել է Հառնակի 16 դասախոսություններից 7-ը՝ առանձին հոդվածներով:

Մկրտիչ Ա Խրիմյանի 1906 թ. հրավիրած *Կենտրոնական ժողովի* մերժումից հետո Կ. Տեր-Մկրտչյանի և նրա կողմնակիցների նկատմամբ հետզհետե ձևավորվեց հակառակորդների մի

---

[23] Տէր-Մկրտչեան Կ., Հին ցաւ, էջ 341:

[24] Նույն տեղում, էջ 343:

հսկա բանակ: Վերջինները, սրելով Մայր Աթոռում արդեն իսկ լարված մթնոլորտը, հասան նրան, որ Տեր-Մկրտչյանը հեռացավ իր զբաղեցրած պաշտոններից: 1907 թվականից Կ. Տեր-Մկրտչյանը կարծես հրաժարվել էր բարենորոգումների վերաբերյալ հրապարակային ելույթներից և չունենալով նպաստավոր հենարան էջմիածնում՝ զբաղվում էր Ատրպատականի թեմում առաջացած խնդիրներով:

Տեր-Մկրտչյանը վեց տարվա լռությունից հետո, 1913 թ. բարենորոգության թեմայով հոդվածների նոր շարք տպագրեց «Հովիտ» շաբաթաթերթում՝ «Վերանորոգութեան պէտք ունի՞ Հայոց եկեղեցին» խորագրով: Առաջին հոդվածում նա ի սկզբանե նշում է, որ Հայ եկեղեցու վերանորոգության խնդիրը, որ մինչ այդ աղմկոտ էր և շատերի համար անախորժ, այդպես էլ որևէ լուրջ հաջողություն չի գրանցել: Այստեղ նա կարևորում է Կ. Պոլսի պատրիարքության դերը, քանզի Կ. Պոլսում էր, որ կատարվել էին որոշ գործուն քայլեր բարենորոգության հետ կապված: Ապա, համեմատելով էջմիածնում տիրող իրավիճակի հետ, գրում է. «... Տաճկաստանում ուրեմն, չնայած այնտեղ տիրող բազմադիմի վրդովումներին և տագնապին, շարունակում են զբաղուել եկեղեցական բարեկարգութեան խնդրով և առանձին կարևորութիւն տալ նրան ...»[25]:

Վկայակոչելով Եղիշե արք. Գեղամյանի խոսքերը՝ Կ. Տեր-Մկրտչյանն առաջին հոդվածում փորձում է հերքել վերջինիս մեղադրանքն ուղղված բարենորոգչական շարժմանը՝ ուղղված Գր. Արծրունուն, Ս. Նազարյանին և Ե. Տեր-Մինասյանին: Եղիշե արքեպիսկոպոսը հայտարարարում է, որ բոլորովին անտեղի է վե-

[25] Տէր-Մկրտչեան Կ., Վերանորոգութեան պէտք ունի՞ Հայոց եկեղեցին, «Հովիտ», 1913, № 2, էջ 20:

բանորոգության խնդրով զբաղվելը, Հայ Եկեղեցին վերանորոգության և վերանորոգիչների կարիք չունի: Իսկ Գր. Արծրունու, Ս. Նազարյանին և Ե. Տեր-Մինասյանին մեղադրում էր, որ կամեցել են «ստիպել ժողովրդին, որ իր ձևով և իր ստեղծած ձևերով եկեղեցին վերածէ գերմանական և կամ այս ու այն եւրոպացի ազգի եկեղեցու համեմատ»[26]: Կ. Տեր-Մկրտչյանը ապացուցում է հայ բարենորոգիչներին ուղղված մեղադրանքների անհիմն ու ստահոդ լինելը: Նա այդ ամենը բացատրում է միայն այն ակնհայտ փաստով, որ հայ բարենորոգիչները խոսում են միայն վերանորոգության, բարեփոխման, եղածը վերափոխելու, բարեկարգելու և ոչ հիմնովին քանդելու մասին:

Երկրորդ հոդվածում նա խոսում է հայկական «ինտելիգենցիայի» մասին: Նա քննարկում է հայ շատ հոգևորականների և հասարակական գործիչների այն տեսակետը, ըստ որի Հայ եկեղեցին լուրջ վերանորոգության կարիք չունի, իսկ ինչ խնդիրներ էլ կան, կլուծի հայ «ինտելիգենցիան»: Այդ հոդվածում հեղինակը Հայ եկեղեցու «հոգևոր շինուածը» նմանեցնում է Մայր տաճարի նյութական շինության հետ: Ըստ նրա՝ Մայր տաճարը դարերի ընթացքում շատ փոփոխությունների էր ենթարկվել, ավելացվել էին եկեղեցու նախնական կազմին անհարիր մասեր և արդյունքում ճարտարապետական տեսակետից մի անկերպարանք զանգված է ստացվել: Եվ այս ամենը տեսնելով, ոչ մի հայ չի գտնվի, որ կմերժի Ս. Էջմիածնի տաճարի վերանորոգության խնդիրը, բոլորն էլ հասկանում են, որ պետք է վերանորոգել և բարեկարգել: Նույն իրավիճակում էլ, ըստ Կ. Տեր- Մկրտչյանի, գտնվում է եկեղեցու ներքին, հոգևոր կյանքը, որը չբարեկարգե-

[26] Նույն տեղում:

լու դեպքում, մի օր անդունդի եզրին կհայտնվի[27]: Եվ չպետք է քանդել մի բան առանց դրա փոխարեն նորը ստեղծելու, քանի որ ո՛չ հասարակ ժողովուրդը, ո՛չ է. մտավորականությունը չէին կարող ստանձնել բարեփոխումների իրագործման պատասխանատվությունը:

«Հովիտ»-ի հինգերորդ համարում տպագրված համանուն երրորդ հոդվածում Տեր-Մկրտչյանը շարունակում է նախորդ հոդվածի միտքը: Վկայակոչելով Նախիջևանի, Վայոց Ձորի, Ղարադաղի և Արևելյան Հայաստանի այլ շրջանների գյուղական համայնքներում տիրող մեղմ ասած անմխիթար իրավիճակը՝ նա մեկ անգամ ևս վեր է հանում հասարակ ժողովրդի բարեկրթման, զարգացման և ժողովրդական հասարակության կրթության կազմակերպման խնդիրը: Կ. Տեր-Մկրտչյանը վեր է հանում հասարակության մեջ տարածված այնպիսի սնոտիապաշտական, ոչ 'քրիստոնեական երևույթներ, ինչպիսիք են սրբերին ոտքի գնալը, զանազան ոգիներին մատաղ անելը, «մկրատ ու ասէդ ծգելը» և այլ երևույթներ և մեկ անգամ ևս բարձրացնում հետևյալ հարցը. «Այս ժողովու՞րդն ուրեմն պիտի վերանորոգէ իր եկեղեցին. սա՞ է, որ հաստատ մնացել է իր հայրերի հաւատքի մէջ, և ամենևին կարօտ չէ, որ մեկը նրա մասին հոգս քաշէ, կրօնական կեանքի նոր և աւելի ուղիղ ճանապարհ ցոյց տայ ...»[28]: Հետևաբար՝ Տեր-Մկրտչյանը կրկին զարգացնում է նախկինում իր արած առաջարկը՝ բարեփոխել հայ հասարակական կրթական համակարգը, նախ՝ կրթել հասարակությանը, ապա՝ բարենորոգել Հայ եկեղեցին:

---

[27] Նույն տեղում, № 4, էջ 51–53:
[28] Նույն տեղում, № 5, էջ 71:

Չորրորդ հոդվածում նա, կողմ լինելով Հայ եկեղեցու տարբեր ոլորտներում բարենորոգության իրականացմանը, այնուամենայնիվ, սխալ է համարում «բարենորոգությունը ժամերգությունների և ծիսական արարողությունների կրճատմամբ սահմանափակող մտայնությունները»[29]: Հենց այս բնագավառում էր, որ Կ. Տեր-Մկրտչյանը դժվարանում էր որոշել, թե ինչն է արտաքին, կողմնակի և փոփոխության ենթակա: Նա այդ մտայնությամբ մերժում էր ժամերգության կամ պատարագի որևէ հատվածի կրճատումը: Նա պնդում էր, որ պետք է բացառել այն բարեփոխումները, որոնք պայմանավորված են միայն առաջին գործողությունների կամ հատվածների կրճատմամբ: Այս տեսանկյունից նա գրում է. «Ազգային – եկեղեցական տեսակէտից ո՛չ մի բան արտաքին, պատահական և աւելորդ չէ, որ ստեղծուած է մեր եկեղեցու մթնոլորտում՝ իբրև ինքնուրոյն արտայայտութիւն հայ քրիստոնէական ոգու»[30]:

Համանուն հինգերորդ հոդվածում հեղինակը, շարունակելով նախորդի թեմատիկան, գտնում է, որ եթե այս կամ այն ծեսի վերաբերյալ որոշակի փոփոխություններ արվել են կաթողիկոսական հրահանգով, ապա ընդհանուր բարեփոխությունը պետք է որոշի և իրականացնի հոգևորականների ընդհանուր ժողովը: Այստեղ էլ նա կրկին վեր է հանում կրթված հոգևորականների խնդիրը, որոնք կկարողանային պարզ գաղափար կազմել քննարկվող հարցի վերաբերյալ: Հետևաբար՝ Կ. Տեր-Մկրտչյանը պնդում էր, որ «այս և ուրիշ տեսակէտներից վաղաժամ է ըստ իս նաև այնպիսի հարցեր վճռելը, ինչպէս կուսակրօնութեան

---

[29] Ղազարյան Խ., նշվ. աշխ., էջ 171:

[30] Տէր-Մկրտչեան Կ., Վերանորոգութեան պէտք ունի՞ Հայոց եկեղեցին, «Հովիտ», 1913, № 6, էջ 85:

բարձումն, այրի քահանաների ամուսնութիւն, ամուսնական օրէնքների հիմնական յեղաշրջում, որոնք առաջ են բերում ամեն անգամ, երբ եկեղեցական բարենորոգմանց մասին խօսք է լինում, կարծես մեր եկեղեցու վերաշինութիւնը նոցանից է կախուած»[31]:

Հետևաբար, բարեփոխման որոշակի առաջարկ ներկայացնելուց առաջ անհրաժեշտ էր հասարակության մեջ համապատասխան գիտակցություն զարգացնել, քանզի դա էր բոլորին բարենորոգության գաղափարն ընկալելի դարձնելու միակ միջոցը:

Այս շարքի վերջին հոդվածում Կ. Տեր-Մկրտչյանը փորձում է տալ այն նպատակային պարզաբանումները, որոնց միջոցով հասարակության մեջ կարմատավորվի բարենորոգչության գաղափարը. «Ամենից առաջ կենդանի եկեղեցին ս. Գիրք պէտք է ունենայ, որից նա առնում է իր առաջնորդող սկզբունքները, իր սպառազինութիւնը՝ աշխատանքի դէմ վարած անընդհատ կռուում. իսկ մեր ժողովրդի ձեռքին իրեն հասկանալի բարբառով ս. Գիրք չկայ: Հանրամատչելի աշխարհաբար լեզուով թարգմանած Աստուածաշունչն այդ ժողովրդի ձեռք տալը մի պահանջ է այսօր, որի կատարման յետաձգումը նշանակում է բաց աչքերով տեսնել ու թոյլ տալ ժողովրդեան հոգեպէս վայրենացումը»[32]:

Այսպիսով, Կ. Տեր-Մկրտչյանը Հայ եկեղեցու բարենորոգության գործում ամենատարրական քայլը համարում էր Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանությունը, որը կնպաստեր հասարակության կրոնական գիտակցության առավել բարձրացմանը, քրիստոնեական գրականության, թերթերի թարգմանությունը: Ըստ նրա՝ անհրաժեշտ էր հատկապես դպրոցներում

---

[31] Նույն տեղում, № 7, էջ 102:

[32] Նույն տեղում, № 8, էջ 115:

ձևավորել և ամրապնդել գիտելիքները կրոնի և հայ եկեղեցու վերաբերյալ, իսկ դա կարող էին իրականացնել միայն պատրաստված, մասնագիտական կրթության ստացած ուսուցիչները՝ համապատասխան գրականության օգնությամբ[33]:

Կարևորելով Հայ եկեղեցու բարենորոգության խնդրի լուծումը՝ Կ. Տեր-Մկրտչյանը անհրաժեշտ էր համարում տվյալ խնդրի քննարկումը հասարակության լայն շրջաններում: Միայն այդ դեպքում բարենորոգության խնդիրը կդառնար հայ հասարակության մտահոգության առարկան և համընդհանուր ուժերով հնարավոր կլիներ հասնել հաջողության[34]:

«Հովիտ»-ի իր հոդվածաշարը նա ավարտում է այն եզրակացությամբ, որ պետք է բարձրացնել կրթական մակարդակը եկեղեցում, ճեմարանում, թեմական դպրոցներում և հասարակության մեջ, անհրաժեշտ է ձևավորել և ամրապնդել կրոնական գիտակցությունն ու գաղափարախոսությունը հասարակության մեջ. այսպես պետք է դնել բարենորոգության սկիզբը: Այս հոդվածաշարը Կ. Տեր-Մկրտչյանի վերջին հրապարակային անդրադարձն էր Հայ եկեղեցու բարենորոգության հարցին:

Анаит С. Асатрян, *ЕГУ, МНОЦ НАН РА,* **Карапет Тер-Мкртчян – реформатор Армянской церкви** – Карапет Тер-Мкртчян в истории Армянской церкви известен не только как духовный лидер, публицист, ученый, но и как реформатор.

По его мнению, Армянская церковь может и должна решать свои задачи только опираясь на собственные силы. Образован-

---

[33] Նույն տեղում, էջ 116:
[34] Նույն տեղում, էջ 117:

ные богословы должны провести реформы, которые должны начаться именно с С. Эчмиадзина. Главное внимание К. Тер-Мкртчян уделяет образованию, значимости воскресных школ и благотворительным делам, изданию новой Библии, предлагает новые изменения в проведении церковных обрядов.

Anahit S. **Asatryan**, *YSU, ISEC NAS RA*, **Karapet Ter-Mkrtchyan as a reformer of Armenian church** – Karapet Ter-Mkrtchyan is known not only as a spiritual leader, a publicist, a scientist but also as a reformer in the history of the Armenian Church.

He considered that the Armenian Church can solve all of its problems with its own efforts. The educated theologians might carry out reforms which should start namely from Mother See. Therefore, he paid great attention to education and gave special importance to the role of Sunday schools and charitable institutions, the new critical publishing of the Bible. He suggested to make certain modifications in the complex of rituals, too.

ՀԱՅԿ Շ. ՄԱՀՏԵՍՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԵՏՐՈԳՐԱԴՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ (1917 Թ. ՀՈՒՆԻՍ)

Բանալի բառեր՝ Ժամանակավոր կառավարություն, Համառուսաստանյան Սահմանադիր ժողով, Հատուկ խորհրդակցություն, վարչատարածքային բաժանումներ, զեմստվո, ընտրական շրջան, նահանգ, մարզ:

1917 թ. մարտի 22-ին Համառուսաստանյան Ժամանակավոր կառավարությանը կից կազմակերպվում է Իրավաբանական Խորհրդակցություն, որի առաջարկով էլ Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի ընտրությունների կազմակերպման համար 1917 թ. մարտի 25-ին ընդունվում է որոշում՝ Հատուկ Խորհրդակցություն ձևավորելու վերաբերյալ[1]: Հատուկ Խորհրդակցության առաջին նիստը բացվում է երկու ամիս անց՝ մայիսի 25-ին: Խորհրդակցության նախագահ է նշանակվում Ֆյոդոր Կոկոշկինը, օգնականներ՝ Բենիամին Մյակոտինը, Վիկտոր Կրոխմալը, քարտուղար՝ Նիկոլայ Ավինովը, օգնականներ՝

[1] Государственный архив Российской Федерации (ГАРФ), ф. 1792, оп. 1, д. 2, л. 2.

Էդուարդ Պոնտովիչն ու Վլադիմիր Ձյուբինսկին[2]: Հատուկ Խորհրդակցության աշխատանքներին մասնակցելու համար Ռուսաստանի բոլոր երկրամասերից հրավիրվում են ավելի քան 100 ներկայացուցիչներ: Վրացիներից Խորհրդակցության աշխատանքներին մասնակցելու համար Անդրկովկասից Պետրոգրադ են ժամանում Եվգենի Գեգեչկորին և Ալեքսանդր Ծերեթելին[3], հայերից՝ Գևորգ Խատիսյանը, Լևոն Աթաբեկյանը[4], թաթարներից՝ Ֆաթալի Խան-Խոյսկին[5]: Վերոհիշյալ անձանցից բացի, անդրկովկասյան ազգություններից Խորհրդակցության աշխատանքներին մասնակցում էին՝ Պետրոգրադում գտնվող Նիկողայոս Ադոնցը, Հակոբ Զավրիևը, Գեորգի Լորդկիպանիձեն, Շալվա Էլիավան, Զուրաբ Ավալովը, Ակպեր աղա Շեյխ ուլ Իսլամովը, Մուսթաֆա բեկ Վեքիլովը: Հատուկ Խորհրդակցությունն ընտրությունների կազմակերպման վերաբերյալ որոշ հարցերի առավել մանրամասն քննարկման համար կազմակերպում է հանձնաժողովներ, որտեղ ընդունված որոշումները պետք է ներկայացնեին Հատուկ Խորհրդակցության հաստատմանը:

Հատուկ Խորհրդակցության մայիսի 30-ի երրորդ նիստին[6] Սիբիրի ներկայացուցիչ Իվան Տոլմաչովն իր ելույթում մատնանշում է Ռուսաստանի վարչատարածքային բաժանումների անհամաչափ, անարդար ու անկատար լինելը, ինչի արդյունքում նրանցում խառը ազգաբնակչական կազմերի առկայությունն ու հաղորդակցության դժվարությունները խոչընդոտ կհանդիսա-

---

[2] Նույն տեղում, թ. 5–12:

[3] Центральнный Государственный Исторический Архив Грузии (ЦГИА Грузии), ф. 2080, оп. 1, д. 506, л. 1.

[4] Նույն տեղում, թ. 2:

[5] Каспий, Баку, 15 июня, 1917 г., N 131.

[6] ГАРФ, ф. 1811, оп. 1, д. 38, л. 131–132.

նային Հատուկ Խորհրդակցության կողմից ընտրական շրջանների ձևավորման գործում: Այդ հարցերին լուծումներ տալու համար առաջարկում է կազմավորել Ռուսաստանի ծայրերկրամասերում ընտրությունների կազմակերպման հանձնաժողով: Նրա առաջարկն ընդունվում է Հատուկ Խորհրդակցության հունիսի 1-ի 5-րդ նիստում[7]: Հանձնաժողովի կազմում ընտրվում են Հատուկ Խորհրդակցության անդամներ Մովսես Աճեմովը, Նիկոդայոս Ադոնցը, Սերգեյ Բոնդարյովը, Իվան Եփրեմովը, Շաքիր Մուխամեդյարովը, Դմիտրի Սդինեցը, Պյոտր Ռուբելը, Նիկոլայ Սվյատիցկին, Պիտերիմ Սորոկինը, Վալիդ խան Տանաչևը, Նաֆթալ Ֆրիդմանը, Նիկոլայ Խանխասաևը: Հանձնաժողովի նախագահ է ընտրվում Ժողովրդական ազատություն կուսակցության ներկայացուցիչ Մաքսիմ Վինավերը, տեղակալ՝ Իվան Տոլմաչովը, քարտուղար՝ սոցիալիստ-հեղափոխական Մարկ Վիշնյակը:

Հունիսի 5-ին Հանձնաժողովի երկրորդ նիստում[8] Մ. Վինավերը հայտնում է, որ իրենց խնդիրը Ռուսաստանի այն երկրամասերի բացահայտումն է, որոնք իրենց ծգվածությամբ, խառը ազգաբնակչությամբ, կենցաղային առանձնահատկություններով, վարչատարածքային բաժանման անհամաչափության պատճառով չեն համապատասխանում Սահմանադիր ժողովի ընտրությունների կազմակերպման ընդհանուր պահանջներին և կանոններին: Այդպիսի հատուկ երկրամասերից են Ասիական Ռուսաստանը և Կովկասը, որոնցում բնակվում են քոչվոր ժողովուրդներ, նահանգներն ու գավառները վարչատարածքային

---

[7] Նույն տեղում, թ. 330:

[8] ГАРФ, ф. 1811, оп. 1, д. 219, л. 5–6.

անարդար և անհամաչափ բաժանման պատճառով կտրտված են մեկը մյուսից:

Հանձնաժողովի անդամ Ն. Սվյատիցկին խոսելով Ռուսաստանի ծայրերկրամասերի մասին, գտնում է, որ պետք է հստակեցնել այն վայրերի ցանկը, որոնց հարցը պետք է քննարկվի Հանձնաժողովում, մասնավորապես Կովկասն ու Ասիական Ռուսաստանը պետք է բաժանվեն առավել մանր միավորների՝ յուրաքանչյուրն իր կազմի առանձնահատկություններին համապատասխան, որպեսզի հնարավոր լինի կիրառել համամասնական ընտրակարգ: Այդ վայրերի ցանկը կազմելիս Ի. Տոլմաչովն առաջարկում է հաշվի առնել վարչատարածքային միավորների հետևյալ առանձնահատկությունները՝ ազգաբնակչության կազմը, կենցաղը, մշակութային մակարդակը, իսկ Մ. Վինավերն առաջարկում է օգտվել երկրամասերում զեմստվային դրություն մտցնելու նպատակով Ներքին գործերի նախարարությանը կից կազմակերպված տեղական ինքնակառավարման և կառավարման հանձնաժողովի ունեցած տվյալներից: Զեմստվոյի մասնագետ Ն. Վինոգրադսկին ասում է, որ այդ հանձնաժողովի տվյալներն ու եզրակացությունները կարող են իրենց կողմից քննվող մի շարք հարցերի լուծման համար հիմք հանդիսանալ՝ բացառությամբ Անդրկովկասի, որտեղ զեմստվային դրության ներմուծումը ձգձգվում է, քանի որ այդ երկրամասում հարցն ազգային է, իսկ զեմստվային ինքնավարության և Սահմանադիր ժողովի ընտրությունների մասին օրենքի մշակման աշխատանքներն առանձնահատուկ դժվար՝ ի նկատի ունենալով երկրամասի առանձնահատկությունները, ինչն էլ ստիպում է արագացնել այդ երկրամասում վարչատարածքային բաժանումների իրականա-

ցումը[9]: Նրան ի պատասխան՝ Ն. Ադոնցն ընդգծում է, որ Հանձնաժողովի կողմից ընտրական իրավունքի կարգի հիմնական սկզբունքների կիրառումը ծայրերկրամասերում կհեշտացնի Հատուկ Խորհրդակցության աշխատանքները և կհանգեցնի ծայրերկրամասերում վարչական տարածքների հստակեցմանը:

Մտքերի փոխանակությունից հետո առաջարկներն ամփոփելով Մ.Մ. Վինավերն ասում է, որ Հանձնաժողովն ընտրությունների կազմակերպման համար պետք է տա երկու արմատական հարցի լուծում.

1) ելնելով Սահմանադիր ժողովի ընտրությունների կազմակերպման հիմնական սկզբունքների կիրառության փաստից, հնարավո՞ր է արդյոք թույլատրել երկար ձգվածություն ունեցող երկրամասերում համամասնական ընտրակարգ՝ հստակեցնելով վիճակագրական տվյալները,

2) ընտրություններին համամասնական ընտրակարգ կիրառելու դեպքում որ տարածաշրջանների վարչատարածքային միավորների փոփոխություններն ընդունելի կլինեն ընտրական շրջանների ձևավորման համար[10]:

Առաջին կետը գլխավորապես վերաբերում էր Ռուսաստանի Հեռավոր Արևելքին, որտեղ համամասնական ընտրակարգի կիրառումը դժվարությունների կհանդիպեր ընդարձակ տարածություններում նոսր ազգաբնակչություն ունենալու հետևանքով, իսկ երկրորդ կետը՝ Կովկասին, որտեղ ընտրությունները պետք էր այնպես կազմակերպել, որպեսզի խառն ու անհամաչափ բաշխված ազգաբնակչության կողմից միջադեպեր չլինեին: Հարցի լուծման համար Մ. Վինավերն առաջարկում է ընտրա-

[9] Նույն տեղում, թ. 7:
[10] Նույն տեղում, թ. 8–9:

կան շրջանները կազմավորելիս կա՛մ փոխել գոյություն ունեցող վարչատարածքային միավորները, կա՛մ էլ ամբողջ Անդրկովկասից կազմավորել մեկ ընտրական շրջան՝ առանց սահմանաբաժանումների իրականացման:

Հաջորդ նիստը տեղի է ունենում հունիսի 8-ին, որին, բացի հիմնական կազմից, մասնակցում էին Հատուկ Խորհրդակցության նախագահ Ֆ. Կոկոշկինը, անդամներ Ն. Լազարևսկին, Յ. Գոլդմանը, Ու. Խոջաևը, Ա.Ի. Ծերեթելին, Ն. Վինոգրադսկին, Ա. Նամիտոկովը, իսկ Գ. Եվանգուլովն այսուհետ Հանձնաժողովի նիստերին պետք է մասնակցեր որպես կովկասյան հարցերով մասնագետ:

Նիստի բացմանը Ֆ.Ֆ. Կոկոշկինը հայտնում է օրակարգի երկու հարցերը.

1) արդյոք տեղական կենցաղային, ազգային, էթնիկական և մշակութային առանձնահատկությունները թույլ կտան գոյություն ունեցող նահանգների սահմաններում կազմավորել ընտրական շրջաններ, թե պետք է վարչատարածքային փոփոխություններ կատարել, կամ էլ երկրամասում կազմավորել մեկ ընտրական շրջան,

2) հնարավոր է որոշ դեպքերում կովկասյան երկրամասում ընտրություններին կիրառել ոչ թե համամասնական, այլ մեծամասնական ընտրակարգ:

Առաջին հարցի վերաբերյալ ելույթ է ունենում Ն. Ադոնցը, ով գտնում է[11], որ իրենց առջև դրված ազգային և վարչատարածքային խնդիրների լուծման իրական ուղին Կովկասի բաժանումն է երկու ընտրական շրջանների՝ Հյուսիսային Կովկաս և

---

[11] Նույն տեղում, թ. 14:

Անդրկովկաս: Առաջինի դեպքում հնարավոր է անցկացնել համամասնական ընտրություններն առանց դժվարությունների: Հարցն անհամեմատ դժվար է Անդրկովկասի համար, քանի որ նրա 214.693 քառակուսի վերստ[12] տարածության վրա բնակվող խառը ժողովուրդների թիվը կազմում է 7.593.445 մարդ: Ամբողջ Անդրկովկասը բաժանված է 11 վարչատարածքային միավորների, որոնցից ոչ մեկը, բացի Թիֆլիսի նահանգից, չի բավարարում համամասնական ընտրությունների անցկացման նվազագույն պայմաններին: Նա առաջարկում է հարցի լուծման երկու տարբերակ: Առաջին տարբերակով ամբողջ Անդրկովկասն իր խայտաբղետ ազգաբնակչական կազմով կազմավորել մեկ ընտրական շրջան, որն ամենահարմարն է՝ հաշվի առնելով տեղական պայմանները, քանի որ համամասնական ընտրակարգի դեպքում հնարավորություն կտրվի յուրաքանչյուր ժողովրդի, յուրաքանչյուր կուսակցության ունենալ իրենց ներկայացուցիչները Սահմանադիր ժողովի կազմում, այդ թվում Անդրկովկասով մեկ ցրված ռուս ազգաբնակչությանը հնարավորություն կընձեռնվի երկրամասից ընտրել իրենց շահերը ներկայացնող երկու պատգամավոր: Երկրորդ տարբերակով՝ ելնելով ազգային սկզբունքներից, առաջարկում էր Անդրկովկասը բաժանել երեք ընտրական շրջանների՝ կատարելով վարչատարածքային փոփոխություններ[13]: Առաջին կամ թաթարական ընտրական շրջանում առաջարկում էր ընդգրկել Դաղստանի մարզը, Բաքվի նահանգը, Զաքաթալայի շրջանը, Ելիզավետպոլի նահանգի Նուխիի և Արեշի գավառները, որի ընդհանուր տարածքը կկազմեր 69.876 քառակուսի վերստ՝ 2.241.023 ազգաբնակչությամբ, երկրորդ

---

[12] 1 քառակուսի վերստը համապատասխանում է 1,1381 կմ²:

[13] ГАРФ, ф. 1811, оп. 1, д. 232, л. 3.

կամ հայկական շրջանում՝ Ելիզավետպոլ նահանգն առանց Նուխիի և Արեշի գավառների, Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի և Բորչալուի գավառները, Կարսի մարզի Կարսի և Կաղզվանի գավառները, Երևանի նահանգը, որի ընդհանուր տարածքը կկազմեր 73.325 քառակուսի վերստ՝ 2.540.000 ազգաբանկչությամբ, երրորդ կամ վրացական շրջանում՝ Թիֆլիս նահանգն առանց վերոհիշյալ երկու գավառների, Քութայիսի նահանգը, Բաթումի մարզը, Կարսի մարզի Օլթիի և Արդահանի գավառները, Սևծովյան նահանգը, որի ընդհանուր տարածքը կկազմեր 71.883 քառակուսի վերստ, իսկ ազգաբնաչության թիվը՝ 2.540.000: Ն. Ադոնցը գտնում էր, որ այդ կերպ առաջին հերթին հավասարություն էր մտցվում ազգությունների միջև տարածքային, ազգաբնակչության թվի և ազգային պատկանելության առումով:

Ն. Ադոնցի առաջարկի վերաբերյալ Ի. Տոլմաչովն ասում է, որ անկասկած Ռուսաստանի ծայրերկրամասերում պետք է փոխել վարչատարածքային բաժանումները, որոնք կատարվել են անարդար հիմունքներով, անհամաչափ են և անհավասար, սակայն կասկածի տակ է դնում ընտրություններից առաջ սահմանների փոփոխությունների նպատակահարմարությունը, քանի որ առաջարկված վարչատարածքային բաժանման արդյունքում մեծ թվով ազգային փոքրամասնություններ կբնակվեն ձևավորվող ազգային տարածքներում, ինչն էլ, իր հերթին, ազգամիջյան բախումների կհանգեցներ և բացասաբար կանդրադառնար ընտրությունների անցկացման վրա[14]:

Մ. Աճեմովը դեմ է արտահայտվում Ն. Ադոնցի առաջարկին՝ գտնելով, որ ծրագիրը չի համապատասխանում անդրկովկաս-

---

[14] ГАРФ, ф. 1811, оп. 1, д. 219, л. 14.

յան ազգությունների շահերին, առաջարկված երեք շրջաններն անհամաչափ են և չեն համապատասխանում էթնիկ սահմաններին: Նա առաջարկում է Անդրկովկասի համար կազմել մեկ ընտրական շրջան, որի դեպքում անդրկովկասյան ազգություններին, հատկապես ռուսներին, հնարավորություն կընձեռնվեր ընտրելու իրենց պատգամավորներին, ինչը հնարավոր չի լինի Ադոնցի առաջարկի դեպքում, իսկ Դաղստանի մարզն առաջարկում էր միավորել Թերեքի մարզին:

Հյուսիսային Կովկասի ներկայացուցիչ Ա. Նամիտոկովը ևս դեմ է արտահայտվում Ադոնցի ծրագրին՝ գտնելով, որ Անդրկովկասի բաժանումը երեք շրջանների բխում է միայն գլխավոր ազգությունների շահերից՝ առաջարկելով մտածել ազգային փոքրամասնությունների շահերի մասին, օրինակ բերելով 15000 բնակչություն ունեցող չերքեզներին, որոնք պատգամավորական մանդատ ունենալուց կզրկվեն, միաժամանակ առաջարկելով Կովկասը բաժանել երկու ընտրական շրջանների՝ Հյուսիսային Կովկասը՝ Դաղստանով և Անդրկովկասն ամբողջությամբ, որոնք կլինեին հավասար և՛ իրենց տարածքով, և՛ ազգաբնակչության թվով:

Առաջարկությունների վերաբերյալ Ֆ. Կոկոշկինը հայտնում է, որ պետք է ընտրեն այն տարբերակը, որն ամենաընդունելին կլինի՝ ավելացնելով, որ վարչատարածքային նոր բաժանումների մեջ վտանգայնություն և սպառնալիքներ է տեսնում, քանի որ այն կարող է հանգեցնել ազգությունների միջև հարաբերությունների լարմանն ու սրացմանը, իսկ գոյություն ունեցող վարչատարածքային միավորների անհամապատասխանության, անհամաչափության և անհավասարության հետևանքով հնարավոր չի լինի կազմակերպել ընտրությունները համամասնական ընտրա-

կարգով, ուրեմն մնում է ամբողջ Անդրկովկասից կազմավորել մեկ միասնական ընտրական շրջան, որի դեպքում առաջացող տեխնիկական և տեղագրական խոչընդոտները հաղթահարելի են: Այսպիսով, նա առաջարկում էր Անդրկովկասից կազմել մեկ միասնական ընտրական շրջան՝ առանց Դաղստանի մարզի և Սևծովյան նահանգի, որոնցից առաջինը պետք է միանար Հյուսիսային Կովկասին, իսկ երկրորդը կազմեր առանձին ընտրական շրջան՝ մեծամասնական ընտրակարգով՝ մեկ պատգամավորական մանդատի իրավունքով:

Հատուկ Խորհրդակցության անդամ Ն. Լազարևսկին[15] իր խոսքում հայտնում է, որ մինչ այդ պատմության մեջ չի եղել այնպիսի նախադեպ, որ ընտրական շրջանը լինի Անդրկովկասի նման ընդարձակ, որտեղ ազգաբնակչությունը լինի այդքան բազմակազմ, մեծ թվաքանակով, տեղագրական, մշակութային, կենցաղային և բազմաթիվ այլ տարբերություններով, որոնք դժվարություններ և խոչընդոտներ կստեղծեն ընտրությունների կազմակերպման համար: Այդ ամենի պատճառը նա տեսնում էր գոյություն ունեցող վարչատարածքային միավորների անհավասար, անարդար բաժանման մեջ, բայց միևնույն ժամանակ գտնում էր, որ նոր վարչատարածքային բաժանումները կբորբոքի Անդրկովկասում ժողովուրդների կրքերը, գլուխ կբարձրացնեն ազգայնական տարրերը՝ տապալելով ընտրությունները: Այդ պատճառով էլ համաձայնվում է Ֆ. Կոկոշկինի առաջարկին՝ Անդրկովկասում կազմավորել մեկ ընտրական շրջան՝ առանց Դաղստանի մարզի և Սևծովյան նահանգի:

---

[15] Նույն տեղում, թ. 16:

Վրաց սոցիալ-ֆեդերալիստ Ա. Ծերեթելին[16] նախ ողջունում է պրոֆեսոր Ն. Ադոնցի՝ Անդրկովկասն ազգագրական սկզբունքով բաժանելու առաջարկը, որով ըստ նրա, ապահովվում էր անդրկովկասյան երեք գլխավոր ազգությունների ներկայացուցիչների ամբողջական ներգրավվածությունը գործընթացներին իրենց ազգագրական սահմաններում, ապա ավելացնում է, որ տարածքների համախմբումն ըստ ազգային պատկանելության մեծ կարևորություն ունի Անդրկովկասում ազգային հարցի լուծման համար, որը համարվում է հեղափոխության և Սահմանադիր ժողովի առջև ծառացած ամենամեծ մարտահրավերներից մեկը: Նա դեմ է արտահայտվում Անդրկովկասում մեկ ընտրական շրջան կազմելու առաջարկին, քանի որ գտնում էր, որ այն բխում է ռուս ազգաբնակչության շահերից, իսկ Սահմանադիր ժողովը պետք է լուծի ազգային հարցը, և եթե այն չլուծվի, ապա հեղափոխությունը վտանգված կլինի, և որ վրաց սոցիալ-ֆեդերալիստները, որպես վրաց ազգի կամքն արտահայտողներ, ցանկանում են ոչ թե անջատվել, այլ Ռուսաստանի կազմում ունենալ ինքնավարություն:

Հանձնաժողովի անդամ Ն. Ֆրիդմանն առաջարկում է հարցի վերջնական լուծման համար ներկայացուցիչներ հրավիրել անդրկովկասյան մուսուլմաններից: Մ. Աճեմովի առաջարկությամբ որոշվում է սպասել նրանց մինչև հունիսի 15-ը: Նույն օրը Ֆ. Կոկոշկինի և Համառուսաստանյան մուսուլմանական խորհրդի նախագահ Ա. Ծալիկովի կողմից առանձին-առանձին հեռագրեր են ուղարկվում Բաքվի մուսուլմանական հասարակական կազմակերպությունների ժամանակավոր կոմիտե՝ մինչև հունիսի

[16] Նույն տեղում, թ. 17:

14-ը Պետրոգրադ պատվիրակներ ուղարկելու համար: Բաքվում պատվիրակ են ընտրում Ֆ. Խան-Խոյսկուն, ով ժամանելու էր հունիսի 23-ին: Մինչ այդ որոշվում է նրանց կողմից, որպես ներկայացուցիչ թույլատրել Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցել Պետրոգրադում կովկասյան մուսուլմանների կենտրոնի ներկայացուցիչներ Ա. ա. Շեյխ ուլ Իսլամովին և Մ. բ. Վեքիլովին[17]:

Հանձնաժողովն Անդրկովկասում ընտրական շրջանների կազմավորման վերաբերյալ քննարկումները շարունակում է հունիսի 16-ի հինգերորդ նիստի ժամանակ: Հանձնաժողովի հիմնական կազմից բացի, նիստին ներկա էին Գ. Եվանգուլովը, Գ. Խատիսյանը, Լ. Աթաբեկյանը, Շ. Էլիավան, Գ. Լորդկիպանիձեն, Զ. Ավալովը, Ա. ա. Շեյխ ուլ Իսլամովը և Մ. բ. Վեքիլովը[18]:

Նիստի բացմանը հանձնաժողովի նախագահն անդրադառնում է Ն. Ադոնցի կողմից առաջարկված ծրագրի բովանդակությանը և դեմ ու կողմ արտահայտված կարծիքներին, այնուհետև նոր առաջարկություններով հանդես են գալիս թաթար ներկայացուցիչներ Մ. բ. Վեքիլովն ու Ա. ա. Շեյխ ուլ Իսլամովը, վրաց սոցիալ-ֆեդերալիստ Գ. Լորդկիպանիձեն, վրաց բոլշևիկ Շ. Էլիավան, Հ.Յ. Դաշնակցության ներկայացուցիչ Գ. Խատիսյանը:

Մ. բ. Վեքիլովն առաջարկում է Ելիզավետպոլի նահանգն ընդգրկել Բաքվի նահանգի մեջ, կամ էլ մուսուլմաններով բնակեցված տարածքներն ամբողջությամբ միավորել մեկ ինքնուրույն միասնական ընտրական շրջանում: Մյուս թաթար պատ-

---

[17] Каспий, Баку, 16 июня, 1917, N 132.

[18] ГАРФ, ф. 1811, оп. 1, д. 219, л. 37.

վիրակ Ա. ա. Շեյխ ուլ Իսլամովն[19] առարկում է Ն. Ադոնցի ծրագրի դեմ այն պատճառաբանությամբ, որ մեծ թվով մուսուլմաններ կընդգրկվեն հայկական շրջանում, ինչը տեղիք կտա խժդժությունների և կլարի հարաբերություններն ազգությունների միջև՝ ավելացնելով, որ ինքը ևս կողմնակից է Անդրկովկասի միավորմանը մեկ ընտրական շրջանում, իսկ ընտրական շրջանների բաժանման անհրաժեշտության դեպքում առաջարկում է գոյություն ունեցող վարչատարածքային միավորների սահմաններում Անդրկովկասը բաժանել երեք ընտրական շրջանների՝ միավորելով հետևյալ նահանգներն ու մարզերը.

1) Երևանի, Բաքվի, Ելիզավետպոլի, Թիֆլիսի և Քութայիսի նահանգները,

2) Կարսի, Բաթումի մարզերը և Սուխումի շրջանը,

3) Զաքաթալայի շրջանը և Դաղստանի մարզը:

Վրաց ներկայացուցիչներ Զ. Ավալովն ու Գ. Լորդկիպանիձեն կողմնակից էին ընտրական շրջաններն ազգային սկզբունքներով կազմավորել՝ առաջարկելով ձևավորել երկու ընտրական շրջան՝ արևմտյան կամ վրացական և արևելյան կամ հայ-մուսուլմանական: Արևմտյան շրջանն ընդգրկում էր Բաթումի մարզը, Սուխումի շրջանը, Քութայիսի և Թիֆլիսի նահանգները առանց Ախալքալաքի և Բորչալուի գավառների, որոնք պետք է անցնեին հայկական շրջանին, իսկ արևելյան շրջանի հստակեցումը թողնում էին հայերին և մուսուլմաններին: Ավալովը կարծում էր, որ վաղ թե ուշ Անդրկովկասում պետք է լուծում տրվի ազգային հարցին, որը, ինչպես պարզվում է Սահմանադիր ժո-

[19] Նույն տեղում, թ. 38:

ղովի կազմակերպման համար տարվող աշխատանքների ընթացքում, ամենաբարդն է ամբողջ Ռուսաստանում[20]:

Վրաց բոլշևիկ Շ. Էլիավան գտնում էր, որ Սահմանադիր ժողովի ընտրություններին պետք է ներկայացվի ոչ թե առանձին-առանձին ազգությունների շահերը, այլ համապատասխանի համընդհանուր համապետական շահերին, ուստի վրաց ամբողջ սոցիալ-դեմոկրատների անունից հայտարարում է, որ իրենք չեն տեսնում անհրաժեշտություն Անդրկովկասը բաժանելու առանձին-առանձին ազգային շրջանների՝ առաջարկելով կազմավորել մեկ միասնական ընտրական շրջան:

Դաշնակցության ներկայացուցիչ Գ. Խատիսյանն իր ելույթում դեմ արտահայտվելով Ն. Ադոնցի ծրագրին, ասում է, որ ամբողջ հայ դեմոկրատիան միաձայն կողմ է Անդրկովկասը մեկ միասնական ընտրական շրջան կազմելուն, որն ինչպես համապետական, այնպես էլ առանձին ժողովուրդների դեմոկրատիայի շահերից է բխում: Պահի գլխավոր հրամայականը համարում է բոլոր ազգությունների հնարավորինս լիարժեք ներկայացվածությունը Սահմանադիր ժողովում, որը հնարավոր կլինի միայն Անդրկովկասը միասնական ընտրական շրջան կազմելու դեպքում: Նրա կարծիքով՝ ընտրական շրջանների կազմումն ազգագրական հիմունքներով և ազգային սահմաններում, կհանգեցներ ոչ թե կուսակցական, այլ ժողովրդական թեկնածուների ընտրվելուն[21]: Այսինքն՝ ազգային սկզբունքով վարչատարածքային միավորներից ընտրական շրջաններ կազմելու Ադոնցի ծրագիրը չէր բխում Դաշնակցություն կուսակցության շահերից, քանի որ նրանք մեծ ընտրազանգված էին կորցնում այնպիսի հա-

[20] Նույն տեղում:

[21] Նույն տեղում, 39:

յաշատ քաղաքներում, ինչպիսիք էին Թիֆլիսը, Բաքուն, Ելիզավետպոլի լեռնային շրջանները և այլն:

Ընդհանրացնելով բոլոր առաջարկություններն ու ծրագրերը՝ որոշվում է քվեարկության դնել երեք բանաձևեր.

1) անդրկովկասյան երկրամասից կազմավորել մեկ ընդհանուր ընտրական շրջան,

2) ըստ Ն. Ադոնցի ծրագրի՝ Անդրկովկասը ենթարկել վարչատարածքային փոփոխությունների՝ կազմելով երեք ընտրական շրջաններ,

3) ըստ Զ. Ավալովի և Գ. Լորդկիպանիձեի ծրագրի՝ Անդրկովկասում գոյություն ունեցող վարչատարածքային միավորներից կազմել երկու՝ արևմտյան և արևելյան ընտրական շրջաններ[22]:

Քվեարկության արդյունքում առաջին բանաձևն ընդունվում է ձայների մեծամասնությամբ, հետևաբար մյուս երկու բանաձևերը քվեարկության չեն դրվում:

Հանձնաժողովի կողմից ընդունված բանաձևն ուղարկվում է Հատուկ Խորհրդակցության հաստատմանը, որի վերաբերյալ քննարկումներ են ծավալվում հունիսի 26-ին, 27-ին և 30-ին՝ համապատասխանաբար 15-րդ, 16-րդ և 17-րդ նիստերի ընթացքում[23]: Նոր քննարկումների պատճառ է հանդիսանում Անդրկովկասյան հատուկ կոմիտեի անդամ Ակակի Չխենկելու և Նոյ Ռամիշվիլու կողմից առաջարկված ծրագիրը, որով նախատեսվում էր Անդրկովկասից կազմել հինգ ընտրական շրջան: Այդ ծրագրին վրաց կուսակցությունների ներկայացուցիչներից բացի կողմ էին արտահայտվել նաև մուսուլմանները և հայ հնչակյան-

---

[22] Նույն տեղում, թ. 40:

[23] ГАРФ, ф. 1811, оп. 1, д. 42, л. 6–91.

ները[24]: Ծրագրով նախատեսվում էր առաջին շրջանի կազմում ընդգրկել Երևանի նահանգն ու Կարսի մարզը, երկրորդում՝ Բաթումի մարզը, Սուխումիի շրջանը և Քութայիսի նահանգը, երրորդում՝ Թիֆլիսի նահանգն ու Զաքաթալայի շրջանը, չորրորդում՝ Բաքվի նահանգը, իսկ հինգերորդում՝ Ելիզավետպոլի նահանգը: Այդ ծրագիրը ձեռնտու էր վրացիներին[25], քանի որ երկրորդ և երրորդ շրջաններում առավել համախմբված ազգային կազմ ունեին վրացիները: Ծրագիրն ընդունվում է հունիսի 28-ի Անդրկովկասյան հատուկ կոմիտեի նիստում, ինչի մասին հաղորդվում է Հատուկ Խորհրդակցությանը: Հատուկ Խորհրդակցության նիստին այդ ծրագիրն արժանանում է քննադատության գրեթե բոլոր քաղաքական ուժերի ներկայացուցիչների կողմից՝ բացառությամբ վրացիների: Չնայած այն հանգամանքին, որ Անդրկովկասյան հատուկ կոմիտեի մուսուլման անդամ Մամեդ Ջաֆարովն ու երկրամասի մուսուլմանական կառույցների ղեկավարները կողմ էին քվեարկել Ա. Չխենկելու և Ն. Ռամիշվիլու առաջարկած ծրագրին, Պետրոգրադում գտնվող մուսուլման պատվիրակներ Ա. ա. Շեյխ ուլ Իսլամովն ու Ֆ. Խան-Խոյսկին քննադատում են այդ ծրագիրը՝ պնդելով, որ իրենք կողմնակից են, որպեսզի Անդրկովկասից կազմվի մեկ միասնական ընտրական շրջան: Ա. ա. Շեյխ ուլ Իսլամովը նույնիսկ իր զարմանքն է արտահայտում վրացիների պահվածքից և երկակի դիրքորոշումից, որոնք մի կողմից ուզում են, որ բոլոր ազգությունները ներկայացված լինեն Սահմանադիր ժողովում, մյուս կողմից էլ Անդրկովկասն ընտրական շրջանների բաժանելով՝ ազգային փոքրամասնություններին զրկում են այդ հնարավորությունից,

[24] ЦГИА Грузии, ф. 2080, оп. 1, д. 506, л. 20.

[25] Армянский Вестник, Москва, 3 августа, 1917, N 32.

ապա նշում է, որ հայերն ու թաթարներն էլ են զրկվում, քանի որ Բաթումի, Սուխումի, Կարսի շրջաններում մեծ թվով մուսուլմաններ կան, իսկ Ախալքալաքի և Բորչալուի գավառներում՝ մեծ թվով հայեր:

Հատուկ Խորհրդակցության նիստին քվեարկության դնելով Ա. Չխենկելու ու Ն. Ռամիշվիլու և Ռուսաստանի ծայրերկրամասերում ընտրությունների կազմակերպման Հանձնաժողովի նախագծերը, ընդունվում է Անդրկովկասն առանց Դաղստանի և Սևծովյան նահանգի միասնական մեկ ընտրական շրջան կազմելու վերաբերյալ Հանձնաժողովի նախագիծը, ինչ մասին էլ հաղորդվում է Անդրկովկասյան հատուկ կոմիտեին:

Ամփոփելով շարադրանքը՝ ընդգծենք, որ պետրոգրադյան քննարկումները տևում էին բավականին երկար և անցնում են լարված պայմաններում, քանի որ այդտեղ բախվում էին տարբեր ազգությունների, կուսակցությունների, անհատների շահերը: Նիստի աշխատանքներին անուղղակի իրենց մասնակցությունն էին ունենում Անդրկովկասյան հատուկ կոմիտեի ներկայացուցիչները՝ վրաց-թաթարական մեծամասնության շնորհիվ ընդունված բանաձևերի տեսքով, որը հակառակ էր Հատուկ Հանձնաժողովի դիրքորոշմանն ու ընդունած որոշումներին: Նրանցից յուրաքանչյուրն ուզում էր իր շահերն առաջ տանել, սակայն հաղթում է կուսակցական և ռուսական շահերը ներկայացնող տարբերակը: Մյուս կողմից, եթե այդպես չլիներ, անդրկովկասյան ազգությունների համար հեշտ չէր լինի միմյանց հետ ընդհանուր համաձայնության գալ: Հետագայում չնայած վրացիների բազմաթիվ բողոքի նոտաների, որոշումը չի փոխվում և ընտրություններն անցկացվում են ընդունված որոշման համաձայն:

Айк Ш. Майтесян, *Институт истории НАН РА,* **Проблемы административно-территориального деления Закавказья в обсуждениях в Петроградских совещаниях (1917 г., июнь)** – По решению Временного Правительства от 25-го марта 1917 года с целью организации выборов Всероссийского Учредительного собрания было созвано Особое Совещание, на котором участвовали: из грузин – Е. Гегечкори, А. Церетели, Г. Лордкипанидзе, Ш. Элиава, З. Авалов, из армян – Г. Хатисян, Л. Атабекян, Н. Адонц, Я. Завриев, из татар – А. а. Шейх уль Исламов, М. б. Векилов, Ф. Хан-Хойский. Наряду с Особым Совещанием вскоре создаётся Комиссия по проведению выборов на окраинных территориях России. Одной из основных функций комиссии было определение приемлемости или неприемлемости изменений в административно-территориальном делении Закавказья при организации избирательных округов.

Для составления избирательных округов на заседаниях Комиссии обсуждались несколько вариантов проекта резолюции об изменении административно-территориальных границ Закавказья. После долгих прений, большинством голосов проходит проект резолюции, выдвинутый Ф. Кокошкином и М. Винавером. Принятая резолюция направляется на осуществление в Особый Закавказский комитет, Согласно резолюции в Закавказье должен был сформирован единый избирательный округ, без административно-территориальных изменений границ, оставляя окончательное решение вопроса на будущее.

Hayk Sh. Mahtesyan, *NAS RA Institute of History,* **Problems of administrative-territorial divisions of Transcaucasus in the discussions of the Petrograd meetings (1917 June)** – On the decision of the Provisional Government of March 25, 1917, in order to organize the elections of the All-Russian Constituent Assembly, a Special Council was convened, where from the Georgian side E. Gegechkori, A. Tsereteli, G. Lordkipanidze, Sh. Eliava, Z. Avalov, from the Armenian side G. Khatisyan, L. Atabekyan, N. Adonts, H. Zavriev, from the Tatar side A. a. Sheikh-ul-Islamov, M. b. Vekilov, F. Khan-Khoysky took part. Along with the Special Council, on June 1, 1917, a Commission was set up to conduct elections in the outlying territories of Russia, one of the main functions of which was to determine the acceptability or unacceptability of changes in the administrative-territorial division of Transcaucasia when organizing constituencies.

To draw up constituencies at the Commission's meetings, several options were discussed: draft resolution on changing administrative and territorial borders of Transcaucasia; suggested by N. Adonts, Z. Avalov and G. Lordkipanidze, A. Chkhenkeli and N. Ramishvili, F. Kokoshkin and M. Vinavera. After a long debate, the draft resolution put forward by F. Kokoshkin and M. Vinaver was adopted by a majority vote. The resolution was sent for implementation in the Special Transcaucasian Committee, according to which a single electoral district should be formed in the Transcaucasus without administrative-territorial changes, leaving decisions to be made for the future.

ԳԵՎՈՐԳ Է. ԿԵՍՈՅԱՆ
ԵՊՀ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Բանալի բառեր՝ Բանվորա-գյուղացիական տեսչություն, ԲԳՏ կազմավորումը, նպատակներ, կառուցվածք և աշխատանքային մեթոդներ, ԲԳՏ և տնտեսական քաղաքականությունը, գործունեության շրջանակներն ու իրավական հիմքերը, ԲԳՏ և այլ մարմինները:

Ազգային անկախ պետություններում խորհրդային իշխանության հաստատումից հետո դրա ամրապնդման և շարունակականության ապահովման համար մեծ տեղ էր հատկացվում վերահսկողության մարմինների ստեղծմանը և դրանց արդյունավետ գործունեությանը: Գործունեություն, որի շնորհիվ խորհրդային բարձրագույն մարմինների կողմից ընդունելի մտածողությունը պետք է դառնար ողջ ժողովրդի սեփականությունը և իրերի ըմբռնման առանցքը, ինչպես նաև պետական կառավարման հիմնասյունը: Խորհրդային Հայաստանում վերահսկողության համակարգն ընթացավ պետական և կուսակցական վերահսկողության մարմինների առանձին, ապա երկուսի համաձոյլ գործունեության սկզբունքով մինչև 1934 թ., որից հետո կտրուկ նվազեցվեց այդ մարմինների դերակատարությունը: Այս ժամանակահատվածում վերջիններս՝ համապատասխան պետությունում անցկացվող քաղաքականության և խորհրդային իշ-

խանության ամրապնդման գործընթացի ունեցան գործունեության ձևերի ու առաջնահերթ ոլորտների, նպատակների ու խնդիրների փոփոխություն:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից անմիջապես հետո առաջին քայլերն ուղղվեցին նոր իշխանության կառավարման մարմինների ձևավորմանը: Այդ գործընթացից, բնականաբար, չէր կարող դուրս մնալ վերահսկողության մարմինների՝ նորովի, ժամանակի և վարչակարգի ոգուն համապատասխան կազմավորումը: Եվ հենց 1920 թ. դեկտեմբերի սկզբին Հայաստանի առաջին հանրապետության վերահսկողության մարմինները վերցվեցին Հայաստանի հեղափոխական կոմիտեի վերահսկողության ներքո, և այնտեղ ուղարկվեց փորձված բոլշևիկ Մարտին Սահակյանը[1]: Այս քայլով էլ սկսվեց խորհրդային պետական վերահսկողության մարմնի կազմավորումը:

1921 թ. հունվարի 4-ին Հայաստանի հեղափոխական կոմիտեի նիստում քննարկվում և հավանության է արժանանում Մ. Սահակյանի՝ պետական վերահսկողության վերակազմակերպման մասին զեկուցումը[2]: Նույն օրը Հայհեղկոմի նախագահ Սարգիս Կասյանի ստորագրությամբ ընդունվում է «Պետական վերահսկողությունը ՀՍԽՀ Բանվորա-Գյուղացիական Տեսչության վերակազմելու մասին» դեկրետը[3]: Համաձայն այդ փաստաթղթի՝ պետական վերահսկողությունը կրելու էր Բանվորա-

---

[1] **Պողոսյան Շ.**, Բանգյուղտեսչությունը Հայաստանում սովետական իշխանության առաջին տարում (1921 թ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, N 3, էջ 160:

[2] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 128, ց. 1, գ. 96, թ. 46:

[3] ՀՍԽՀ դեկրետների եւ հրամանների ժողովածու, պրակ I, էջմիածին, 1921, էջ 49–51:

գյուղացիական տեսչություն անվանումը և ունենալու էր ժողովրդական կոմիսարիատի կարգավիճակ: ԲԳՏ ստեղծման՝ պետապարատի բարելավումն իրագործելու ընդհանուր նպատակը դեկրետը մասնավորեցնում և հանգեցնում էր հանրապետության տնտեսական կյանքի ու պետական կառավարման վերաբերյալ դեկրետների և որոշումների արագ ու նպատակահարմար կատարումն ապահովելուն, ինչպես նաև պետական վերահսկողության գործին աշխատավորական լայն զանգվածներին մասնակից դարձնելու անհրաժեշտությանը: ԲԳՏ-ին էին փոխանցվում նախկին պետական վերահսկողության բոլոր լիազորությունները և, որպես հավելում, նրա առաջ էր դրվում հետևյալ խնդիրների իրագործումը. «ա) Խորհրդային հիմնարկների մէջ պայքարել գործերի բիւրոկրատականութեան և ձգձգման դէմ. Ուժեղացնել նախնական, հետևական ու փաստական վերահսկողությունը. Կազմակերպել թռուցիկ վերստուգումներ և քննումներ Խորհրդային բոլոր մարմինների թէ՛ վարչական և թէ՛ տնտեսական կողմերի, նաև հասարակական կազմակերպութիւնների. Հսկել կենտրոնական իշխանութեան դեկրետների ու որոշումների իրագործմանը...

բ) Հսկել բոլոր հիմնարկութիւններում ամեն տեսակ գանգատների ու յայտերի ընդունելութիւնների կազմակերպմանը և նրանց կանոնատր ընթացքին, նաև կազմակերպել Բանտրա-Գիւղացիական Տեսչութեան կից յատուկ բիւրո՝ պաշտօնատար անձանց անկանոն գործողութիւնների, զեղծումների ու իրաւազանցումների վերոյիշեալ յայտերն ընդունելու համար:

գ) Ներկայացնել ի քննութիւն կենտրոնական և տեղական իշխանութիւնների՝ դիտումների և քննումների վրա հիմնատրուած առաջադրութիւն Խորհրդային իշխանութեան մարմինները

պարզ դարձնելու, աշխատանքի մեջ զուգահեռականութիւնն, անտնտեսութիւնն, դիւանական ձգձգումները վերացնելու մասին...

դ) Դատի ենթարկել պաշտոնատար անձերին զանցառութիւնների ու յանցանքների համար և առաջադրումներ անել համապատասխան իշխանութեանն այդպիսիներին պաշտօնից հեռացնելու մասին»[4]: Բանվորա-գյուղացիական տեսչության ժողկոմի տեղակալի պաշտոնում նշանակվում է Մ. Սահակյանը:

Դեկրետը սահմանում էր նաև, որ առանձին վարչություններին, կազմակերպություններին և ձեռնարկություններին կից գոյություն ունեցող վերահսկման գործառույթներ ունեցող մարմիններն անցնում են ԲԳՏ-ի իրավասության տակ և գործելու են վերջինի նպատակներին համապատասխան[5]:

Չնայած պետական համակարգի բարելավման նպատակադրմանը՝ սկզբնական շրջանում ժողկոմատը իր գործնական գործունեությունը կենտրոնացնում է ֆինանսա-տնտեսական գործունեության, գլխավորապես դրամարկղային-հաշվապահական քննությունների, պահեստների ստուգումների, հանրային ունեցվածքի պահպանության վրա: Անմիջապես ձեռնամուխ է լինում ՀՀ կառավարական նախկին մարմինների և տեսչությունների հաշիվների ու ծախսերի, պահեստների ստուգմանը, երկրում առկա ապրանքների հաշվառմանն ու պահպանմանը: Վերահսկողություն է սահմանվում գանձատան, բոլոր գանձարկղերի, ինչպես նաև ֆինանսական մարմինների վրա:

«Կոմունիստ» թերթի համարներից մեկում կարդում ենք. «Պետական օրգանների բիւջէների հաստատման և ծախսերի

---

[4] Նույն տեղում, էջ 50–51:

[5] Տե՛ս նույն տեղում, էջ 51:

օրինաւորութեանն ու կանոնաւորութեանը հետևելը թէպէտ բռնում է ԲԳՏ գործունէության մէջ կարևոր տեղ, բայց այնուամենայնիւ, դա համարում է նրա գործունէութեան ձևական կողմը:

Ինսպեկցիան (ԲԳՏ-ն – Գ.Կ.) նախ և առաջ նպատակ ունի հսկել երկրի նիթական հարստութիւնների, արտադրական ուժերի և միջոցների ռացիոնալ և համաչափ օգտագործման, բաշխման վրա»[6]: Նաև նշվում է, որ ստուգումների շնորհիվ ԲԳՏ-ն բացահայտում է պահեստներում պահված մթերքների առկայությունը, հետևում դրանց բռնագրավման և բաշխման գործընթացի ճիշտ կազմակերպմանը:

ԲԳՏ գործունեության վերը նշված առաջնահերթության մասին է վկայում նաև 1921 թ. ընդունված «Ստուգման կանոնադրություն»-ը, որն ամբողջովին կառուցված էր պետական սեփականություն հանդիսացող միջոցների, գույքերի և գումարների ստուգման, հաշվառման և պահպանման եղանակների շուրջ[7]:

ԲԳՏ այդպիսի նպատակադրումը միանգամայն հասկանալի է դառնում, երբ այն համադրում ենք երկրում անցկացվող տնտեսական քաղաքականության հետ: Այս շրջանում Խորհրդային Հայաստանում գործադրվում էր ռազմական կոմունիզմի տնտեսական քաղաքականությունը, որի հիմքում ընկած էր պարենամսնատրումը, որն էլ իրենից ներկայացնում էր մթերքների ավելցուկի բռնագրավում բնակչությունից: Հասկանալի է, որ բռնագրավման ընթացքի ճիշտ կազմակերպման և նրա արդյունքների կառավարման համար անհրաժեշտ էր համապատասխան մարմինների կողմից հսկողության իրականացում:

---

[6] «Կոմունիստ», Երևան, 4 փետրվարի 1921, N 47, էջ 3:
[7] ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 105, թթ. 1-17:

ԲԳՏ կառուցվածքն անմիջապես և ամբողջովին վերակազմելու համար համապատասխան կադրեր և հնարավորություններ չունենալու պատճառով գործողության մեջ են թողնվում նախկին պետական վերահսկողության կազմակերպական ապարատը և աշխատողները: ԲԳՏ ժողկոմի տեղակալի՝ 1921 թ. հունվարի 5-ի հրամանում ասվում է. «Առաջարկում եմ նախկին պետական վերահսկողութեան բոլոր պաշտոնեաներին մինչև Բանվորա-գիւղացիական տեսչութեան շտատների կազմակերպելը մնալ իրենց տեղերում և կատարել իրենց պարտականութիւնները»[8]: Հրամանն արդեն իսկ հստակ ասում է, որ պետական վերահսկողության նախկին աշխատողների գործունեությունը ԲԳՏ-ում ժամանակավոր է և տևելու է մինչև կազմակերպական հարցերի լուծումը: Կարճ ժամանակ անց՝ 1921 թ. հունվարի 17-ին, ընդունվում է հրաման, որով «նախկին ՀՀ Պետական վերահսկողության բոլոր պաշտոնյաները այդ օրվանից համարվում էին ազատ իրենց պաշտոններից»[9]: Նշենք, որ հրամանը չիրագործվեց միանգամից, և նախկին պաշտոնյաներից ոմանք շարունակեցին իրենց գործունեությունը ԲԳՏ-ում: Վերջինների դեմ ուղղված նոր հրաման ընդունվեց 1921 թ. փետրվարի 8-ին: Հրամանում «առաջարկվում» էր ԲԳՏ-ում աշխատող նախկին պետական վերահսկողության բոլոր աշխատակիցներին «մի օրվա ընթացքում հանձնել դիվանին իրենց մոտ գտնված պետական գույքերը, գրքերը, պապկաները և այլ իրերը: Հանցառուները կհանձնվեին հեղափոխական տրիբունալին՝ մեղադրվելով պետական գույքերը սեփականացնելու մեջ»[10]:

---

[8] Նույն տեղում, գ. 3, թ. 1:
[9] Նույն տեղում, թ. 2:
[10] Նույն տեղում, թ. 6:

1921 թ. հունվարի 8-ին ընդունված Կոմիսարիատի հրամանով սահմանվում է ԲԳՏ կառուցվածքը, իսկ հունվարի 17-ին նշանակվում են բաժինների ղեկավարները: Ժողկոմատում գործելու էին 7 բաժիններ: Զինվորական բաժինը վերահսկելու էր զորամասերն ու զինվորական հիմնարկները (բաժինը ղեկավարելու էր Իվան Վասիլևիչը), ֆինանսա-պարենավորման բաժինը՝ ֆինանսավորման և պարենավորման ժողկոմատների գործունեությունը (բաժնի վարիչ՝ Հ. Խորենյան), 3-րդ բաժինը՝ սոցիալական ապահովության, առողջապահության և լուսավորության ժողկոմատների գործունեությունը (բաժնի վարիչ՝ Ռ. Ենգիբարյան), 4-րդ բաժինը՝ ժողտնտեսության և հողագործության ժողկոմատի գործունեությունը (բաժնի վարիչ՝ Բ. Հասան-Ջալալյան), 5-րդ բաժինը՝ փոստ-հեռագրական և աշխատանքի ժողկոմատների գործունեությունը (բաժնի վարիչ՝ Ի. Ստանիսլասովիչ Պոդչասկի), 6-րդ բաժինը՝ արդարադատության, ներքին գործերի, արտաքին գործերի ժողկոմատները (բաժնի վարիչ՝ Գ. Տեր-Իսահակյան), 7-րդ բաժինը (բաժնի վարիչ՝ Ս. Ճգնավորյան) ԲԳՏ ղեկավարությունն էր, որը բաժանվում էր 3 բաժանմունքների՝ քարտուղարության և ֆինանսատնտեսական, կազմակերպչա-հրահանգչական, գանձատների[11]: ԲԳՏ բարձրագույն ղեկավարությունը գտնվելու էր ժողկոմի, նրա տեղակալի և ժողկոմի նախագահությամբ գործող կոլեգիայի ձեռքում:

1921 թ. հունվարի 26-ին Հայհեղկոմը որոշում է կայացնում, որով բոլոր ժողկոմատներին պարտավորեցնում է իրենց կարևոր որոշումների ու հրամանների պատճեններն ուղարկել ԲԳՏ-ին[12]: Այս հանգամանքը վկայում է օրինականության վե-

---

[11] Նույն տեղում, թ. 1:

[12] Նույն տեղում, գ. 2205, թ. 26:

բահսկման ասպարեզում ԲԳՏ գործունեությանը բացառիկ կարևորություն տալու մասին: Այս կերպ ԲԳՏ-ն մի կողմից ստուգելու էր այդ որոշումների և հրահանգների համապատասխանությունը բարձրագույն իրավական ուժ ունեցող ակտերին, մյուս կողմից դրանք կիրառելու էր իր ստուգումների ընթացքում՝ նվազեցնելով սխալվելու հավանականությունը:

1921 թ. փետրվարի 2-ին, ի կատարում ԲԳՏ ստեղծման մասին Հայհեղկոմի կողմից ընդունված վերը նշված դեկրետի 4-րդ կետի, ընդունվում է հրաման «Բանվորա-Գյուղացիական Տեսչությանը կից բողոքների ընդունելության բյուրոյի մասին», որով ստեղծվում էր հատուկ բյուրո՝ նպատակ ունենալով ստանալ հայտարարություններ և բողոքներ պաշտոնատար անձանց կողմից կատարված ապօրինի գործողությունների, իրավազանցությունների և զեղծարարությունների մասին[13]: Բողոքների բյուրոն ԲԳՏ գործունեության ողջ ընթացքում պետության բոլոր ոլորտների գործունեության վերաբերյալ ժողովրդի դժգոհությունները լսելու առումով կարևոր դեր ունեցավ:

Բողոքների բյուրո դիմում կարող էին ներկայացնել անխտիր բոլոր քաղաքացիները՝ անկախ կուսակցական պատկանելությունից. բողոքի համար գումար չէր գանձվելու: Բողոք կարելի էր ներկայացնել անձամբ և փոստի միջոցով, բանավոր կամ գրավոր կերպով: Բողոք կարող էին ներկայացնել ոչ միայն տուժողները, այլ նաև այն բոլոր հիմնարկություններն ու անձիք, որոնք որևէ վնաս չէին կրել բողոքի առարկա գործողությունից[14]: Բողոք չէր կարելի ներկայացնել միայն Հայհեղկոմի և դատական մարմինների որոշումների դեմ: Նշենք, որ բողոքներ կարող էին

---

[13] ՀՍԽՀ դեկրետների եւ հրամանների ժողովածու, պրակ I, էջ 101:

[14] Նույն տեղում, էջ 101–102:

տրվել առանց բողոքատուի անձնական տվյալների նշման: Դեկրետը պատասխանատվություն չէր սահմանում կեղծ բողոքների համար, որի պատճառով հաճախ հարուցվում էին անհիմն բողոքներ:

Այսպիսով՝ ստեղծվում էր մի մարմին, որը ժողովրդի միջոցով տեղեկություններ էր ստանում հասարակության ներսում կատարվող իրադարձությունների մասին և համապատասխան լծակների միջոցով ձեռնարկում անհրաժեշտ քայլեր՝ կատարվելիք գործողությունները խորհրդային օրենքների ոգուն ու տառին համահունչ դարձնելու համար: Մյուս կողմից, պաշտոնյաներին «հսկելով», հասարակ ժողովուրդը ծանոթանում էր այդ օրենքներին և «դաստիարակվում» դրանց թելադրանքին համապատասխան:

Կազմակերպական սկզբնական քայլերից շատ չանցած ընդհատվում է ԲԳՏ գործունեությունը: 1921 թ. փետրվարյան ապստամբության ժամանակ դադարեցվում է ինչպես բոլոր խորհրդային հիմնարկների, այնպես էլ ԲԳՏ ժողկոմատի գործունեությունը: Այն վերականգնվում է ապստամբության ճնշումից հետո և ընդունած առաջին իսկ հրամանով հստակեցնում է անցած շուրջ 2 ամիսների ընթացքում կատարված փոփոխությունների նկատմամբ վերաբերմունքը: Հրամանում նշվում էր. «ԲԳՏ բոլոր պաշտոնյաներին հրամայում եմ մնալ իրենց պաշտոններում և կրել իրենց նախկին կոչումները: Ն[ախկին] պետական վերահսկողության բոլոր հրամանները համարել անվավեր: Փետրվարի 18-ից մինչև ապրիլի 3-ը ընդունված պաշտոնյաները համարվում են արձակված՝ վերապահելով ռոճիկով բավարարվելու իրավունքը: Մինչև ապրիլի 3-ը տրված բոլոր վկայականները պաշտոնյաներին համարվում են անվավեր»[15]: Վե-

[15] ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 3, թ. 7:

ռաձևավորումից հետո ԲԳՏ ժողկոմատում աշխատանքի անցան Զ. Աշրաֆյանը, Ս. Լալայանը, Ա. Ապրեսյանը և ուրիշներ, որոնք հայտնի բոլշևիկներ էին և խնդիր ունեին աշխուժացնելու ժողկոմատի գործունեությունը:

Պետական վերահսկողության մեջ նոր փոփոխություններ են կատարվում 1921 թ. մայիսին: Մայիսի 15-ի ԲԳՏ ժողկոմի հրամանով փոփոխություններ են կատարվում ԲԳՏ կառուցվածքում: Նախկին 7 բաժինները վերակազմավորվում են 6 բաժինների, դրանց թվում ընդգրկվում է բողոքների և հայտարարությունների ընդունման բաժինը[16]: Ալեքսանդր Մյասնիկյանի՝ Հայաստան գալուց հետո վերակազմավորման է ենթարկվում ժողկոմխորհը: 1921 թ. մայիսի 21-ին հաստատվում է նոր կառավարության կազմը: ԲԳՏ ժողկոմի պաշտոնում նշանակվում է Ալեքսանդր Շահվերդյանը[17]:

ԲԳՏ ժողկոմատի գործունեության ոլորտների և խնդիրների հստակեցման առումով կարևոր նշանակություն ունեցավ նրա կանոնադրության ընդունումը: 1922 թ. հոկտեմբերին Հայաստանի Կենտգործկոմն ու ժողկոմխորհը հաստատում և հրապարակում են ԲԳՏ կանոնադրությունը: 1922 թ. նոյեմբերի 3-ի ԲԳՏ կոլեգիայի նիստում քննարկվում է կանոնադրության հարցը և ընդունվում որոշում հետևյալ ձևակերպմամբ. «ընդունել ի գիտություն և ի գործադրություն նոր ստացված կանոնադրությունը»[18]: Ինչպես տեսնում ենք, ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի կողմից ընդունված կանոնադրությունը բավական ուշացումով է սկսում գործադրվել,

---

[16] Նույն տեղում, թ. 15:

[17] **Պողոսյան Շ.**, Լենինյան վերահսկողությունը գործողության մեջ, Ե., 1978, էջ 30:

[18] ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 13, թ. 14:

որը, կարծում ենք, անթույլատրելի էր գործերի օրինականությունը վերահսկող մարմնի համար:

Համաձայն կանոնադրության՝ ԲԳՏ-ն ՀՍԽՀ պետական ձեռնարկների և հիմնարկների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների գործունեությունը վերահսկող միակ մարմինն էր: Նշենք, որ կանոնադրությունը ևս ակնհայտ է դարձնում տնտեսական ոլորտի վերահսկման առաջնահերթությունը: ԲԳՏ-ն պետք է քննության ենթարկեր հիմնարկների, ձեռնարկությունների եկամուտներն ու ծախսերը, ծավալած տնտեսական գործունեության նպատակահարմարությունը, ֆինանսական, նյութական և տնտեսական պլանների իրականացումը, պետական բյուջեի նախագիծը և բազմաթիվ այլ հարցեր[19]:

Մյուս կարևոր խնդիրը, որ դրվում էր ԲԳՏ-ի առաջ, օրինականության վերահսկումն էր: Սա մի միջոց էր, որ պետք է ապահովեր խորհրդային կարգերի հաստատման սահունությունը: ԲԳՏ-ն պետք է հետևեր խորհրդային իշխանության բոլոր դեկրետների, կանոնակարգերի և հրամանների անշեղ կատարմանը, տնտեսության և կառավարման բոլոր ոլորտներում պետական ու հասարակական մարմինների գործողությունների և հրամանների օրինականությանն ու նպատակահարմարությանը[20]:

ԲԳՏ-ի առջև դրված մեկ այլ խնդիր էր պետական կառավարման կարողություն և խորհրդային մտածողություն ունեցող մարդու ձևավորումը: Այդ նպատակով ԲԳՏ-ն պարտավորվում էր ստուգման աշխատանքներում ներգրավել բանվորների և գյուղացիների լայն զանգվածների, իր կազմում ունենալ նրանցից ընտրված ներկայացուցիչներ և, որն ամենկարևորն էր,

---

[19] Նույն տեղում, գ. 5, թ. 5:

[20] Նույն տեղում:

բանվորների և գյուղացիների լայն զանգվածների համար կազմակերպել պետական կառավարման ձևի պարբերական ուսուցում[21]: Այս միջոցով պետք է ստեղծվեր այն մարդկային ներուժը, որը հնարավորություն կտար վերակազմելու խորհրդային կառավարման համակարգը:

Պետական պաշտոնյաների և հիմնարկների գործողությունների նկատմամբ ժողովրդական դժգոհությունը լսելու և այդ գործողությունների օրինականությունն ու նպատակահարմարությունը հետազոտելու համար շարունակելու էր գործել Բողոքների բյուրոն:

ԲԳՏ 1920–1922 թթ. հաշվետվության մեջ կանոնադրությամբ սահմանված ԲԳՏ գործունեության շրջանակները ևս բաժանվում են չորս խոշոր խմբերի՝ քննա-վերահսկողական գործունեություն, օրենսդրական գործունեություն, քաղաքացիների բողոքների ու հայտարարությունների ընդունում և դրանց քննության կազմակերպում, ժողովրդական զանգվածների դաստիարակություն[22]:

ԲԳՏ կանխարգելիչ և պատժիչ գործառույթների վերաբերյալ կանոնադրությունը սահմանում էր, որ ԲԳՏ-ն կարող է հիմնարկություններից պահանջել վերացնել կազմակերպության աշխատանքներում արձանագրված թերությունները, կասեցնել կամ դադարեցնել նրանց ընդունած ապօրինի որոշումները, պաշտոնյաներին հեռացնել զբաղեցրած պաշտոններից, կատարել նկատողություն և դիտողություն, հանցավորների նկատմամբ հարուցել դատական վարույթներ, նշանակել տուգանք-

---

[21] Նույն տեղում:

[22] Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1920–1922 թթ. հաշվետվություն, Ե., 1923, էջ 201–202:

ներ[23]: Միաժամանակ ԲԳՏ-ն իր կատարած հետազոտությունների ընթացքում հայտնաբերած բացթողումների, անճշտությունների, անօրինությունների վերացման, աշխատանքի ընթացքի պարզեցման և բարելավման նպատակով պետք է ներկայացներ համապատասխան առաջարկություններ:

Օրինականության վերահսկման բնագավառում կարծես հատվում էին ԲԳՏ-ի և դատական մարմինների իրավասությունները: Այդ իրավասությունների սահմանազատման համար ԲԳՏ և Արդարադատության ժողկոմները 1922 թ. ընդունում են հրահանգ, որը, սակայն, ամբողջովին չի սահմանում երկու մարմինների գործունեությունների բաժանարար գիծը: Համաձայն հրահանգի՝ դատական մարմինների որոշումները պարտադիր են բոլոր մարմինների, այդ թվում՝ ԲԳՏ-ի համար: Վերջինը չէր կարող կասեցնել դատական որոշումները: Բոլոր հայցերը և պահանջները, որոնք վերաբերում էին անձանց կամ հիմնարկներին հասցված վնասների հատուցմանը, քննվելու էին դատական կարգով: Բանգյուղտեսչությունը, մասնավորապես Բողոքների բյուրոն, քննում էր բողոքների այն կողմը, որոնք վերաբերում են պաշտոնյաների չարաշահումներին[24]:

Տրամաբանական քննության ենթարկելով երկու մարմինների գործունեության շրջանակները՝ կարող ենք հանգել հետևյալ եզրակացությանը. դատական մարմինների դեպքում անհրաժեշտ է հայցի առկայություն, որպեսզի կազմակերպվի անհրաժեշտ քննությունը՝ անօրինականությունները և մեղավորներին բացահայտելու համար, իսկ ԲԳՏ-ի դեպքում վերջինն էր նախաձեռնում քննությունների կատարումը և կարող էր ցանկացած

---

[23] ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 5, թ. 5 և շրջ.:
[24] Նույն տեղում, գ. 114, թ. 3:

ժամանակ ստուգել ցանկացած կազմակերպություն և վերհանել թերություններն ու խախտումները: Նշենք նաև, որ ԲԳՏ-ն չուներ պատժի կիրառման այնպիսի համակարգ, ինչպիսին վերապահված էր դատարաններին:

ԲԳՏ-ին վերապահված էր մեկ այլ լիազորություն ևս՝ քննել գործը նաև նպատակահարմարության դիտանկյունից: ԲԳՏ նման իրավասությունը թեև հնարավորություն էր տալիս ստուգելու գործողությունների համապատասխանությունը իշխող գաղափարախոսությանը, սակայն այն, ըստ էության, հակաժողովրդավարական, հակահիրավական լիազորություն էր, քանի որ այս դեպքում որևէ մեկը երաշխավորված չէր լինում, որ իր արարքը չի որակվի աննպատակահարմար, և ինքը պատասխանատվության չի ենթարկվի: Նպատակահարմարությունն անորոշ եզրույթ էր, չէր հստակեցվում սկզբունքներ թելադրող իրավական ինչ-ինչ նորմերով:

ԲԳՏ-ն ուներ նաև մեկ այլ կարևոր գործառույթ, այն է՝ մշակել և ներկայացնել ծրագրեր՝ հիմնարկների, ձեռնարկությունների աշխատանքներում նկատված թերությունները վերացնելու և աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար:

ԲԳՏ-ում գործում էր իրավաբանական ենթաբաժին, որը եզրակացություն էր տալիս ընդունվող օրենքների, որոշումների, հրահանգների և իրավական այլ ակտերի վերաբերյալ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում տալիս էր դրանց կիրառման վերաբերյալ պարզաբանումներ: Միաժամանակ կարող էր մշակել առանձին ոլորտներ ու հարաբերություններ կարգավորող կանոնների, օրենքների և որոշումների նախագծեր:

ԲԳՏ գործունեության արդյունավետության և արդարացիության տեսանկյունից կարևոր էր ստուգում-հետազոտությունը

ների կարգի հստակեցումը: 1921 թ. ընդունված «Ստուգման կանոնադրություն» փաստաթղթով սահմանվում էր, որ ԲԳՏ ստուգումները բաժանվում են երկու խմբի՝ փաստաթղթային և փաստացի: Փաստաթղթային ստուգումներն իրենց հերթին բաժանվում են նախնական և հետագա ստուգումների խմբերի[25]: Փաստաթղթային ստուգումն իրենից ենթադրում էր կազմակերպությունների գործունեության ստուգում՝ համաձայն տվյալ կազմակերպության փաստաթղթերի, ակտերի և գրանցագրքերի բովանդակության: Փաստացի ստուգումն իրականացվում էր տեղերում, որի ժամանակ ստուգվում էին պահեստներում միջոցների, գույքի և գումարի ամբողջականությունն ու անվտանգությունը, գործողությունների ճշտությունը, իրական և փաստաթղթային ցուցանիշների նույնությունը[26]:

ԲԳՏ նախնական քննությանն էին ներկայացվում հաշիվների նախագծերը, տնտեսական և գնումների ծրագրերը, շինարարական կառուցումների տեխնիկական նախագծերը, տնտեսական ոլորտում առաջ քաշվող առաջարկությունները, գնի հաստատման վերաբերյալ գործերը և այլն[27]: Ժողկոմխորհի 1921 թ. նոյեմբերի 22-ի որոշմամբ ԲԳՏ-ին պետք է ներկայացվեին բոլոր պայմանագրերը՝ նախնական քննություն անցկացնելու, օրինականության և նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություններ տալու համար: Նախնական ստուգման շրջանակում ԲԳՏ ներկայացուցիչներն իրավունք ունեին խորհրդակցական ձայնով մասնակցելու բոլոր հիմնարկների, ձեռնարկութ-

---

[25] Նույն տեղում, գ. 105, թ. 1 շրջ.:

[26] Նույն տեղում:

[27] 1922 թ. հունվարի 1-ից դադարեցվում է ֆինանսական գործերի նախաքննության իրականացումը (ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 12, թ. 38):

յունների նիստերին և հանձնաժողովների աշխատանքներին[28]: Հետագա քննության ընթացքում ստուգվում էին գործունեության համապատասխանությունը հաշվետվությանը, արդյոք վերջիններում կատարվե՞լ են փոփոխություններ, թե՝ ոչ, ներքին գործավարության ճիշտ կազմակերպումը, կատարվե՞լ են ներկայացված առաջարկներն ու հրահանգները, վերացվե՞լ են աշխատանքներում նախկինում նկատված թերությունները և այլն[29]: Ստուգումների ընթացքում առանց խոչընդոտների ԲԳՏ-ին պետք է տրամադրվեին պահանջված բոլոր փաստաթղթերը:

ԲԳՏ-ն համագործակցային փոխհարաբերություններ էր ձևավորում տարբեր մարմինների հետ: Հատկապես ակտիվ էին կապերը Արհեստակցական միությունների խորհրդի հետ: Արհմիությունների խորհուրդը ԲԳՏ-ին էր ներկայացնում թեկնածուներ՝ ԲԳՏ բաժինների ղեկավարների, նրանց տեղակալների և ավագ տեսուչների պաշտոններում նշանակելու համար, ԲԳՏ էր գործուղում պրակտիկանտներ, որոնք պետք է ընդգրկվեին ԲԳՏ աշխատանքներում և ծանոթանային պետական կառավարման գործին: ԲԳՏ-ն ստուգումների ժամանակ կարող էր օգտագործել Արհմիության խորհրդի աշխատակիցներին: Միմյանց պետք է տրամադրեին տեղեկություններ, սոցիալիստական շինարարության, սոցիալիստական վերահսկողության հարցերի վերա-

---

[28] Երբեմն խախտվում էր միայն խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու պահանջը, և ԲԳՏ ներկայացուցիչները ստանում էին վճռական ձայնի իրավունք: Այս երևույթի դեմ էր ուղղված 1922 թ. սեպտեմբերի 7-ին հրապարակված ԲԳՏ շրջաբերականը, որով, ԲԳՏ ներկայացուցիչների ծանրաբեռնվածությունը և կազմակերպությունների թերություններին մեղուակից դառնալու հանգամանքները հաշվի առնելով, արգելվում էր նիստերի և հանձնաժողովների աշխատանքներին մասնակցել վճռական ձայնի իրավունքով (ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 12, թ. 7 և շրջ.):

[29] ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 105, թթ. 5–10 շրջ.:

բերյալ, կազմակերպեին դասախոսություններ և այլ միջոցառումներ, հանրայնացնեին ԲԳՏ նպատակները[30]:

Պետական վերահսկողության մարմնի կազմակերպական ամբողջությունն իր մեջ ընդգրկում է նաև տեղական մարմինների ձևավորումը: Դրա հիմքերը դրվել էին ԲԳՏ-ի ստեղծման մասին դեկրետով, որում ասվում էր. «Բանտրա-Գիուղացիական Տեսչութեանը իրաւունք է վերապահում իւր ծառայողների կողմից առաձին վարչութիւններին կից զանազան բայոններում հիմնել Տեսչութեան ներկայացուցչութիւններ՝ ծառայողների մի տեղից միւս տեղը փոխադրումներով»[31]:

ԲԳՏ-ի ներկայացուցչություններ ստեղծվում են Հայաստանի ողջ տարածքում: Նրանք գործելու էին գավիեղկոմներին, ապա գավգործկոմներին կից, սակայն իրենց հետազոտական աշխատանքներում լինելու էին նրանցից միանգամայն անկախ և ինքնուրույն: 1921 թ. հունվարի 24-ին առաջին այդպիսի բաժինն ստեղծվեց Էջմիածնի գավառում[32]: Նրանց նպատակն էր ապահովել կապը կենտրոնի և տեղերի միջև, տեղերում իրագործել ԲԳՏ-ի լիազորությունները: 1921 թ. հունիսի դրությամբ ԲԳՏ ժողկոմատը իր ներկայացուցչություններն ուներ Լոռիում, Ղարաքիլիսայում, Դիլիջանում, Նոր Բայազետում, Ալեքսանդրապոլում և Էջմիածնում[33]: Մինչև տարվա վերջ ներկայացուցչություններ կազմակերպեց նաև մյուս գավառներում:

ԲԳՏ գործունեության առաջին՝ կազմակերպական շրջանում նրա ամենամեծ թերությունը համապատասխան որակավորում

---

[30] Նույն տեղում, գ. 114, թ. 19 և շրջ.:

[31] ՀՍԽՀ դեկրետների եւ հրամանների ժողովածու, պրակ I, էջ 51:

[32] История Государства и права Советской Армении, книги первая, Е., 1974, էջ 103:

[33] «Խորհրդային Հայաստան», 3 հունիսի 1921, N 99, էջ 2:

ունեցող, անհրաժեշտ թվաքանակով աշխատակիցներ չունենալն էր: 1921 թ. կեսերին «Խորհրդային Հայաստան» թերթում հաղորդում է տպագրվում, որ «մասնագետների անհրաժեշտ քանակի բացակայությունը՝ վերաքննութեան տարբեր ճյուղերում, այլև պատրաստված աշխատակիցների չգոյությունը, ուժեղ կերպով կասեցնում է աշխատանքը: Ամենուրեք պաշտոնեանների թիվը թերի է»[34]: ԲԳՏ տեսուչների՝ 1923 թ. հուլիսի վերջերին կազմակերպված քննության արդյունքները ներկայացրեցին տխուր պատկեր: «Պարզվեց որ, ոչ միայն վերաքննչական պատրաստություն չունեն տեսուչները, այլ և ընդհանուր կրթական. նրանցից շատերը չեն ըմբռնել հաշվետվության, հաշվապահական վերաքննության հիմնական սկզբունքները, շատերը տեղյակ չեն քաղաքատնտեսական հարցերի հետ, խորհրդային շինարարության և օրենսդրության հետ»,- ասվում է ԲԳՏ 1923 թ. տարեկան հաշվետվության մեջ[35]:

Խնդիրներ կային նաև կարգապահական հարցերի առնչությամբ: ԲԳՏ աշխատակիցները պատշաճ չէին կատարում իրենց աշխատանքային պարտականությունները, հաճախակի էին ուշացումները, կանոնավոր չէր գործավարությունը:

Այսպիսով՝ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո իշխանական բարձրագույն մարմինների ձևավորման գործընթացում իր կարևոր տեղն է զբաղեցնում պետական վերահսկողության ժողկոմատի կազմավորումը: Այն ձևավորվում է Հայաստանի առաջին հանրապետության պետական վերահսկողության հիմքի վրա, ապա աստիճանաբար ենթարկ-

---

[34] Նույն տեղում:

[35] Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1922–1923 թթ. հաշվետվությունը, Ե., 1925, էջ 417:

վում կառուցվածքային վերափոխումների և համապատասխանեցվում կառավարման նոր համակարգի պահանջներին: Պետական վերահսկողության ժողովրդական կոմիսարիատը պետք է հսկողություն սահմաներ պետական, տնտեսական, հասարակական-քաղաքական և մյուս բոլոր ոլորտների վրա: Պետք է նպաստեր խորհրդային համակրգ ամրապնդմանը, ղեկավար պաշտոններ զբաղեցնելու համար անհրաժեշտ անձանց պատրաստմանն ու սերնդափոխության իրականացմանը, հետևեր օրենսդրական նորմերի ճշգրիտ կիրառմանը, խորհրդային մտածողությունը դարձներ յուրաքանչյուր քաղաքացու աշխարհըմբռնման հիմքը:

Геворг Э. Кесоян, *ЕГУ*, **Формирование народного комиссариата государственного контроля в Советской Армении** – Для утверждения и закрепления советских порядков в Армении, для укоренения советского менталитета в обществе сразу после советизации предпринимается формирование системы контроля. 4-го января 1921 года по указу Армревкома прежний государственный контроль реорганизуется в народный комиссариат рабоче-крестьянской инспекции. Посредством фактической и документальной проверки она должна была осуществлять контроль по отношению всех государственных структур, учреждений и предприятий. Имея цель совершенствование госаппарата, в начальный период внимание всецело было направлено на осуществление контроля над эконмической политикой. РКИ последовательно осуществляло также цель – «Воспитание советского человека».

Gevorg E. Kesoyan, *YSU,* **Formation of the People's Commissariat of State Control in Soviet Armenia** – Immediately after Sovietization the formation of control system was undertaken for establishment and consolidation of Soviet order in Armenia, for the rooting of Soviet mentality among the people. On January 4, 1921, due to the Decree of Armrevcom, the former state control was reorganized into People's Commissariat of Workers' and Peasants' Inspection. Through actual and documentary verification it was supposed to provide control over all state structures, institutions and enterprises, in general, over all ranges and spheres. Having the aim to improve the state apparatus, in the initial period the attention was entirely focused on providing control over economic policy. WPI consistently pursued another goal – "Education of the Soviet man".

ՄԱՐԻԱՄ Մ. ՀԱԿՈԲՅԱՆ
ԵՊՀ

ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1924–1930 ԹԹ.

Բանալի բառեր՝ Եվրոպայի հայոց թեմ, Գևորգ Ե կաթողիկոս, Եվրոպայի հայոց թեմի կանոնադրություն, հովվական վիճակ, Գրիգորիս Պալաքյան, մատուռներ, թեմական ընդհանուր ժողով, Թորգոմ Գուշակյան:

Առաջին համաշխարհային պատերազմից և Մեծ եղեռնից մազապուրծ եղած հայությունը ցրվեց աշխարհով. հայության զգալի հատվածը հաստատվեց Եվրոպայում, որի արդյունքում հին գաղթօջախները ստվարացան և ձևավորվեց «Հայոց Սփյուռք» եզրույթը: Սփյուռքում, պետականության բացակայության պայմաններում, ազգապահպանման, ազգային և հոգևոր դաստիարակության այդ կարևոր գործը, իր արտաքին թեմերի միջոցով ստանձնեց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Արդյունքում, Եվրոպայի հայոց թեմի կազմավորման գործընթացը, որը սկսվել էր դեռևս 19-րդ դարի վերջին, նոր թափ ստացավ:

1924 թ. հայության տեղաբաշխվածության, ձևավորվող թեմի վարչական կառույցների կազմակերպման մասին նախնական վիճակագրություն կազմելու համար Եվրոպայի հայոց թեմի կաթողիկոսական պատվիրակ է նշանակվում նորընծա եպիսկո-

պոս Գրիգորիս Պալաքյանը, որը նախկինում Մանչեսթրի հով-վապետն էր: Կաթողիկոսի հանձարարականով նա պետք է ման-րամասն տեղեկություններ հավաքեր սփյուռքահայության, նրանց կացության մասին, հետևողական լիներ թեմի հոգևորականների գործունեությանը, աջակից լիներ հայ որբերին, այրիներին, զարկ տար Մայր աթոռ Ս. Էջմիածնի նորոգմանը, ազգային օջախների, մանկատների, եկեղեցիների շինարարությանը[1]:

1925 թ. փետրվարի 20-ին Գևորգ Ե կաթողիկոսի թիվ 79 կոնդակի համաձայն ստեղծվեց առանձին հոգևոր վարչական միավոր՝ Եվրոպայի հայոց թեմը մեկ ընդհանուր առաջնորդա-րանով՝ Փարիզ կենտրոնով: Եվրոպայի թեմի մեջ ընդգրկվեցին թվով 10 երկիր՝ Ֆրանսիան, Անգլիան, Իտալիան, Գերմանիան, Բելգիան, Չեխոսլովակիան, Ավստրիան, Լեհաստանը, Հա-րավսլավիան, Շվեյցարիան[2]:

Արդեն 1925 թ. փետրվարի 16-ին կազմվել էր Եվրոպայի թե-մի կանոնադրության նախագիծը, որը որոշակի փոփոխություն-ների ենթարկվելուց հետո վավերացվում է 1926 թ. հուլիսի 1-ին՝ թեմի օրենսդիր մարմին հանդիսացող թեմական պատգամավո-րական ժողովի կողմից: Հարկ է նշել, որ կանոնադրության մեջ նորակազմ թեմում նշվում էր 13 երկիր: Ավելացված համայնք-ներն էին՝ Հունգարիան, Իսպանիան, Հոլանդիան[3*]:

---

[1] «Ապագայ», 1925, մայիս № 25, էջ 2:

[2] Նույն տեղում:

[3] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5334, թ. 1:

[*] Իսպանիայում, Հոլանդիայում, Լեհաստանում հայության թվաքանակը զգալիորեն քիչ է եղել, որի պատճառով կաթողիկոսական պատվիրակները այս համայնքներ այցելություն չեն կատարել: Միայն 1924 թ. Գ. Պալաքյանը նշում է, որ Հոլանդիայի մայրաքաղաք Ամստերդամում ապրում էր 10 հայ, որոնք վաճառականներ էին (նույն տեղում, գ. 5347, թ. 2), իսկ նրա հաջորդ

Եվրոպայի հայոց թեմը հայության թվաքանակի հիման վրա բաժանվելու էր հովվական վիճակների[4]: Այդ վիճակներն էին լինելու՝ Փարիզը, Լիոնը, Մարսելը, Լոնդոնը, Մանչեսթրը, Բրյուսելը, Ժնևը, Բեռլինը, Միլանը, Վիեննան, Բելգրադը, Վարշավան, Բուդապեշտը: Այն հայաշատ համայնքները, որոնք հեռավորության կամ այլ պատճառներով չէին կարողանալու անդամակցել նորակազմ թեմին, գործելու էին առանձին կամ կազմելու էին եկեղեցական ներկայացուցչություն[5]:

Եվրոպայի հայոց թեմի վարչական կառույցներից թերևս ամենաբարդ և պատասխանատու գործունեությունը վերապահված էր թեմական ընդհանուր ժողովին, որը կազմվելու էր վիճակային ընդհանուր ժողովների կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով: Թեմական ընդհանուր ժողովում ներկայացուցիչները բաշխվելու էին հետևյալ կերպ. Փարիզն ունենալու էր 6, Մարսելը՝ 5, Լիոնը՝ 4, Մանչեսթրը՝ 2, Լոնդոնը՝ 2, Բեռլինը, Միլանը, Բրյուսելը, Անվերսը, Ժնևը, Լոզանը, Վիեննան, Բելգրադը, Վարշավան, Բուդապեշտը՝ մեկական ներկայացուցիչ: Ընդհանուր ժողովի անդամները պաշտոնավարելու էին վեց տարի, իսկ յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ նրանց 1/3-ը փոխվելու էր: Յուրաքանչյուր տարվա մարտին գումարվելու էր նիստ, որին հրավիրվելու էր թեմական առաջնորդը կամ ներկայացուցչություն մայր-դիվանից: Թեմական ընդհանուր ժողովի նախագահը թեմական առաջնորդն էր: Ընդհանուր ժողովը մշակելու

Թորգոմ արքեպիսկոպոսը հոլանդահայերին իր տեղեկագրում ընդհանրապես չի հիշատակում (նույն տեղում, գ. 5398, թ. 3):

[4] Հայաստանյայց առաքելական եկեղեցու հոգևոր-վարչական տարածքային ենթամիավոր:

[5] Թեմական կանոնադրութիւն Եվրոպայի հայոց, Փարիզ, 1926, էջ 3:

էր սույն ժողովի ներքին կանոնագիրը: Վերոնշյալ կառույցին էր վերապահված թեմի առաջնորդի, թեմական կենտրոնական խորհրդի ընտրությունների կազմակերպումը, առաջնորդարանի տարեկան բյուջեի և դրանում յուրաքանչյուր թեմական շրջանի մասնակցության քանակի որոշումը: Ընդհանուր ժողովը պարտավոր էր քննել առաջնորդի դեմ եղած բողոքագրերը, վերջինիս հրաժարականի դեպքում կազմակերպել տեղապահի նշանակումը, իսկ վեց ամիս անց՝ ընտրել նոր թեմական առաջնորդ[6]:

Նորակազմ թեմի վարչական մարմիններից էր թեմական կենտրոնական խորհուրդը, որի 11 անդամներն ընտրվելու էին թեմական ընդհանուր ժողովի կողմից իսկ հաստատելու էր թեմական առաջնորդը: Կառույցը զբաղվելու էր ընդհանուր հոգևոր, կրթական, վարչական և տնտեսական ոլորտներին վերաբերող հարցերով, պարտավոր էր զարկ տալ թեմում եկեղեցիների կառուցմանը, ազգային կրթօջախների տարածմանը, զբաղվեր առաջնորդարանի նյութական խնդիրների կարգավորման աշխատանքներով, ինչպես նաև հսկել եկեղեցական մատյանները (ամուսնության, մահվան, մարդահամարին վերաբերող փաստաթղթերը):

Կարևոր կառույց էր հանդիսանում նաև կրոնական ժողովը, որի հինգ անդամներն ընտրվելու էին երկու տարի ժամանակով՝ վերընտրվելու իրավունքով: Կրոնական ժողովի նախագահը թեմական առաջնորդն էր: Կրոնական ժողովը, թեմական առաջ-

---

[6] Նույն տեղում, էջ 4–5:

նորդի նախագահությամբ իրավասու էր դատել հոգևորականներին[7]:

Թեմի կազմակերպիչ մարմինը վիճակային (շրջանային) խորհուրդն էր: Այն բաղկացած էր լինելու 5–7 հոգուց, անդամներն ընտրվելու էին վիճակային ընդհանուր ժողովից՝ երկու տարի ժամկետով: Վիճակային խորհուրդը իր համայնքում օժտված էր այն գործառույթներով, որը թեմում ուներ թեմական խորհուրդը:

Յուրաքանչյուր թեմական վիճակ ունենալու էր իր ընդհանուր ժողովը, որի նախագահը տեղի հոգևոր հովիվն էր: Ընդհանուր ժողովին կարող էին մասնակցել եկեղեցական մատյաններում գրանցված, եկեղեցական տարեվճարը կատարած, 20 տարին լրացած երկսեռ հայորդիները: Կառույցը զբաղվելու էր շրջանի հոգևոր, վարչական գործերով, մասնավորապես՝ հոգևոր հովվի ընտրության և հեռացման և այդ մասին թեմական առաջնորդին տեղեկացնելու, վիճակային խորհրդի գործունեության վերահսկման խնդիրներով:

Եվրոպայի թեմի վարչական մարմիններ էին հանդիսանում նաև վերստուգիչ հանձնաժողովը և դատաստանական խորհուրդը: Վերստուգիչ հանձնաժողովը բաղկացած էր լինելու երեք հոգուց, որոնք ընտրվելու էին թեմական ընդհանուր ժողովից: Կառույցը պետք է վերահսկեր ընդհանուր ժողովի պաշտոնական մարմինների գործունեությունը, ստուգեր դրանց դրամական հաշիվները և արդյունքները ներկայացներ թեմական ընդհանուր ժողովին[8]:

---

[7] Նույն տեղում, էջ 8:

[8] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5334, թ. 4:

Դատաստանական խորհուրդը զբաղվելու էր տեղի հայության ընտանեկան խնդիրներով: Վերջնական վճիռ կայացնելուց հետո խորհուրդը պարտավոր էր արդյունքների մասին տեղեկագրել նախադատ ատյանին, որը բաղկացած էր լինելու թեմական խորհրդի կողմից ընտրված վեց անդամներից (երեք աշխարհիկ, երեք հոգևոր): Ատյանի վճիռներն ուղարկվելու էին թեմական առաջնորդի հաստատմանը: Անլուծելի խնդիրների դեպքում վերջնական վճիռը կայացնելու էր Ամենայն Հայոց կաթողիկոսը: Դատական խորհուրդը և նախադատ ատյանը պաշտոնավարելու էին երկու տարի՝ վերընտրվելու իրավունքով[9]:

Եվրոպայի հայոց թեմի առաջնորդը, որը պաշտոնով պետք է եպիսկոպոս կամ վարդապետ լիներ, ընտրվելու էր թեմական ընհանուր ժողովից, որը վավերացվելու էր Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից տրված կոնդակով: Թեմական առաջնորդի աթոռավայրը Փարիզն էր: Նրա բացակայության դեպքում թեմական խորհուրդը նախագահելու էր փոխանորդը, որը ընտրվելու էր թեմական առաջնորդի կողմից[10]: Թեմի բոլոր հոգևոր հովիվները և ազգային թեմական մարմինները պարտավոր էին հնազանդվել Հայաստանյայց առաքելական եկեղեցու բազմադարյա կանոններին և իրավունք չունեին փոփոխություններ, նորություններ, կրճատումներ կատարել:

1927 թվականից Ֆրանսահայ համայնքի երեք շրջաններում ստեղծվում են առանձին թեմական կազմակերպություններ, որոնք ճանաչվում են ֆրանսիական կառավարության կողմից[11]:

---

[9] Թեմական կանոնադրութիւն Եվրոպայի հայոց, էջ 8-9:

[10] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5334, թ. 3:

[11] Հայ եկեղեցի. նվիրապետական աթոռներ, թեմեր, Էջմիածին, 2001, էջ 95-99:

Տեղական եկեղեցական կառույցների ստեղծման հիմնական նպատակը եկեղեցին աշխարհիկ, կուսակցական պատկանելիություն ունեցող կառույցներից անջատելն էր[12]: Բանն այն է, որ դեռևս 1925 թ. Մարսելի ազգային միությունը և եկեղեցական հոգաբարձությունը առաջնորդական տեղապահի ընտրություններ էին կատարել և որոշել Մարսելը դարձնել առաջնորդական փոխանորդություն[13]: Աշխարհիկ կառույցների կողմից ընդունված այս որոշումները Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից անօրինական էին համարվել և մերժվել[14]:

Թեև 1924, 1925 և 1930 թվականների Եվրոպայի հայոց թեմի կաթողիկոսական պատվիրակների կողմից ներկայացված ժողովրդագրական տեղեկագրերը կազմվել են ոչ թե պաշտոնական տվյալների, այլ պատվիրակների սեփական նախաձեռնությամբ, այդուհանդերձ դրանք բացառիկ նշանակություն ունեն Հայոց ցեղասպանությունից հետո 1924–1930 թթ. նորակազմ թեմում ընդգրկված համայնքների ընդհանուր ժողովրդագրական պատկերի վերականգման համար:

Եվրոպայի հայոց թեմի կաթողիկոսական պատվիրակի պաշտոնը 1924–1929 թթ. վարում է Գրիգորիս Պալաքյանը, որից հետո այն հանձնվում է Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանին (Մկրտիչ Պելտճյան), ով 1929 թ. օգոստոսի 12-ին, թողնելով Եգիպտոսի առաջնորդական պաշտոնը, մեկնում է Եվրոպա և կաթողիկոսական կոնդակի համաձայն շուրջ 8 ամիս շրջում

---

[12] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5435, թ. 8 շրջ.:
[13] ՀԱԱ, ֆ. 823, ց. 6, գ. 3, թ. 3–4
[14] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5336, թ. 4:

թեմապատկան համայնքներով և ուսումնասիրում տեղի հայության ներքին կյանքը[15]:

Ըստ կաթողիկոսական պատվիրակների ներկայացրած տեղեկությունների՝ Ֆրանսիայի հայաշատ քաղաքներն էին Փարիզը, Մարսելը, Լիոնը, Նիսը: Փարիզում մինչ պատերազմը հաստատված հայության թվաքանակը կազմում էր 2500, Մարսելում՝ 500, Լիոնում՝ 40, Նիսում՝ 150 հոգի*, պատերազմից հետո տեղափոխվածները կազմում էին հաջորդաբար 8500, 10.000, 1000 հայ, իսկ Նիսում՝ թվաքանակն անհայտ էր: 1924 թ. դրությամբ Փարիզում (հյուսիսային և արևմտյան Ֆրանսիա) գործում էր հայ բարերար Ալեքսանդր Մանթաշյանի ջանքերով կառուցված գեղեցկակերտ Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին (1904 թ.), որն ուներ եկեղեցական հոգաբարձություն: Փարիզում և Լիոնում հայության հիմնական զբաղմունքը հանդիսանում էր թանկարժեք քարերի վաճառքը, հատկապես՝ գոհարավաճառությունը[16], Մարսելում՝ ոսկերչությունը: Մարսելում գործում էր գաղթականների համար նախատեսված դպրոց[17]:

1925 թ. փարիզահայության թվաքանակը հասնում է 11.500-ի: Մարսելում մեկ տարվա ընթացքում հայության թվաքանակը ստվարանում է՝ հասնելով 13.000-ի[18], Լիոնում՝ 4500-ի: 1925 թ.

---

[15] **Ալպոյաճեան Ա.**, Թորգոմ պատրիարք Գուշակեան, Գահիրէ, 1940, էջ 500–501:

* Հարկ է նշել, որ 1924 թ. Գ. Պալաքյանը իր տեղեկագրում առավել հոծ ընակեցված համայնքներին անդրադառնալիս ներկայացրել է նաև մինչև աշխարհամարտը հայության թվաքանակը:

[16] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5329, թ. 1:

[17] Նույն տեղում:

[18] Նույն տեղում, գ. 5332, թ. 1:

դրությամբ Ֆրանսիայի մնացյալ վայրերում բնակվում էր շուրջ 3000 հայ[19]:

Արդեն 1930 թ. Թորգոմ արքեպիսկոպոսի տեղեկագրի համաձայն Փարիզում ապրում էր շուրջ 20–25.000 հայ: Մարսելի շրջանում հայության թվաքանակը կազմում էր շուրջ 23.130 հոգի, որից շուրջ 20.000-ը՝ Մարսել քաղաքում, իսկ մյուս քաղաքներում հետևյալ կերպ. Կարտան (80 հոգի), Լա Սիոդա (500 հոգի), Պորտո (700 հոգի), Թալոն (250 հոգի), Մարտիկ (200 հոգի), Պոլեն (400 հոգի) Նիս (1000 հոգի)[20*]:

Ընդհանուր առմամբ Լիոնի շրջանում հայության թիվը կազմում էր շուրջ 15.600 մարդ[21]: Լիոն քաղաքում բնակվում էր 5000 հայ: Ֆրանսիայի այդ տարածաշրջանի մյուս հայաշատ քաղաքներն էին՝ Դեսինը (1500), Բոնտշերին (700), Վիենը (1500), Վալանսը (3500), Գրենոբլը (700), Սեն Շամոնը (800), Սենտ Էթիենը (1000), Վիլֆրանզը (50), Ռոմանը (100), Ռիվոլաժը (50), Բուրգոնը (50), Բոն տ Օպնան (500), Բուզինը և այլնը (200): Թորգոմ արքեպիսկոպոսի կարծիքով՝ վարչական առումով Ֆրանսիայի ամենից անկազմակերպ շրջանը Լիոնն էր[22]:

---

[19] Նույն տեղում:

[20] Նույն տեղում, գ. 5398, թ. 35:

* 1928 թվականին Մարսելի Հայոց առաջնորդարանի կողմից Գևորգ V-ին ուղղված նամակում մարսելահայության թիվը նշվում է 25.000 (նույն տեղում, գ. 5379, թ. 1):

[21] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5398, թ. 26:

[22] Թորգոմ արքեպիսկոպոսի տեղեկագիրը հրատարակվել է նաև «Սիոն» ամսագրում, որտեղ մի շարք քաղաքներում հայության թվաքանակը այլ կերպ է ներկայացվում: Այսպես՝ Դեսինում նշվում է 1000, Բոնշերում՝ 500 հոգի (Գուշակեան Թ., Հայաստանեայց եկեղեցւոյ թեմերուն կազմակերպութիւնը Եվրոպայի մեջ, «Սիոն», 1930 թ., հուլիս-օգոստոս-սեպտեմբեր, № 7–8–9, էջ 227):

1930 թ. դրությամբ Փարիզում գործում էին միայն երեկոյան դպրոցներ, որտեղ դասավանդվում էին մայրենի լեզու և Հայոց պատմություն[23]: Մասնավոր հիմունքով Լը Ռանսիում գործում էր Դպրոցասիրաց որբանոցը, որտեղ սովորում էին 100-ից ավելի հայ որբուհիներ, Վանտոմի գավառում գործում էր Կարագյոզյան որբանոցը, որտեղ ուսանում էին շուրջ 100 հայ տղաներ: Կարևոր կրթական գործունեություն էր ծավալում Սարում գործող Վենետիկի Մխիթարյան միաբանության երկրորդական վարժարանը: 1929 թ. քաղաքի Ալֆորվիլ արվարձանում սկսել էր գործել Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին, որտեղ յոթաքանչյուր շաբաթ և կիրակի օրերին կատարվում էին պատարագներ[24]: Հոգևոր հովիվ շարունակում էր մնալ Վռամշապուհ եպիսկոպոս Քիպարյանը: Փարիզի շրջանի քահանաները շրջում և հոգևոր արարողություններ էին կատարում նաև Եվրոպայի հայաշատ վայրերում[25]:

Փարիզահայության սոցիալական կարիքների հոգածությամբ զբաղվում էին աղքատախնամ և տիկնանց միությունը՝ երկու մասնաճյուղերով՝ որբախնամ և կարմիր խաչի[26]: Կարմիր խաչը եկեղեցու դիվանատանը ուներ բուժարան, որտեղ շաբաթը երկու անգամ հիվանդների այցելություններ էր կազմակերպում:

Մարսել քաղաքում գործում էր Ս. Հարություն եկեղեցին, որ կառուցվել էր շուրջ կես դար առաջ՝ Տիգրան (Վահան) Խորա-

---

[23] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 501:
[24] Նույն տեղում:
[25] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5398, թ. 35:
[26] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 501:

սանճյանի բարերարությամբ, որի օծումը դեռևս չէր կատարվել*: Եկեղեցին ուներ նաև նախակրթարան: Եկեղեցու ճարտարապետը պոլսեցի Արամ Թահիրճյանն էր: Այն կառուցված էր 10-րդ դարի հայ ճարտարապետության ոգով և Ս. Էջմիածնի Մայր տաճարի ոճով[27]:

1929 թ. Փարիզի Բոմոնի Սեն Լու արվարձանում Գ. Պալաքյանի նախաձեռնությամբ և տեղի հայության նյութական օժանդակությամբ բացվում է Ս. Գևորգ եկեղեցին, որին կից գործում էր նաև մանկապարտեզ: Մարսելի արվարձաններում կար ութ մատուռ[28], որոնցից վեցը գործում էին վարձակալությամբ, ունեին նախակրթարաններ, որտեղ սովորում էին շուրջ 1000 հայ մանուկներ: Նիսում Տիգրան Չամքերթենյանի նախաձեռնությամբ գործում էր մատուռ-նախակրթարան:

Մարսել քաղաքում հոգևոր ծառայություն էին մատուցում Գ. Պալաքյանը, Հովհաննես Ֆերհատյանը և երեք քահանաներ: Շրջանի մյուս վեց քահանաները գործում էին արվարձաններում:

1930 թ. Լիոնի շրջանի գրեթե բոլոր քաղաքներում, բացառությամբ Վիլֆրանզի, Ռոմանի, Ռիվոլաժի, Բուրգոնի, Բուգինի, գործում էին ազգային միություններ: Լիոնում դեռևս եկեղեցիներ չկային: Լիոն քաղաքում գործում էին երկու մեծ ու փոքր մատուռներ: Վարձակալությամբ մատուռներ էին գործում նաև Բոնտշերի, Վալանս և Բոնտոպար քաղաքներում: Լիոնի շրջանը ուներ ութ հոգևորական: Անանիա վարդապետ Հաբեյյանը և

---

* 1928 թ. Մարսելում կառուցվել են Ս. Կարապետ, 1929 թ. Ս. Աստվածածին մատուռ-եկեղեցիները, որոնց օծումը կատարվել է ավելի ուշ:

[27] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5346, թ. 6:

[28] Գուշակեան Թ., նշվ. աշխ., էջ 227:

չորս քահանաները գործում էին Լիոն քաղաքում, մեկական քահանա ունեին Բոնտշերը, Վալանսը, Բոն տ Օպնան[29]:

1924 թ. Անգլիայի հայաշատ քաղաքներն էին՝ Լոնդոնը, Մանչեսթրը, Լիվերպուլը: Լոնդոնում մինչև պատերազմը տեղափոխված հայության թիվը կազմում էր 550, Մանչեսթրում՝ 750, Լիվերպուլում անհամեմատ ավելի քիչ՝ 40 հոգի, իսկ պատերազմից հետո տեղափոխվում են հաջորդաբար 150 և 50 հոգի[30]: Լիվերպուլ գաղթածների թվաքանակն անհայտ էր: Տեղի հայության հիմնական զբաղմունքը վաճառականությունն էր: Լոնդոնում գործում էր հայ բարերար Գալուստ Կյուլպենկյանի նախաձեռնությամբ հիմնադրված Ս. Սարգիս եկեղեցին*, որը ուներ նաև երիցտուն[31]: Մանչեսթրում գործում էր Ս. Երրորդություն անունը կրող եկեղեցին, որի հոգևոր հովիվը Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանն էր:

1925 թ. դրությամբ Լոնդոնում բնակվում էր ընդհամենը 600 հայ: Մանչեսթրում հայության ստվարացում չի նկատվում, իսկ Լիվերպուլում ապրում էր 60 հայ: Հոգևոր հովիվը Վահան քահանան էր: Ազգային կառույցներից գործում էին աղքատախնամ և Կարմիր խաչ, տիկնանց միությունը: Դրանցից առաջինը ժողովրդական հիմքեր ուներ, իսկ երկրորդը՝ հովանավորվում էր եկեղեցական հոգաբարձության կողմից: Գործում էր նաև խնամատարության մարմին[32]: Հայերը հիմնականում զբաղվում էին

---

[29] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5398, թ. 35:

[30] Նույն տեղում, գ. 5329, թ. 1:

* Եկեղեցու կառուցման աշխատանքները սկսվել են 1922 թ. փետրվարին, իսկ օծվել է 1923 թ. հունվարի 11-ին:

[31] **Գուշակեան Թ.**, նշվ. աշխ., էջ 230:

[32] Խոսքը վերաբերում է Գալուստ Կյուլպենկյանի կանոնագրի հիման վրա ստեղծված ավանդապահների ժողովին, որը միաժամանակ վերոնշյալ մարմնի

գորգավաճառությամբ: 1930 թ. Լոնդոնում բնակվում էր 800, իսկ Մանչեսթրում, Լիվերպուլում, Սաութբորթում՝ 500 հայ: Թորգոմ արքեպիսկոպոսի հավաստմամբ՝ Մանչեսթրը Եվրոպայի ամենակազմակերպված համայնքերից էր, քանի որ այստեղ գործում էին ազգապատկան եկեղեցի, ազգային վարչություն, երեփոխանական ժողով[33]:

1924 թ. Բելգիայում ապրում էր 180 հայ: Հայերը կենտրոնացած էին հիմնականում Բրյուսել և Անվերս քաղաքներում: 1925 թ. դրությամբ Բրյուսելում հայության թիվը կազմում էր 150, իսկ Անվերսում՝ 270: Քաղաքում ազգային կյանքի կազմակերպման օջախ էր հանդիսանում Ազգային միությունը: Արդեն 1930 թ. Բելգիայում հայության թվաքանակի աճ է գրանցվում: Բրյուսելում ապրում էր 700, Անվերսում՝ 300, Լիեժում՝ 50 հայ: Բելգիահայերը հիմնականում վաճառականներ (մոտ 700 հոգի) և մանր առևտրականներ էին (մոտ 300 հոգի): Բելգիայի հայությունը եկեղեցի և հոգևորականներ չուներ: Թեև այս շրջանում մի քանի ազգային կառույցներ էին գործում, բայց դրանք ակտիվ գործունեություն չէին ծավալում: Բելգիայի քահանան Ֆրանսիայի հոգևոր հովիվ Վռամշապուհ եպիսկոպոս Քիպարյանն էր[34]:

1924 թ. Շվեյցարիայում հայությունը տեղաբաշխված էր հետևյալ կերպ. Ժնևում՝ 160, Լոզանում՝ 35 հոգի[35]: 1925 թ. Ժնևում նրանց թիվը հասնում էր 200-ի, իսկ Լոզանում՝ 150-ի: Ժնևում ազգային կառույցներից գործում էր Ազգային միությունը

նախագահն էր հանդիսանում: Այն կոչվել է նաև խնամատարության մարմին (ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4922, թ. 1, գ. 5329, թ. 1):

[33] Գուշակեան Թ., նշվ. աշխ., էջ 230:

[34] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5398, թ. 28:

[35] Նույն տեղում, գ. 5329, թ. 1:

և ազգությամբ շվեդ Քրաֆթ Բոնարի անվան որբանոցը[36]: 1930 թ. Շվեյցարիայում բնակվում էր 406 հայ: Այստեղ նույնպես եկեղեցիներ չկային: Ծիսական օրերին հրավիրվում էր Փարիզի շրջանի քահանաներից որևէ մեկը, իսկ ծիսական արարողությունները կատարվում էին մատուռներում կամ վարձակալած հաստատություններում: Շվեյցարիայում գործում էին մի քանի ազգային կառույցներ, որոնք զբաղվում էին համայնքի ներքին կյանքի հոգածությամբ: Օրինակ՝ Ժնևում գործող եկեղեցական միությունը հոգում էր հրավիրյալ քահանաների ծախսերը, ինչպես հայ որբերի, գաղթականների կարիքները: Գործում էր նաև Հայ բարեգործական ընդհանուր միությանը պատկանող որբանոցը, որտեղ հանգրվանել էին շուրջ 100 որբեր: Ժնևի համայնքում գործում էր «Հայաստան» անունը կրող հաստատություն, որը հովանավորում էր քաղաքի վարժարաններում, համալսարաններում սովորող շուրջ 100 հայ երիտասարդների: Տնօրենը հանդիսանում էր Քրաֆթ Բոնարը[37]:

1924 թ. Գերմանիայում ապրում էր 575 հայ: Բեռլինում մինչև աշխարհամարտը տեղափոխված հայերի թիվը կազմում էր 110, Լայպցիգում՝ 20, Դրեզդենում՝ 30, Համբուրգում՝ 15 հոգի, իսկ նոր գաղթածները հաջորդաբար կազմում էին՝ 230, 40, 80, 10 հոգի: Հայության հիմնական զբաղմունքը վաճառականությունն էր, որոշ թիվ էին կազմում նաև հայ ուսանողները: 1925 թ. Բեռլինում հայության թվաքանակն աճում է՝ հասնելով 350-ի, իսկ Լայպցիգում կազմում էր՝ 150, Դրեզդենում՝ 50, Համբուրգում՝ 30 հոգի:

---

[36] Նույն տեղում, գ. 5332, թ. 1:
[37] Նույն տեղում, գ. 5398, թ. 30–31:

Արդեն 1930 թ. Գերմանիայում հայությունը տեղաբաշխված էր հետևյալ կերպ. Բեռլին (380), Համբուրգ (57) (40), Մյունխեն (32) (57), Դրեզդեն (32): Հարկ է նշել, որ Թորգոմ արքեպիկոպոսը «Սիոն» ամսագրում Համբուրգում ներկայացնում է 57, իսկ Մյունխենում անհամեմատ ավելի քիչ՝ 32 հոգի[38]:

1930-ական թվականներին Բեռլինում գործում էր ազգային միություն, որը զբաղվում էր հոգևոր կյանքի կազմակերպման հարցերով: Գերմանահայ համայնքը եկեղեցիներ չուներ և ժամերգությունները կատարվում էին տեղի բողոքականներին պատկանող մատուռներում: Տեղի հոգևորականը ծնունդով բաբերտցի, Սանասարյան վարժարանի նախկին սան, Բեռլինի համալսարանի շրջանավարտ Գրիգոր Շանլամյանն էր: Նա հաճախ այցելում էր Բեռլինի հայաբնակ քաղաքներ և շաբաթական մեկ ժամ մանուկներին մայրենի լեզու դասավանդում[39]:

1924 թ. Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում հայության թվաքանակը հասնում էր շուրջ 250-ի: Հայության հիմնական զբաղմունքը կրկին վաճառականությունն էր: 1925 թ. հայության թվաքանակը աճում է՝ հասնելով 3500 հոգու, իսկ 1930 թ. դրությամբ կտրուկ նվազում՝ կազմելով ընդհամենը 200 հոգի: Համայնքը թեև եկեղեցի չուներ, սակայն վարձակալությամբ գործում էր մատուռ, ունեին մեկ քահանա: Վիեննայում գործում էր եկեղեցական հոգաբարձություն[40]:

---

[38] Ավելի ուշ՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի տեղեկագրում մինչև Երկրորդ աշխարհամարտը Գերմանիայում հայության թվաքանակը ներկայացվում է 2000–2500 հոգի (ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 117, թ. 1):

[39] Նույն տեղում:

[40] Գուշակեան Թ., նշվ. աշխ., էջ 229:

Իտալիայի հայաբնակ քաղաքներն էին՝ Հռոմը, Միլանը, Վենետիկը: 1924 թ. դրությամբ Հռոմում ապրում էր՝ 25, Միլանում՝ 50, Վենետիկում՝ 100 հայ: Հռոմում և Վենետիկում գործում էին որբանոցներ: Արդեն 1925 թ. Հռոմում հայերի թիվը հասնում է 60-ի, Միլանում՝ 270-ի, Վենետիկում՝ 65-ի, Բարիում՝ 40-ի: Իտալիայի համայնքը էջմիածնապատկան եկեղեցիներ չուներ: Հռոմում և Միլանում գործում էին եկեղեցական հոգաբարձություններ: Միլանում գործում էր նաև մատուռ: Թորգոմ արքեպիսկոպոսի վկայությամբ՝ Միլանի և Վիեննայի եկեղեցական հոգաբարձությունները թեմապատկան կազմակերպված հոգաբարձություններից էին[41]:

1930 թ. Իտալիայում բնակվում էր շուրջ 500 հայ (Միլանում՝ 300, Թուրինում՝ 30, Վենետիկում՝ 50, Տրիեստում՝ 60, Բարիում՝ 70): Թուրինում հայ կաթոլիկների հսկողությամբ գործում էր որբանոց, որտեղ ուսանում էին 100 հայ որբուհիներ: Համայնքի կյանքում մեծ դեր ուներ նաև Վենետիկի Մխիթարյան միաբանությունը: Վերջինիս ջանքերով նախկինում որբանոց էր գործել, որը սաների համալսարան ընդունվելուց հետո լուծարվել էր: Բարիում հայության համար իտալական բարեգործական ընկերությունը (Գելակի գլխավորությամբ) հիմնել էր «Նոր-Արաքս» անունը կրող թաղամաս, որտեղ ապրում էին 70 հայ գաղթականներ: Թաղամասում գործում էր նաև մատուռ և դպրոց: Թեև փոքրիկների դասավանդման համար հաճախ հրավիրվում էին Մխիթարյան միաբանության վարդապետներ, այնուամենայնիվ, տեղի հայությունը հիմնականում հայ առաքելական եկեղեցու հետևորդներ էին:

---

[41] Նույն տեղում:

1924 թ. Հարավսլավիայում ապրում էր 220 հայ: Մայրաքաղաք Բելգրադում մինչև պատերազմը հայության թիվը կազմում էր 40, իսկ պատերազմից հետո այստեղ հաստատվում են ևս 80 հոգի: Մնացյալ քաղաքներում ապրում էր 100 հայ: Պատերազմից առաջ տեղափոխված հայության մեծամասնությունը Երիզայի Կամախ քաղաքից էին: 1925 թ. դրությամբ այստեղ ապրում էր 80 հայ, որոնք կենտրոնացած էին հիմնականում մայրաքաղաքում: Արդեն 1930 թ. հայության աճ է գրանցվում: Բելգրադում և շրջակա քաղաքներում ընդհանուր առմամբ հաշվվում էր 500 հայ: Եվս 200 հայեր բնակվում էին 38 կայարանների շրջակայքում: Թորգոմ արքեպիսկոպոսի վկայությամբ՝ տեղի հայերն ազնիվ և ազգասեր էին, հիմնականում զբաղվում էին որմնագործությամբ, վաճառականությամբ: Տվյալ ժամանակահատվածում այստեղ վարչական, ազգային և հոգևոր մարմիններ չկային: Հարավսլավիայում էջմիածնապատկան եկեղեցիներ և քահանա չլինելու պատճառը միայն նյութական անբավարարությամբ և համայնքի անկազմակերպ լինելով պայմանավորված չէր, այլ տեղի իշխանությունները ուղղափառ լինելով դեմ էին, որպեսզի հայերը հոգևորականներ ունենային՝ գտնելով, որ «սերբ քահանաները կարող են բավարարել իրենց հոգևոր պետքերը»: Այս պատճառով հայերի հարսանեկան, մկրտության և այլ արարողությունները կատարվում էր սերբ հոգևորականների միջոցով[42]:

Չեխոսլովակիայում հայությունը հիմնականում կենտրոնացած էր մայրաքաղաք Պրահայում: 1924 թ. դրությամբ այստեղ ապրում էր 83 հայ, որոնցից 8-ը տեղափոխվել էին առաջին աշ-

---

[42] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5398, թ. 33:

խարհամարտին նախորդած տարիներին: 1925 թ. այստեղ ապրում էր 120, իսկ 1930 թ.՝ մոտ 70 հայ: Հայության փոքր հատվածը զբաղված էր առևտրով: Չնչին թիվ էին կազմում նաև տեղի համալսարաններում սովորող հայ երիտասարդները:

1924 թ. Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում բնակվում էր 60 հայ, որոնք հիմնականում ուսանողներ էին: 1925 թ. հայության թվաքանակն աճում է՝ հասնելով 150-ի, իսկ 1930 թ. նվազում՝ կազմելով 70 հոգի: Համայնքում ազգային կյանքի կազմերպման խնդիրները հոգում էր եկեղեցական հոգաբարձությունը: Առաջին աշխարհամարտից հետո այստեղ հիմնվում է ազգային վարչություն: Վերջինիս ջանքերով համայնքի հոգևոր, կրթական կյանքի կազմակերպման և աշխուժացման համար շենք է գնվում, որտեղ նախատեսվում էր բացել վարժարան, աղոթատուն և կազմակերպել մայրենի լեզվի ուսուցում, որը, ցավոք, չի հաջողվում գործնական հողի վրա տեղափոխվել և մնում է անկատար[43]:

Այսպիսով, Եվրոպայի Հայոց թեմի կազմավորման գործընթացը 1924–1930 թթ. մտնում է ավարտուն փուլ: Դրա կայացմանը, առաջին հերթին, նպաստում են հայության թվաքանակի աճը, այնուհետև՝ թեմի կանոնադրության միջոցով հաստատված վարչական կառույցները, որոնց առաջնային խնդիրը պետք է հանդիսանար եկեղեցիների և կրթօջախների կառուցումն ու ազգային կրթության կազմակերումը:

---

[43] Նույն տեղում:

Երոպայի հայոց թեմի ժողովրագրական նկարագիրը 1924–1930 թթ.

1924 թվական				
Երկիր	հայերի թվաքանակը	Եկեղեցի	հոգևորականներ	դպրոց
Ֆրանսիա	22.690	Ս. Հովհաննես Մկրտիչ	Հոգևոր հովիվ՝ Վռամշապուհ եպս. Քիպարյան	Գաղթականաց դպրոց
Անգլիա	1540	Ս. Սարգիս, Ս.Երրորդություն	Վահան քահանա, Ղևոնդ եպս. Դուրյան, Վռամշապուհ եպս. Քիպարյան	———
Բելգիա	180	———	Վռամշապուհ եպս. Քիպարյան	———
Գերմանիա	575	———	———	———
Իտալիա	425	———	———	———
Հունգարիա	60	———	———	———
Հվեյցարիա	195	———	———	———
Ավստրիա	250	———	———	———
Չեխոսլովակիա	75	———	———	———
Հարավսլավիա	220	———	———	———
1925 թվական				
Ֆրանսիա	32250	Ս. Հովհաննես Մկրտիչ	Հոգևոր հովիվ՝ Վռամշապուհ եպս. Քիպարյան	Կարագոզյան դպրոց, Գաղթականաց դպրոցներ
Անգլիա	1410	Ս. Սարգիս, Ս. Երրորդություն	Հոգևոր հովիվ՝ Ղևոնդ եպս. Դուրյան, Գոռան վարդապետ	———
Բելգիա	420	———	———	———
Գերմանիա	580	———	Մեյքոն քահ. Քրիսյան	———
Իտալիա	435	մատուռ	———	———
Հունգարիա	150	———	———	———
Հվեյցարիա	250	Քրաֆտ Բունարի որբանոց	———	———
Ավստրիա	3500	———	———	———
Չեխոսլովակիա	120	———	———	———
Հարավսլավիա	80	———	———	———

1930 թվական				
Ֆրանսիա	63730	Ս. Հովհաննես Մկրտիչ, Պողոս Պետրոս, Ս. Հարություն, Ս. Գևորգ, 12 մատուռ, 4 աղոթատուն	Հոգևոր հովիվ՝ Վռամշապուհ եպս. Քիպարյան, 4 ծխատեր, 319 հոգևորական	Կարագոզյան դպրոց, Դպրոցական դասընթացներ որբանոց, երկրորդական վարժարան
Անգլիա	1200	Ս. Սարգիս, Ս. Երրորդություն	Հոգևոր հովիվ՝ Ղևոնդ եպս. Դուրյան,	-------
Բելգիա	1050	2 աղոթատուն	-------	-------
Գերմանիա	479	1 աղոթատուն	Հոգևոր հովիվ՝ Գրիգոր Շահլամյան	-------
Իտալիա	510	1 աղոթատուն, 1 մատուռ	1 քահանա	-------
Հունգարիա	70	-------		-------
Շվեյցարիա	406	1 աղոթատուն	-------	-------
Ավստրիա	200	մատուռ	1 քահանա	-------
Չեխոսլովակիա	70	մատուռ	-------	-------
Հարավսլավիա	500	մատուռ	-------	-------

Мариам М. Акопян, *ЕГУ*, **Административно-демографическая картина Европейской армянской епархии в 1924–1930 гг.** – Кондаком Католикоса всех армян Геворка V в 1925 г. была создана Европейская армянская епархия. Из свидетельств делегатов Католикоса всех армян становится ясным, что для армянства Европы епархиальное предводительство являлась связывающим звеном во взаимоотношениях Родина-Диаспора, имела большое значение в деле формирования национальной жизни европейского армянства и религиозного воспитания.

Mariam M. Hakobyan, *YSU*, **The 1924–1930 administrative and demographic picture of Armenian Diocese of Europe** – In 1925 the Armenian Diocese of Europe was established according to

the kondak (pastoral letter) of the Catholicos of All Armenians Gevorg V. From the discriptions of the delegates of the Catholicos of All Armenians in 1924–1930, it became clear that the diocesan leadership was a link between the Homeland-Diaspora relations for the Armenians of Europe in the formaton of national life of the latter and their religious upbringing.

ԳԱՅԱՆԵ Խ. ՂԱԶԱՐՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴԻՐՔԻ ՀԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԸ ՀԽՍՀ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՕՐՅԱՅՈՒՄ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ*

Բանալի բառեր՝ Խորհրդային Հայաստան, առօրյա, չարաշահումներ, միլիցիա, հարբեցողություն:

ԽՍՀՄ տարիներին իրավապահ մարմինների աշխատակիցների շրջանում կաշառակերության փաստերը չէին հանդիսանում լայն հասարակական քննարկման առարկա: Հիմնական պատճառը նման ինստիտուտների ոչ հանրային գործունեությունն էր ու խոսքի ազատության սահմանափակումը: Խորհրդային պարզ քաղաքացին գիտեր այն, ինչ թույլատրվում էր: Նրանց համար հանցագործությունը դա բուրժուազիայի մնացուկ էր, որի դեմ օր ու գիշեր պայքարում էին իրավապահ մարմինները: Դա քարոզվում էր ֆիլմերի, գրքերի, մամուլի միջոցով[1]: Սա բնութագրական էր խորհրդային բոլոր հանրապետություններին, որոնք տեղերում, պայմանավորված ժողովուրդների մշակութապատմական տարբերություններով, ձեռք էին բերում առանձնահատկություններ:

---

* Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՆ ԳԿ-ի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18T-6A225 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

[1] http://modernhistory.ru/d/1607380/d/popova_0.pdf, http://elar.urfu.ru/bitstream/10995/40131/1/mamyachenkov-nd-6-2016.pdf

Արդյունքում, օրենքի ներկայացուցիչները, օգտվելով հասարակական վերահսկողության բացակայությունից, իրենց թույլ էին տալիս հակահասարակական արարքներ, որոնք, ինչպես նշում է ՀԽՍՀ ներքին գործերի մինիստր[2] Խորեն Գրիգորյանը, բնորոշ չէին «սովետական իրավապահ աշխատակցին»: Այսպիսի արարքները սուր բնույթ ընդունեցին հետպատերազմյան տարիներին, երբ վերահսկողական մարմինները բավականին թույլ էին աշխատում և որոշ աշխատակիցներ ոչ միայն չէին կատարում իրենց ծառայողական պարտականությունները, այլև կաշառք էին վերցնում, զբաղվում հարբեցողությամբ, թմրամոլությամբ, թղթախաղով և հասարակության դեմ ուղղված արարքներ թույլ տալիս: Հետաքրքիր է, սակայն, այն հանգամանքը, որը միլիցիայի շրջանային բաժնի աշխատակիցներն ու նույնիսկ ղեկավար անձիք կարգապահության խախտում ասելով հասկանում՝էին միայն հարբեցողությունն ու հակաբարոյական այլ արարքները, իսկ ծառայողական պարտականությունների նկատմամբ անփույթ վերաբերմունքն ու դրանց չկատարումը նրանց համար սովորական էր: Օրինակ, ծառայողական կարգապահության խախտում չէր համարվում այն հանգամանքը, որ Ախտայի շրջանի տեղամասային լիազոր ներկայացուցիչ Ա. Հայրապետյանը 20 քրեական հանցագործություններից որևէ մեկը չէր բացահայտել ու դրա համար որևէ պատասխանատվության չէր ենթարկվել[3]: Շատ դեպքերում հարբեցողությունը ևս

---

[2] 1946 թ. մարտի 15-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի I նստաշրջանում ԽՍՀՄ ՆԳԺԿ-ն վերանվանվեց ԽՍՀՄ ներքին գործերի մինիստրության, միութենական հանրապետությունների ժողովրդական կոմիսարիատները՝ ներքին գործերի մինիստրությունների (**Սահակյան Ռ., Սարգսյան Ռ.**, Հայաստանի ոստիկանության պատմությունից, մաս 2, Ե., 2015, էջ 127):

[3] ՀԱԱ, ֆ. 116, ց. 6, գ. 122, թ. 208:

համարվում էր նորմալ և բնորոշվում «լիցքաթափում լարված աշխատանքային օրվանից»[4]: Իսկ միլիցիայի որոշ աշխատակիցների համար անպատվաբեր էր համարվում «բաժակի ընկերոջը» քրեական պատասխանատվության ենթարկելը[5]:

Որոշակի վերաբերմունք էր ձևավորվել նաև նոր կադրերի ընդունման և աշխատանքի ներգրավվելու հարցում: Միլիցիայի բաժանմունք եկած երիտասարդներին ոչ միայն պատշաճ կերպով չէին ընդունում, այլև տեղավորում էին բաժանմունքներում իրենց հայեցողությամբ, որոշ վայրերում (օրինակ՝ Արգավանդի շրջանում) նույնիսկ բռնություն էին կիրառում՝ չհատկացնելով բնակարաններ[6]: Խնդիրը նրանում էր, որ հետպատերազմյան շրջանում նվազել էր կրթական մակարդակը, գոյություն ուներ որակյալ կադրերի մեծ պակաս, իսկ օրգաններում աշխատել ցանկացողների թիվը բավական շատ էր: Դեպքեր էին լինում, երբ աշխատանքի ընդունելուց մի քանի օր հետո էր միայն պարզվում, որ տվյալ անձը հանցագործ է: Այդ մասին 1949 թ. հաշվետվության մեջ գրում է ներքին գործերի մինիստր Խ. Գրիգորյանը: Ամփոփելով 1948 թ.՝ նա նշում է, որ համակարգ ընդունված 622 աշխատակիցների 93,1%-ը ազատվել է հենց նույն տարում[7]: Կադրերի խնդրին հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում մանկական անօթևանության դեմ պայքարի վարչությունում: Դա երևում է 1949 թ. ՀԽՍՀ ՆԳ մինիստրի տեղակալ, գնդապետ Զախարյանի՝ Մանկական անօթևանության դեմ պայքարի վարչության պետ Բաբայանին ուղղված հանձնարա-

---

[4] Նույն տեղում, թ. 255:
[5] «Սովետական միլիցիա», 1950, № 16:
[6] ՀԱԱ, ֆ. 116, ց. 6, գ. 122, թ. 14–15:
[7] Նույն տեղում, գ. 55, թ. 2:

բանանում, որտեղ խստորեն դրվում էր կադրերի ընտրության, նրանց նկատմամբ «լիբերալ» վերաբերմունք ցույց չտալու հարցը[8]: Ուստի կարելի է նաև այս ամենով պայմանավորել բաժանմունքների պետերի գործելակերպը:

Բարձրացված խնդիրների մեջ հատկապես կարևոր է շեշտել ավտոճանապարհային ոստիկանության թույլ տված խախտումները, որոնց պատճառով երբեմն կատարված հանցագործությունները մնում էին անպատիժ: Բանն այն էր, որ ԽՍՀՄ ՆԳ մինիստրության 1952 թ. № 19 հրամանի համաձայն հաշվետվությունների մեջ չէին ներառվելու այն ավտոճանապարհային պատահարները, որոնք ծանր հետևանքներ չեն ունեցել: Սակայն աշխատակիցները շատ դեպքերում առաջնորդվում էին այն հանգամանքով, որ եթե տուժողը բուժվել է 10–12 օրերի ընթացքում, ապա այդ դեպքը հարկավոր չէ ներառել հաշվետվության մեջ: Իսկ տուժողի բուժման հետագա ընթացքը որևէ կերպով չէր վերահսկվում: Ավելին, համաձայն այդ նույն հրամանի № 190 կետի՝ հաշվետվության մեջ չէին ներառվելու այն պատահարները, որոնք տեղի էին ունենում ՆԳ մինիստրությանը պատկանող գործարանների, պահեստների և խորհտնտեսությունների տարածքներում: Ոստիկանները չարաշահում էին նաև այս հրամանը ու թաքցնում էին այն դեպքերը, որոնք տեղի էին ունենում ոչ կենտրոնական ավտոմայրուղու վրա[9]: Ասվածի վկայությունը ավտովթարի հետևանքով 9-ամյա երեխայի մահվան փաստը թաքցնելն էր, որն աշխատակիցները փորձում էին բացատրել պատահարի՝ ՆԳՄ խորհտնտեսությունների պահեստների

---

[8] Նույն տեղում, գ. 46, թ. 28–29:

[9] Նույն տեղում, գ. 102, թ. 22:

մոտակայքում կատարվելու պարագայով[10]: Սա պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ տեսուչները և՛ ավագությամբ, և՛ կոչումով միմյանց չէին ենթարկվում և վարվում էին այնպես, ինչպես ցանկանում էին: Քիչ չէին նաև ավտոճանապարհային տեսուչների կողմից վերցված կաշառքները՝ խախտումները և վարորդական իրավունք չունենալու փաստերը թաքցնելու համար[11]:

Ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունքը հասնում էր նույնիսկ ծիծաղի աստիճանի, երբ աշխատակիցները կատարում էին այնպիսի արարքներ, որոնք որևէ բացատրություն չունեին: Այսպես, օրինակ, Երևանի ոստիկանական տեղամասերից մեկում աշխատակիցները պատռել էին գաղտնի թղթապանակում գտնվող 1941–1942 թթ. վերաբերող էջերը՝ ծխախոտ պատրաստելու նպատակով[12]: Սա նշանակում է, որ չկար անգամ լուրջ վերաբերմունք գաղտնի փաստաթղթերը պահելու, հաշվելու և գրանցելու առումով:

Նման իրավիճակ էր տիրում նաև քրեակատարողական հիմնարկներում, որտեղ տարածված էր կաշառակերությունը և հովանավորչությունը: Բանտարկյալները «աշխատակիցների օգնությամբ» հեշտությամբ կարողանում էին կազմակերպել և՛ իրենց փախուստը, և՛ անհրաժեշտ ալկոհոլային խմիչքների ու թմրանյութերի մուտքը բանտախուց: Հաշվետվություններից ու կատարված ստուգումներից պարզ է դառնում, որ սովորաբար թեթև ռեժիմով գաղութներ ուղարկվում էին առավել ծանր հանցագործությունների համար (անչափահասների բռնաբարութ-

---

[10] Նույն տեղում:
[11] Նույն տեղում, գ. 46, թ. 8–9:
[12] Նույն տեղում, թ. 9:

յուն, պետական գույքի հափշտակում և այլն) դատապարտվածները[13]: Նմանօրինակ դեպքերը բավական շատ են, ինչը ապացուցելի է դարձնում այն պնդումը, որ համակարգում կաշառակերության երևույթը խոր արմատներ ուներ:

Աշխատակիցների և հատկապես հիմնարկների ղեկավարների շրջանում կար նաև միմյանց գործը «սևացնելու» միտում, որով նրանք փորձում էին վերահաստատել իրենց՝ սոցիալիզմի գաղափարներին հավատարիմ լինելը և մեկ անգամ ևս փորձում էին ընդգծել իրավապահ ու արդարամիտ աշխատակցի կերպարը: Սա ևս ձևավորված յուրահատուկ մտածելակերպ էր, որը բնորոշ էր խորհրդային ժամանակաշրջանին: Այս տեսանկյունից կարելի է վերցնել, օրինակ, 1956 թ. ՀԽՍՀ ՆԳ մինիստրության Վերահսկողական տեսչության ավագ տեսուչ Վարդանովի՝ ՆԳ մինիստրին ուղղված զեկուցումը Ուղղիչ աշխատանքային գաղութի պետի տեղակալ, լեյտենանտ Խուդոյանի աշխատանքում տեղ գտած թերացումների վերաբերյալ[14]: Հետաքրքիրն այստեղ, սակայն, այն էր, որ Վարդանովը տեղ գտած թերացումների մասին որևէ ձևով չէր հայտնել գաղութի ղեկավարությանը: Ավելին, գաղութի պետի մոտ իր գոհունակությունն էր հայտնել Խուդոյանի կատարած լավ աշխատանքի համար[15]:

«Գործ տվող» և գործընկերոջ («կոլեգայի») «գործը սևացնող» միլիցիոների կերպարը՝ ի դեմս Արշոյի, ցայտուն կերպով արտացոլել է հայ ականավոր արձակագիր Հրանտ Մաթևոսյա-

---

[13] Նույն տեղում, գ. 115, թ. 34, 139–140:
[14] Նույն տեղում, գ. 130, թ. 197:
[15] Նույն տեղում, թ. 206–210:

նը՝ իր «Մենք ենք մեր սարերը» վիպակում[16]: Վիպակում միլիցիոներ Արշոն խաբեությամբ Անտառամեջ գյուղի անասնապահ Իշխանից կորզելով Ռաազի ոչխարների մորթման մանրամասները, կապվում է շրջկենտրոն և «զեկուցում»: Արշոյի արած քայլից նույնիսկ խորշում է գյուղ եկած քննիչ, լեյտենանտ Հակոբյանը, ով հասկանում է, որ գյուղում կատարվածը հանցագործություն չէ, սակայն շարունակում է գործը քննել, քանի որ «պետի» մոտ Արշոն նրան ներկայացրել էր որպես կաշառակեր, ով գումար է վերցրել գյուղացիներից՝ գործը կարճելու համար[17]: Բնականաբար, նման մանրամասները, խորհրդային գրաքննության և կինոքննադատության պայմաններում չէին կարող տեղ գտնել 1969 թ. նկարահանված համանուն ֆիլմում[18]:

Ծառայողական կարգի խախտման դեպքերից զատ՝ քիչ չէին նաև օրինապահների կողմից կատարված հանցագործությունները[19]: Լինում էին դեպքեր, երբ աշխատակիցները, երբեմն տուժողի ընկերների ու բարեկամների վրեժի վախից, երբեմն էլ կաշառքի դիմաց, դատարանում սուտ վկայություններ էին տալիս, որը ոչ միայն կարգապահական խախտում էր համարվում, այլև՝ վախկոտության դրսևորում: Շատ դեպքերում իրենց սուտ

---

[16] **Մաթևոսյան Հ.** Ընտիր երկեր երկու հատորով, հ. Ա, Ե., 1985, էջ 75-76:

[17] Նույն տեղում, էջ 85–87:

[18] https://www.youtube.com/watch?v=TFwPGKQ5x6Y.

[19] Չնայած դեպքերի համատարած քողարկմանը և քաղաքացու մոտ իրավապահների նկատմամբ ձևավորված ակնածանքը կորցնելու վախին՝ ՀԽՍՀ ՆԳ մինիստր Խ. Գրիգորյանը իր զեկուցումներում հաճախ էր անդրադառնում աշխատակիցների բարոյական կերպարին՝ առանձին օրինակներով փորձում կանխել նման դրսևորումները (մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, ց. 6, գ. 81, թ. 30–35, գ. 55, թ. 1–35): Նմանօրինակ փաստերին գալիս են լրացնելու ՀԽՍՀ ՆԳ մինիստրության հրահանգների հիման վրա կատարված հատուկ տեսչական ստուգումները (ՀԱԱ, ֆ. 116, ց. 6, գ. 46, թ. 46):

վկայությունները փորձում էին քողարկել դատական գործընթացի սխալ արձանագրմամբ[20]: Համակարգի համար ամոթանք էր նաև այն հանգամանքը, երբ կոչումով անձիք հասարակական վայրերում ոգելից խմիչքի ազդեցության տակ իրենց թույլ էին տալիս միլիցիայի ղեկավար կազմի պատիվը գցող արարքներ: Այսպես, օրինակ, Երևան քաղաքի բաժանմունքներից մեկի նախկին ղեկավար, միլիցիայի կապիտան Մուղալյանը, իր հարազատներից մեկի հարսանիքի ժամանակ գտնվելով ոգելից խմիչքի ազդեցության տակ, հասարակական վայրում հարվածներ է հասցրել իր կնոջը, այնուհետև նստելով փողոցում գտնվող ավանակի վրա՝ դարձել է հասարակության ծաղրի առարկա[21]: Մեկ այլ դեպքում, Լենինականի բաժանմունքներից մեկի նախկին աշխատակից, լեյտենանտ Հովսեփյանն իրեն պատկանող «նագան» տեսակի ատրճանակով անտեղի կրակոցներ է արձակել, որի ընթացքում քաղաքացի է վիրավորվել[22]: Իսկ հանրապետության շրջաններում լինում էին դեպքեր, երբ բաժանմունքի պետերը օղի էին վերցնում քաղաքացիներից՝ նրանց գործը կարճելու խոստումով[23]: Հարբեցողությունն իսկական չարիք էր համակարգի համար, քանի որ նման գործելակերպով նրանք քանդում էին այն պատնեշը, որը ստեղծել էր խորհրդային քարոզչամեքենան՝ հասարակություն-օրենքի ներկայացուցիչներ հարաբերություններում:

Միլիցիայի բարձրաստիճան պաշտոնյաների չարաշահումները նույնիսկ հասնում էին այն մակարդակի, երբ նրանք մի-

---

[20] ՀԱԱ, ֆ. 116, ց. 6, գ. 46, թ. 7:
[21] Նույն տեղում, թ. 8:
[22] Նույն տեղում:
[23] Նույն տեղում, թ. 11:

ջամտում էին իրենց ենթակաների անձնական կյանքին և փորձում որոշումներ կայացնել: Այսպես՝ 6-րդ ռազմա-արդյունաբերական բազայի ղեկավար, կապիտան Մնացականյանը իր ենթականերից մեկին պարտադրում է չեղարկել աղջկա նշանադրությունը՝ հակառակ պարագայում սպառնալով ազատել աշխատանքից[24]: Բնականաբար, նման փաստերի արձանագրումից զատ, կատարվում էին նաև առանձնակի ծանր հանցանքներ՝ մարդասպանություն, անչափահաս աղջիկների բռնաբարություն (որոնց մեջ կային նաև հայրենադարձներ)[25], պետական ունեցվածքի թալան, և որոշ դեպքերում արժանանում մեղմ պատիժների:

Նման արտոնյալ դիրքից օգտվում էին նաև միլիցիայի ղեկավար անձանց կանայք, որոնք հասարակության մեջ կարծես թե առանձին արտոնյալ խավ ձևավորած լինեին: Նրանց առջև բաց էին բոլոր խանութների դռները, նրանք էին բոլոր անօրինական և որակյալ ապրանքների գնորդները: Դրա ցայտուն օրինակը Երևանի միլիցիայի 5-րդ բաժանմունքի վարիչի տեղակալ Դանիելյանի կնոջ գրությունն էր խանութի աշխատակցին, որով նա պահանջում էր անմիջապես իրեն բերել ստացված նոր բաճկոնները[26]: Որոշ դեպքերում միլիցիայի աշխատակիցների ընտանիքների անդամների արտոնյալ վիճակը հասնում էր այնպիսի մակարդակի, որ սկսում էին նույնիսկ ճնշումներ գործադրել վարչական շենքի բնակիչների վրա՝ ստիպելով շենք մտնել ետնամուտքով՝ իրենց անդորրը չխանգարելու համար[27]: Այս և

---

[24] Նույն տեղում, գ. 55, թ. 9–10:
[25] Նույն տեղում, թ. 12–13:
[26] Նույն տեղում, գ. 56, թ. 8:
[27] Նույն տեղում, գ. 55, թ. 6:

նմանօրինակ դեպքերը վկայում են, որ կանանցից շատերն իրենց վարքով ոստիկան ամուսիններից չէին տարբերվում:

Այսպիսով, ներկայացնելով ՀԽՍՀ միլիցիայի աշխատակիցների առօրյա կյանքին վերաբերվող մի շարք մանրամասներ, կարելի է փաստել, որ հետպատերազմյան տարիներին ձևավորված ամենաթողությունը չշրջանցեց նաև իրավապահ մարմիններին: Պետությունն ուներ համակարգային վերածնման կարիք: Նման թողտվության պայմաններում վերը ներկայացված իրավիճակը կարելի է համարել ժամանակաշրջանի համար առավել բնութագրական: Մյուս կողմից, նոր դրսևորումներ ստացած կաշառակերությունը, թալանը, պաշտոնական դիրքի չարաշահումներն ավելի խոր արմատներ գցեցին և որոշակի հետք թողեցին Խորհրդային Հայաստանի վերջին տարիների պետական ապարատի կազմակերպման վրա:

Гаяне Х. Казарян, *Институт истории НАН РА*, **Злоупотребления должностным положением в повседневной жизни сотрудниками милиции Армянской ССР в первые послевоенные годы** – В статье представлены некоторые подробности повседневной жизни сотрудников милиции Армянской ССР в первые послевоенные годы, выявлены отрицательные явления в органах МВД: факты коррупции среди высокопоставленных чиновников, случаи злоупотребления должностным положением и т.д.

Факты указывают, что работники учреждений проявляли безответственное отношение к своим служебным обязанностям, что было непосредственно связано с отсутствием надлежащего

контроля. Многочисленные случаи коррупции позволяют судить об укорененности этого порочного явления в структурах МВД.

Выявлены случаи злоупотребления должностным положением, когда некоторые сотрудники милиции пытались решать проблемы с позиции силы. Иногда – некоторые представители закона под воздействием алкоголя позволяли себе поступки очерняющие честь мундира. Подобные явления указывают, что сформировавшаяся в обществе некоторая вседозволенность не обошла и правоохранительные органы Советской Армении.

Gayane Kh. Ghazaryan, *NAS RA Institute of History*, **The abuse of the official position in the everyday life of the militia employees of the Armenian SSR in the first post-war years** – The article provides details about the daily life of the militia emloyees of the Armenian SSR during the first post-war years: revealed shortcomings in the system of the Ministry of Internal Affairs, corruption among high-ranking officials, cases of abuse of official position, etc.

Facts indicate that employees of institutions showed an irresponsible attitude towards their official duties, which was directly related to the lack of control. Cases of corruption significantly increased which allow us to judge over the vicious phenomena that were introduced into the system.

There were also a lot of cases related to abuse of official position when the leadership tried to solve problems from the position of power. Sometimes even certain representatives of law, under the influence of alcohol, allowed themselves acts derogating the honor of the system. Such phenomena indicate that the formed all-permissiveness did not bypass the law enforcement bodies.

ՀԱՄՈ Կ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ

ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔՈՒՄ (1960-ԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ)*

Բանալի բառեր՝ Խորհրդային Հայաստան, առօրյա, խուլիգանություն, հարբեցողություն, քաղաքացի, հասարակական կարգ:

Խորհրդային տարիների առօրեականության առանձնահատկություններից մեկը, իրավամբ, կարելի է համարել խուլիգանությունը, որը բնակչության լայն խավերի շրջանում դրսևորվող հակահասարակական արարքների շարքում առավել տարածվածներից էր: «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում խուլիգանությունը բնորոշվում է իբրև «Հասարակական կարգի և ընդհանուրի կողմից ընդունված կենցաղավարության կանոնների խախտում, անհարգալից, անվայելուչ վերաբերմունք, վարքագիծ»[1]: Իբրև այդպիսին՝ խուլիգանության խնդիրը մեր իրականությունում ուսումնասիրվել է միայն իբրև իրավական հարց, հակաօրինական արարք, որը պատժվում է քրեա-

* Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՆ ԳԿ-ի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18T-6A225 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

[1] Աղայան Է.Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 617:

կան օրենսգրքի համապատասխան հոդվածով: Ուստի՝ եղած գիտական հրապարակումներն էլ իրավագիտական բնույթի են[2]: Այնինչ, խուլիգանության դրսևորումները կարելի է դիտարկել նաև իբրև հասարակության սոցիալական շեղված (դևիանտ) վարքի դրսևորում: Մասնավորապես Խորհրդային Հայաստանում հետպատերազմյան տարիներին տարածված հակահասարակական արարքները կարելի է համարել հայկական հասարակությունում ընդունված սոցիալական վարքականոնի խախտում: Այլ հարց է, թե այն ինչ ծավալներ էր ընդունել:

Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից և մեծահասակների հետ զրույցներից երևում է, որ ինչպես ողջ Խորհրդային Միությունում, այնպես էլ Հայկական ԽՍՀ-ում հետպատերազմյան տարիներին հատկապես մանր խուլիգանական արարքներն ահագնացող ծավալներ էր ընդունել: Այդ դեպքերը հաճախ ողբերգական ավարտ էին ունենում[3]: Այս հանգա-

---

[2] **Սարգիսով Գ.Ս.**, Խուլիգանության հանցակազմի սուբյեկտիվ կողմերը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1969, N 10, էջ 88–97, **Հովսեփյան Ա.Գ.**, Դատախազական գործունեությունը և խուլիգանության դեմ պայքարի հիմնախնդիրները (պատմատեսական և քրեաիրավական վերլուծություն), Ե., 2005, **Արշակյան Ի.Վ.**, Խուլիգանության հասկացությունը, դրա ծնող պատճառները և կանխարգելման հիմնախնդիրները, «Հայագիտական հանդես», 2009, N 3 (ներդիր), էջ 3–27, **Ավետիսյան Ս.**, Խուլիգանական դրդումներով կատարված սպանությունների որակման մի քանի հարցերի մասին, http://old.court.am/files/news/1273_am.pdf, **Մնացականյան Ա.Մ.**, Խուլիգանության քրեաիրավական և կրիմինալոգիական հիմնախնդիրները ՀՀ-ում, թեկնածուական ատենախ., Ե., 2013, **նույնի՝** Խուլիգանությունը հարակից հանցագործություններից սահմանազատելու առանձնահատկությունները, «Դատական իշխանություն», 2013, N 3, էջ 58–65 և այլն:

[3] **Козлов В.А.**, Массовые беспорядки в СССР при Хрущеве и Брежневе, М., 2010, https://www.svoboda.org/a/24936223.html, https://www.lawmix.ru/comm/2225, Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 30, ց. 33, գ. 1, թ. 19-21, 30–34, գ. 7, թ. 69–70, ֆ. 1318, ց. 1, գ. 76, թ. 2–3:

մանքը ԽՍՀՄ ղեկավարությանը ստիպեց ուշադրություն սևեռել այդ երևույթին ու դրան նպաստող հանգամանքներին, ինչի արդյունքում 1966 թ. հուլիսի 26-ին ընդունվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը՝ «Խուլիգանության համար պատասխանատվությունն ուժեղացնելու մասին»:

Հրամանագրի ներածական մասում շեշտվում էր, որ հանրության կողմից անհանդուրժող վերաբերմունք է առկա խուլիգանական արարքների նկատմամբ, որոնք վիրավորում են քաղաքացիների պատիվն ու արժանապատվությունը, հաճախ հանգեցնում ծանր հանցագործությունների: Այս առումով կարևոր խնդիր էր համարվում այնպիսի իրավիճակին հասնելը, երբ պետական մարմինների և քաղաքացիների ջանքերով կկանխարգելվեն խուլիգանական բոլոր դեպքերը: Իրավական ակտով համեմատաբար մեղմ էր վերաբերմունքը մանր խուլիգանությունների նկատմամբ, ինչը պատժվում էր դրամական տուգանքներով, 10-15 օր կալանքով կամ մեկ-երկու ամիս ուղղիչ աշխատանքներով: Մանր խուլիգանություններ էին համարվում հասարակական կարգն ու քաղաքացիների հանգիստը խանգարելը, հասարակական վայրերում զազրախոսությունը, քաղաքացիներին վիրավորական ձևով հետամտելը (հալածելը) և այլ նմանօրինակ գործողությունները: Առավել խիստ պատիժ էր սահմանվում կանխամտածված, հասարակական կարգի կոպիտ խախտումներ, չարամիտ խուլիգանություններ, պարբերաբար մանր խուլիգանական արարքներ կատարողների համար: Վերջինները կարող էին մեկից մինչև 5 տարի ժամանակով ազատազրկման դատապարտվել: Այդ գործողությունները հրազենի, դանակի կամ այլ սառը զենքի գործածությամբ կատարելու դեպքում ազատազրկման ժամկետ էր սահմանվում 3–7 տարին:

Հարբած վիճակում հանցագործություն կատարելը ծանրացուցիչ հանգամանք էր դիտվում: Դրամական տուգանք էր սահմանվում հասարակական վայրերում խմած հայտնվելու դեպքում[4]:

Հենց նույն օրը՝ հուլիսի 26-ին, ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը որոշում ընդունեց «Խուլիգանության համար պատասխանատվությունն ուժեղացնելու մասի» հրամանագիրը կիրառելու կարգի մասին[5]: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ նույն հուլիսի 26-ին Գերագույն խորհրդի նախագահությունը հաստատեց նաև ազատազրկման վայրերից ազատված անձանց նկատմամբ միլիցիայի մարմինների վարչական հսկողության կանոնադրությունը, որը տարածվելու էր նաև մինչև հրամանագրի հրապարակումն ազատազրկման վայրերից ազատված այն անձանց վրա, որոնց դատվածությունը վերացված կամ մարված չէր: Ըստ այդմ՝ կանոնադրությամբ ավելի էր խստացվում վաղաժամկետ ազատված կամ քրեական անցյալ ունեցող քաղաքացիների նկատմամբ միլիցիայի հսկողությունը, ինչը հիմնավորվում էր վերջինների կողմից նոր հանցագործություններ կատարելը կանխելու և դաստիարակչական նկատառումներով[6]:

ԽՍՀՄ-ում խուլիգանական արարքների դեմ պայքարը կազմակերպված բնույթ ստացավ միայն Գերագույն խորհրդի նախագահության վերը նշված հրամանագրի հրապարակումից հետո: Հրամանագիրը և նրանից բխող միջոցառումները զգալիորեն նպաստեցին ինչպես ողջ միությունում, այնպես էլ Հայկա-

---

[4] «ՍՍՀՄ Գերագույն սովետի տեղեկագրեր», Մոսկվա, 1966, N 30, էջ 582-586:

[5] Նույն տեղում, էջ 586-588:

[6] Նույն տեղում, էջ 588-591:

կան ԽՍՀ-ում խուլիգանության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը[7]:

Ընդգծենք, որ արձանագրված հանցավոր դեպքերի շարքում խուլիգանական արարքները նկատելի քանակ էին կազմում ինչպես մայրաքաղաք Երևանում, այնպես էլ շրջաններում: Այսպես՝ 1967 թ. Երևանի Մյասնիկյանի շրջանում կատարված 230 հանցագործության դեպքից խուլիգանություն էր եղել 85-ը (37 %-ը), Լենինականում արձանագրված 422 հանցագործության դեպքից՝ 133-ը (32 %-ը), իսկ Կիրովական քաղաքում եղել էր խուլիգանության 60 դեպք[8]: Ի դեպ, վիճակագրական այս տվյալները ոչ բոլոր շրջաններին էր բնորոշ: Նույն 1967 թ. Սպիտակի շրջանում կատարված 68 հանցագործությունից խուլիգանություն էր եղել 5.4 %-ը, Բասարգեչարի շրջանում գրանցված 76 հանցագործության դեպքից՝ 2.6 %-ը[9]: Ենթադրելի է, որ շրջաններում մանր հանցանքների, խուլիգանության դեպքերի կոծկումներ են եղել, ինչն անելը մեծ քաղաքներում այնքան էլ դյուրին չէր:

Այդուհանդերձ, չնայած պետության կողմից իրականացվող կանխարգելիչ միջոցառումներին, իրավապահ մարմինների՝ խուլիգանության դեմ ծավալած պայքարին, գոյություն ունեցող օբյեկտիվ գործոնները նպաստում էին խուլիգանության տարածմանը: Խուլիգանական արարքների տարածվածության հիմնական պատճառներ կարելի է համարել՝ հասարակության հանդուրժող վերաբերմունքը, երիտասարդների՝ ալկոհոլի չարաշահմանը հակվածությունը, բնակչության կենցաղային անհար-

---

[7] Արշակյան Ի.Վ., նշվ. աշխ., էջ 5:
[8] ՀԱԱ, ֆ. 571, ց. 10, գ. 137, թ. 1, 37, 177:
[9] Նույն տեղում, թ. 64, 73:

մարությունները, երիտասարդության դաստիարակության հարցում եղած բացերը և այլն:

Հասարակական տրամադրություններն ու տարածված պատկերացումները նպաստում էին խուլիգանական արարքների ծավալների ավելացմանը: Հայկական հասարակության, աշխատանքային կոլեկտիվների, նաև տուժողների հանդուրժող կամ անտարբեր վերաբերմունքը մեծ չափով պայմանավորված էր նախկինից եկող ավանդական մտածելակերպով, միջանձնային խնդիրները ոչ թե իրավական ճանապարհով, այլ հասարակական չգրված կանոններով լուծելու գործելաոճով: Այս մտածելակերպի արմատավորմանն էականորեն նպաստում էր հետպատերազմյան շրջանում ողջ ԽՍՀՄ-ում տարածում գտած ոչ կանոնադրային կենցաղը, «գողական մտածելակերպը» և իբրև այս ամենի հետևանք՝ երիտասարդների՝ սեփական բնակավայրում, թաղամասում կամ բակում «սպիտակ ագռավ» համարվելուց խուսափելը: Քաղաքացիները ոչ միայն քայլեր չէին իրականացնում խուլիգանական հանցագործությունները կանխելու, դրանց դեմ պայքարելու նպատակով, այլև ականատեսները հաճախ հովանավորում էին հանցագործին, սուտ ցուցմունքներ տալիս, կամ ինչ-ինչ պատճառներով հրաժարվում սկզբնական ցուցմունքներից, թաքցնում դեպքերը[10]: Այս հատկանիշները հատուկ էին նաև միլիցիայի ծառայողներին, ովքեր նույնիսկ դատարաններում երբեմն սուտ ցուցմունքներ էին տալիս[11]: Իսկ 1967 թ. Լենինական քաղաքին վերաբերող մի զեկուցագրում կարդում ենք, որ խուլիգանական ոտնձգությունների դեմ մղվող

---

[10] Նույն տեղում, գ. 136, թ. 46, գ. 137, թ. 74:

[11] ՀԱԱ, ֆ. 116, ց. 6, գ. 46, թ. 7:

պայքարում առանձին քաղաքացիներ աչքի չեն ընկել, լավագույն դեպքում նրանք հանդես են եկել իբրև վկա[12]:

Իբրև վերը նշվածի հետևանք՝ խուլիգանության տարածմանը նպաստում էր նաև աշխատանքային կոլեկտիվների անտարբերությունը, միլիցիայի որոշ աշխատակիցների, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարների կողմից ցուցաբերվող հովանավորչությունը, «անհոգի վերաբերմունքը»: Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից տեսնում ենք, որ հասարակական կարգը խանգարելու, մանր խուլիգանական արարքներ կատարելու, հարբեցողությամբ զբաղվելու դեպքում կոլեկտիվի անդամները ոչ միշտ էին հայտնում հիմնարկ-ձեռնարկության ղեկավարությանը, հաճախ էլ կատարված հաղորդումներն անուշադրության էին մատնվում և չէին քննվում: Մեղավորները ոչ միայն անպատիժ էին մնում, այլև նույնիսկ հրապարակային պարսավանքի չէին արժանանում[13]: 1966–1967 թթ. Աբովյանի շրջանին վերաբերող մի փաստաթղթում ընդգծվում էր, որ հիմնարկ-ձեռնարկությունների ու կոլտնտեսությունների ղեկավարները հասարակական կարգը խախտողների նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունք ձևավորելուն ուղղված քայլեր, այդ թվում՝ ներգործության արդյունավետ միջոցներ (պարգևատրումներից, հանգստյան տների արտոնյալ ուղեգրերից զրկելը, բնակելի տարածություն ստանալու հերթը հետաձգելը և այլն) չէին իրականացնում[14]:

Ինչպես տեսնում ենք, հանրության շրջանում առավել ընդունված էր չգրված կանոններով առաջնորդվելը, քան թե գոր-

---

[12] ՀԱԱ, ֆ. 571, ց. 10, գ. 137, թ. 1:
[13] Նույն տեղում, գ. 136, թ. 154:
[14] Նույն տեղում, գ. 137, թ. 18:

ծող օրենսդրությանը հետևելը: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ այս մտածելակերպը, ոգելից խմիչքի չարաշահումը, հակաօրինական արարքներ կատարելուն հակվածությունը հատկապես բնորոշ էր երիտասարդներին (որոնց շրջանում կային կոմունիստական կուսակցության անդամներ ու կոմերիտականներ), ինչպես նաև դեռահասներին[15]: Այսինքն՝ պետության կողմից մի քանի տասնամյակ իրականացվող գաղափարաքարոզչական աշխատանքները սպասված արդյունքը չէր ունեցել:

Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից հստակ երևում է, որ Խորհրդային Հայաստանում խուլիգանական արարքներին նպաստող առաջնային հանգամանքներից էր ալկոհոլի չարաշահումը: Առօրյա կյանքում խուլիգանական արարքների մշտական ուղեկիցը հարբեցողությունն էր: Որպես կանոն, մեծ թիվ էին կազմում ոգելից խմիչքի ազդեցությամբ կատարված խուլիգանական արարքները: Սա հանրապետության ողջ տարածքին բնորոշ երևույթ էր:

Շատ հաճախ քաղաքացիները հարբած վիճակում հակահասարակական արարքներ էին կատարում իրենց աշխատավայրերում կամ մարդաշատ վայրերում[16]: Այս պատճառով է, որ 1968 թ. հուլիսի 22-ին գումարված Երևանի Սպանդարյանի շրջխորհրդի նստաշրջանը շրջգործկոմին հրահանգեց. «Ակտիվ պայքար կազմակերպել հակահասարակական, պարազիտային

---

[15] Նույն տեղում, գ. 136, թ. 46–47, ՀԱԱ Կոտայքի մարզային մասնաճյուղ, ֆ. 1, ց. 4, գ. 65, թ. 5–6:

[16] ՀԱԱ, ֆ. 30, ց. 33, գ. 16, թ. 44–46:

կյանք վարող տարրերի դեմ, միջոցներ ձեռնարկել նրանց հարկադրաբար աշխատանքի ներգրավելու ուղղությամբ»[17]:

Առանձնապես խնդրահարույց հանգամանք էր դիտվում ոգելից խմիչքի ազատ և անսահմանափակ վաճառքը: Հանրապետության գրեթե բոլոր շրջաններին վերաբերող զեկուցագրերում հատուկ շեշտվում էր, որ խուլիգանական արարքների հեղինակների ճնշող մեծամասնությունը չարաշահել է ոգելից խմիչքը: Գորիսի դատախազի 1969 թ. հունվարի 3-ով թվագրվող զեկուցագրում նշվում էր, որ շրջանում 1968 թ. խուլիգանության մեջ մեղադրվողների 74 %-ը հանցագործությունը կատարել է հարբած վիճակում: «Տաթևհեկշինի և Գորիսի քաղկոոպի հասարակական սննդի օբյեկտներում առանց սահմանափակման հաճախորդներին բաց են թողնում ոգելից խմիչքներ, որը հանդիսանում է հասարակական կարգի խախտման հիմնական պատճառը»[18], – նշում էր նա: Ալկոհոլային խմիչքների վաճառքի հետ կապված նմանատիպ փաստերը բազմաթիվ են: Իրավապահ մարմինների զեկուցագրերից տպավորություն է ստեղծվում, թե որ հիմնարկ-ձեռնարկության մոտակայքում ոգելից խմիչքների անսահմանափակ վաճառքի կետեր կային, ապա այդ աշխատանքային կոլեկտիվներում անպակաս էին վեճերը, ալկոհոլի ազդեցությամբ և սառը զենքի գործադրմամբ կատարվող խուլիգանական արարքները: Բանն այն է, որ երիտասարդների մեծամասնության շրջանում տարածված սովորություն էր գրպանում դանակ պահելը, հայհոյելը, ճաշի ընդմիջմանը ոգելից խմիչք օգտագործելը, կենցաղային հարցերի շուրջ վիճաբանությունները և այլն:

---

[17] ՀԱԱ, ֆ. 571, ց. 10, գ. 136, թ. 35-36:
[18] Նույն տեղում, թ. 155:

Երբեմն հասարակական կարգը խախտողների լկտիությունը չափ ու սահման չուներ: Այսպես՝ հանրապետության գյուղերից մեկի բնակիչ Հովհաննիսյանը 1967 թ. նոյեմբերի 11-ի գիշերը հարբած մոտենում է ամուսինը նոր կորցրած համագյուղացի Բաղդասարյանի բնակարանին և առաջարկում դուռը բացել: Բացասական պատասխան ստանալով՝ Հովհաննիսյանը սկսում է հայհոյել Բաղդասարյանին և դանակը ձեռքին հայտարարում, թե պետք է բռնաբարի նրան և սպանի: Տեսնելով, որ համագյուղացին ջարդում է դռան և լուսամուտի ապակիները, կինը երեխաներից մեկին պատուհանով ցած է իջեցնում՝ հարևաններին օգնության կանչելու համար: Ժամանած հարևանների կանայք Հովհաննիսյանին տեսնում են տաբատը իջեցրած և դանակը թափահարելով հայհոյանքներ տեղալիս: Միայն համագյուղացի տղամարդկանց գալուց հետո խուլիգանական արարք կատարողը փախուստի է դիմում: Ժողդատարանի որոշմամբ նա դատապարտվում է 6 տարվա ազատազրկման[19]: Այս օրինակը հնչեղության ստացած գործի մասին է: Նմանատիպ տասնյակ քրեական գործեր են պահվում ՀԱԱ-ի՝ ՀԽՍՀ դատախազության արխիվային ֆոնդում: Բազմաթիվ այլ դեպքերում գործերը դատական մարմիններին չէր հասնում. հանրային պատկերացումների համաձայն՝ իրավապահ մարմիններին դիմելը ոչ պատվաբեր արարք էր համարվում, ինչը, բնականաբար, նպաստում էր անպատժելիությանն ու հանցավոր արարքների ավելացմանը:

Խուլիգանության տարածմանը նպաստող հանգամանքների շարքում երրորդականներից չէր նաև բնակչության առօրյա կյանքում առկա կենցաղային անհարմարությունները: Կենցա-

---

[19] Նույն տեղում, գ. 137, թ. 28–29:

ղային հողի վրա հարևանների միջանձնային պարզաբանումները հաճախ վերաճում էին խուլիգանական արարքների՝ մանավանդ միևնույն բնակարանում հարևանությամբ մեկից ավելի ընտանիքների բնակվելու դեպքում: Երևան քաղաքին վերաբերող 1968 թ. դեկտեմբերի 30-ով թվագրվող մի զեկուցագրում կարդում ենք. «Ընդհանուր հարմարություններից օգտվելու կամ այլ պատճառներից առաջացած վեճերը ծավալվում և տեղիք են տալիս խուլիգանության»[20]: Սա ուշադրության արժանի հանգամանք է:

Այս ամենի կողքին, որքան էլ զարմանալի թվա, մայրաքաղաք Երևանի և հանրապետության մյուս քաղաքների թաղամասերի, փողոցների ոչ բավարար լուսավորությունը իրավապահ մարմինների զեկուցագրերում խուլիգանության դեպքերի ավելացմանը նպաստող գործոն չէր դիտվում:

Արխիվային փաստաթղթերի և հատկապես դատական գործերի ուսումնասիրության ժամանակ մեր ուշադրությունը գրավեց այն հանգամանքը, որ խուլիգանական արարքներ կատարողների մեծամասնությունը ծնվել էր 1930-ականներին, իսկ նրանց մանկությունն անցել էր Հայրենական պատերազմի տարիներին: Բնականաբար, այդ երիտասարդներից շատերի հայրերը կա՛մ ստալինյան բռնաճնշումների զոհեր էին, կա՛մ էլ Կարմիր բանակ զորակոչվածներ (որոշների դեպքում՝ ռազմի դաշտից հետ չվերադարձածներ): Այն է՝ նրանք ծնողական սահմանափակ խնամք ստացած անձիք էին, որոնց դաստիարակության մեջ ընտանիքի և դպրոցի կողքին կարևոր մաս էր ունեցել նաև «փողոցը»՝ իր բոլոր բացասական հետևանքներով:

---

[20] Նույն տեղում, գ. 136, թ. 207:

1960-ականների երկրորդ կեսին ինչպես ողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հայկական ԽՍՀ մայրաքաղաք Երևանում և հանրապետության շրջաններում խուլիգանության դրսևորումների դեմ սուր պայքար ծավալվեց, ինչի արդյունքում խուլիգանության հանցակազմով մեղադրական գործերի ու դատավարությունների թիվն ավելացավ: Բանն այն է, որ հանցավորության ցածր ցուցանիշ ցույց տալու նպատակով, երբեմն էլ անձնական կամ խմբային շահերից ու շահագրգռություններից ելնելով իրավապահ համակարգի ներկայացուցիչները միշտ չէ, որ արձանագրում էին մանր խուլիգանությունները, իսկ ծանր հանցագործություններն էլ վերաորակավորում էին իբրև մանր խուլիգանություններ: Կենտրոնից հրահանգված խստացումների հետևանքով 1960-ականների երկրորդ կեսին Հայկական ԽՍՀ-ում խուլիգանական դեպքերի արձանագրումների թիվն ավելացավ, սակայն փաստացի իրական թվի նվազում տեղի ունեցավ (այդ թվում՝ չարամիտ խուլիգանության դեպքերի մասով)[21]: Ի դեպ, մանր խուլիգանության համար կալանավորված քաղաքացիները, որպես կանոն, պարտադիր ընդգրկվել են ֆիզիկական աշխատանքներում: Նրանք աշխատել են շինարարությունում, մաքրել փողոցները և այլն[22]:

Այսպիսով՝ հետպատերազմյան առաջին տասնամյակներին Խորհրդային Հայաստանի բնակչության առօրյա կյանքում տարածված դրսևորումներից էր երիտասարդների շրջանում ալկոհոլի օգտագործումը (երբեմն՝ չարաշահումը), դանակներով շրջելը, խմբային պարզաբանումները (ռազբորկաները): Իբրև

---

[21] Նույն տեղում, թ. 78, ՀԱԱ Կոտայքի մարզային մասնաճյուղ, ֆ. 20, ց. 4, գ. 101, թ. 1–4:

[22] ՀԱԱ, ֆ. 571, ց. 10, գ. 137, թ. 8, 59, 66, 195:

այս ամենի հետևանք՝ նկատելի քանակ էին կազմում ոգելից խմիչք օգտագործած վիճակում և սառը զենքի գործածությամբ կատարված խուլիգանական արարքները: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ այսպիսի արարքներ կատարողների մեծամասնությունը քրեական անցյալ, դատվածություն չունեցող սովորական քաղաքացիներ էին (բանվորներ, կոլտնտեսականներ, ինժեներներ և այլն):

Амо К. Сукиасян, *Институт истории НАН РА, к.и.н., доцент,* **Проявления хулиганства в повседневной жизни населения Советской Армении (вторая половина 1960-х годов)** – Одной из особенностей повседневной жизни советских лет по праву можно считать хулиганство, которое было одним из наиболее распространенных антиобщественных действий среди широких слоев общества.

Во второй половине 1960-х годов как по всему Советскому Союзу, так и в Армянской ССР началась широкая борьба с проявлениями хулиганства. Издание указа Президиума Верховного Совета СССР от 26 июля 1966 года «Об усилении ответственности за хулиганство» и вытекающие из него меры значительно способствовали повышению эффективности борьбы с хулиганством. Среди хулиганских преступлений заметное число составляли преступления, совершенные в нетрезвом состоянии и с применением холодного оружия. Большинство совершающих такие действия составляли молодые, не имеющие криминального прошлого и судимости лица-рабочие, колхозники, инженеры и др.

Hamo K. Sukiasyan, *NAS RA Institute of History, PhD in History, assistant professor*, **Manifestations of hooliganism in everyday life of the population of Soviet Armenia (second half of the 1960s)** – One of the everyday life peculiarities of Soviet years can be righteously considered hooliganism which was the most widespread of anti-social actions manifested among the broad circles of the population.

In the second half of the 1960s, there was a sharp struggle against the hooliganism in both the entire Soviet Union and Yerevan – the capital city of the Armenian SSR and in the regions of the republic. The publication of the Decree "On Strengthening Responsibility for Hooliganism" by the Presidency of the USSR Supreme Soviet as of July 26, 1966 and the measures deriving from it significantly contributed to the increase of the efficiency of the fight against hooliganism in the whole union as well as in the Armenian SSR. The point is that in Soviet Armenia there was a considerable quantity of actions of hooliganism committed under the influence of alcoholic drinks and with usage of cold weapons. The majority of those who committed such acts were youngsters with no criminal past (workers, collective farmers, engineers, etc.) who had not convicted before.

ՌՈՒԲԵՆ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.դ.

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ. ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Բանալի բառեր՝ Մերձավոր Արևելք, ԱՄՆ արտաքին քաղաքականություն, Սիրիական ճգնաժամ, Երուսաղեմի խնդիր, քրդական հարց, միջնորդավորված պատերազմ, Իրան:

Հայ ժողովրդի պատմությունն անքակտելիորեն կապված է Մերձավոր Արևելքի հետ, որը հանդիսացել է այն անմիջական կենսական տարածքը, ուր կայացել է Հայոց պետականությունը՝ արձանագրելով իր անկումներն ու վերելքները, հաղթահարելով գոյութենական բնույթ ունեցող սպառնալիքները, բախվել խաղաղության և պատերազմի հարցեր լուծելու պարտադրանքներին: Ակնհայտ է, որ այսօր Մերձավոր Արևելքում կատարվող իրադարձություններին ուշի ուշով հետևելն ու հետագա զարգացումների կանխատեսումը պետք է հանդիսանա ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական գործառույթներից մեկը:

2017 թ. վերջին ԱՄՆ նախագահ Դ. Թրամփի հայտարարությունը Երուսաղեմի վերաբերյալ[1] և դրանից հետո ծավալված

[1] https://www.whitehouse.gov/briefings-statements/statement-president-trump-jerusalem/

բուն քննարկումները, քննադատություններն ու խորը մտահոգությունները, այդ թվում նաև Հայաստանում, պարտադրում են մեզ «հայացք նետել Երևանից» Մերձավոր Արևելքում ստեղծված իրավիճակին՝ փորձելով վերլուծել ՀՀ-ի համար դրա հեռանկարներն ու սպառնալիքները:

Մի կողմ թողնելով ԱՄՆ նախագահի հայտարարության ներքաղաքական դրդապատճառներին առնչվող միանգամայն հիմնավոր վարկածները (քրիստոնյա սիոնիստական աջակցության ապահովում, իմփիչմենթի հեռանկար և այլն), նախ փորձենք պատասխանել այն հարցին. թե ինչո՞վ էր պայմանավորված ամերիկյան դեսպանությունը Երուսաղեմ տեղափոխելու մասին ԱՄՆ նախագահի հայտարարության համար այս ժամանակի ընտրությունը, այնուհետև վերլուծենք, թե ի՞նչ կարող է նշանակել այդ հայտարարությունը ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության համար ու ի՞նչ ազդեցություն այն կարող է ունենալ Երուսաղեմում հայկական ներկայության ու հայկական շահերի պաշտպանության վրա:

Նախ պետք է արձանագրենք, որ ԱՄՆ-ի Սենատն ու Ներկայացուցիչների պալատը «Երուսաղեմի դեսպանության» մասին հանրային օրենքը (Jerusalem Embassy Act)[2] ընդունել էին դեռևս 1995 թ., որի համաձայն ոչ միայն հստակեցվել էր Թել-Ավիվից Երուսաղեմ ԱՄՆ դեսպանության տեղափոխման ժամկետը՝ մինչև 1999 թ. մայիսի 31-ը, այլև 1996–1997 թթ. պետքարտուղարության բյուջեով հատկացվել էր 100 մլն ԱՄՆ դոլար (համապատասխանաբար՝ 25 մլն և 75 մլն) «դեսպանության նոր շենքի կառուցման և այլ ծախսերի» համար: Սակայն վերոհիշյալ օրենքի

[2] https://www.congress.gov/104/plaws/publ45/PLAW-104publ45.pdf

գործադրումը շարունակաբար վեց ամիս ժամկետով կասեցվել է Դ. Թրամփին նախորդած ԱՄՆ երեք նախագահների կողմից՝ «ազգային անվտանգության նկատառումներից» ելնելով: Նկատենք նաև, որ Երուսաղեմի վերաբերյալ իր հայտնի հայտարարությունից առաջ՝ 2017 թ. հունիսի 1-ին, Թրամփը նույնպես վեց ամսով արգելափակեց վերոնշյալ օրենսդրական ակտի գործողությունը[3]: Սակայն, 2017 թ. դեկտեմբերի սկզբին ԱՄՆ նախագահը ուներ միայն երկու տարբերակ՝ կամ պետք է երկարաձգեր օրենքի արգելափակումը կամ էլ կատարեր իր նախընտրական խոստումը՝ արտահայտելով իր հստակ դիրքորոշումը, ինչն էլ նա արեց: Սակայն մեզանում աննկատ անցավ այն, որ հայտարարությամբ հանդես գալով և դեսպանության տեղափոխումն ընթացքի մեջ դնելով՝ ԱՄՆ նախագահը, այդուհանդերձ, այս անգամ ևս վեց ամսով արգելափակեց օրենքը՝ լսելով իր խորհրդականների ու պետքարտուղարության հորդորներն առ այն, որ դեսպանատան տեղափոխումը երկարատև գործընթաց է և «անվտանգությունից» բացի, կախված է տեխնիկական տարաբնույթ մի շարք խնդիրներից[4]:

Հայտարարության ժամանակի ընտրությունը, մեր կարծիքով, ուղղակիորեն պայմանավորված չէր սիրիական ճգնաժամի վերջին զարգացումներով կամ տարածաշրջանային այլ նկատառումներով:

Սակայն, եթե հայտարարության ժամանակի ընտրությունը ուղղակի առնչություն չուներ տարածաշրջանային զարգացումնե-

---

[3] https://www.whitehouse.gov/presidential-actions/presidential-memorandum-secretary-state/

[4] https://www.nytimes.com/2017/12/06/us/politics/trump-embassy-jerusalem-israel.html

րի հետ, ապա ինքնին **հայտարարության որոշումը ակնհայտորեն ուներ թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքական դրդապատճառներ:**

Ներքինի մասին շատ է խոսվել, իսկ ինչ վերաբերում է հայտարարության արտաքին դրդապատճառներին, ապա դրանք լիովին տեղավորվում են դեռևս Ջ.Բուշի նախագահության օրոք **ձևակերպված, սակայն դեռևս վերջնական տեսք չստացած,** ԱՄՆ տարածաշրջանային նոր ռազմավարության շրջանակներում: Առաջին կարևոր դրդապատճառը կապված էր սիրիական ճգնաժամին ՌԴ-ի ակտիվ ներգրավման հետ: Փաստորեն, ԽՍՀՄ փլուզումից հետո առաջին անգամ Մերձավոր Արևելք վերադարձավ Ռուսաստանը, որը ոչ միայն հաջողություն արձանագրեց, այլև Միջերկրականի Տարտուս նավահանգստում ստացավ մշտական ռազմակայան տեղակայելու իրավունք, ինչը չէր հաջողվել անգամ Խորհրդային Միությանը: Երկրորդը, մեր կարծիքով, տարածաշրջանում Իրանի դիրքերի աստիճանական ամրապնդումն ու արաբական երկրների ներքին գործերի ու տարածաշրջանային գործընթացների վրա ներազդելու՝ Իրանի կարողությունների կտրուկ ավելացումն էր: Եվ, վերջապես՝ Թուրքիայի հետ ԱՄՆ ռազմավարական դաշնության ակնհայտ թուլացումն ու երկկողմ հարաբերություններում առկա խորը անջրպետը և անվստահությունը:

Թրամփի հայտարարությունը տրամաբանական ավարտին հասցրեց այն, ինչ տարիներ ի վեր տեղի էր ունենում ԱՄՆ-ի Մերձավորարևելյան քաղաքականության մեջ, որի շրջադարձը, ինչպես արդեն նշեցինք, սկսվել էր դեռևս Ջ. Բուշի նախագահության օրոք: 2005 թ. հուլիսին Կահիրեի ամերիկյան համալսարանում առաջին անգամ իր ելույթում այդ մասին ակնարկեց պետ-

քարտուղար Քոնդոլիզա Ռայսը: Խոսելով տարածաշրջանում ԱՄՆ քաղաքականության մասին՝ նա առաջին անգամ հրապարակավ նշեց, որ անցած 60 տարիների ընթացքում Վաշինգտոնի հիմնական մտահոգությունը տարածաշրջանում եղել է կայունության ապահովումը՝ ժողովրդավարության հետ կապված հարցերի վրա աչք փակելու հաշվին: Այժմ, հատկապես սեպտեմբերի 11-ից հետո, ԱՄՆ-ն նոր քաղաքականություն է որդեգրել. չհամարելով կայունության ապահովումը առաջնային խնդիր՝ «սատարել դեմոկրատական արժեքների տարածմանն ու հաստատմանը»: «Ժողովրդավարության ու ազատության սկզբունքների սերմանումը Մերձավոր Արևելքում Միացյալ Նահանգների համար կարևոր է նաև ազգային անվտանգության (ԱՄՆ-ի համար առավել անվտանգ միջավայր ձևավորելու) տեսանկյունից»,- հայտարարել էր ԱՄՆ պետքարտուղարը[5]:

Փաստորեն, դեռևս տարիներ առաջ էր հաստատվել Մերձավոր Արևելքում արաբական երկրներին ու վարչակազմերին ցուցաբերվող ամերիկյան քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ աջակցության կրճատման քաղաքական **նոր ուղեգիծը**, ինչն անխուսափելիորեն հանգեցնելու էր նաև տարածաշրջանում **ԱՄՆ-ի ռազմական, քաղաքական ու դիվանագիտական ներկայության աստիճանական նվազմանը՝ նրա տարածաշրջանային դերի ու դիրքերի անխուսափելի թուլացմամբ**: Այսպիսով, Միացյալ Նահանգները նախընտրեց վերադառնալ տասնամյակներ առաջ՝ դեռևս «սառը պատերազմի» տարիներին բնորոշ քաղաքականությանը՝ նվազագույնի հասցնելով ամերիկյան անմիջական ներկայությունը տարածաշրջանում և փորձելով

---

[5] Եգիպտոսում ՀՀ դեսպանության հեռագիրը՝ ԱՄՆ պետքարտուղար Ք. Ռայսի այցելության վերաբերյալ: 20.07.2005:

«տարածաշրջանային հենարան» պետությունների միջոցով վերահսկել իրավիճակն ու ազդել այնտեղ տեղի ունեցող զարգացումների վրա: ԱՄՆ նախագահ Դ. Թրամփի հայտարարությունը Երուսաղեմի վերաբերյալ վերջակետ դրեց ամերիկյան այդ նոր քաղաքականության ձևավորման ընթացքին: ԱՄՆ-ն անուղղակիորեն ազդարարեց Իսրայելի գլխավորությամբ նոր ամերիկյան (այլևս՝ ոչ արևմտյան)[6] տարածաշրջանային առանցքի ձևավորման մասին, որը մոտակա տարիներին, եթե ոչ տասնամյակներում, հանդիսանալու է Վաշինգտոնի հենարանը՝ ի հակակշիռ Իրանի և վերջինիս շուրջը միավորվող շիական դաշինքի:

Անհերքելի է, որ ԱՄՆ նախագահի վերոնշյալ հայտարարությունը նոր լարվածություն առաջացրեց պաղեստինա-իսրայելական ճակատում, Միացյալ Նահանգները զրկվեց պաղեստինա-իսրայելական խաղաղության անավարտ գործընթացում «միջնորդի» կարգավիճակից[7], հարցականի տակ դրվեցին «խաղաղության գործընթացի» ապագան ու հեռանկարները, նոր բաժանարար գծեր հայտնվեցին առանց այդ էլ միասնականությունից զուրկ արաբական երկրների միջև, լուրջ հարված հասցվեց ԱՄՆ-ի դիրքերին արաբական և իսլամական աշխարհում: Սա-

---

[6] Այս և այլ հարցերում ԱՄՆ-ԵՄ-ի միջև առկա տարաձայնությունները, Brexit-ը և այլ զարգացումները հաշվի առնելով:

[7] Թեև պետք է արձանագրենք, որ Մադրիդում մեկնարկած «խաղաղության գործընթացի» արդյունքում 1993 թ. Օսլոյում ձեռք բերված պաղեստինա-իսրայելական համաձայնության մեջ ԱՄՆ-ն որևէ դերակատարություն չի ունեցել, իսկ ինչ վերաբերում է 1994 թ. իսրայելա-հորդանանյան պայմանագրի ստորագրմանը, ապա դրանում Վաշինգտոնի մասնակցությունը եղել է զուտ արարողակարգային, քանի որ ուղղակի շփումները Հորդանանի և Իսրայելի միջև միշտ գոյություն են ունեցել, և Հորդանանի դեպքում «լուրջ» միջնորդական ջանքերի մասին խոսելն անհարկի է: Մինչդեռ առանցքային՝ պաղեստինյան և սիրիական ուղղություններով ԱՄՆ-ի միջնորդական ջանքերը որևէ արդյունք չտվեցին:

կայն ամենաէականն այն էր, որ Դ. Թրամփն ամրագրեց այն, ինչից փորձում էր խուսափել կամ ձեռնպահ մնալ Բ. Օբաման՝ Իսրայելին վերապահելով առաջնային և անփոխարինելի դերակատարություն Մերձավոր Արևելքում ձևավորվող նոր աշխարհակարգում:

Այսօր այլևս քչերն են կասկածում, որ ԱՄՆ 45-րդ նախագահը լրջորեն մտադրված է Իսրայելին հատկացնել տարածաշրջանում «առաջին ջութակի» դերակատարությունը, որի շուրջ գործնականում սակայն ոչ հրապարակայնորեն կհամախմբվեն Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան և Ծոցի այլ երկրներ՝ ի հակակշիռ Իրանի և վերջինիս ազդեցության տակ գտնվող արաբական երկրների՝ Իրաք, Սիրիա, Լիբանան, Եմեն ու ռազմաքաղաքական ուժերի՝ Հեզբոլլահ, Համաս և այլն:

Թուրքիա-ԱՄՆ հարաբերությունների անկասելի վատթարացման պայմաններում շարունակում է աճել Իսրայելի նշանակությունն ու կարևորությունը Վաշինգտոնի համար: Ամերիկյան այդ նոր ռազմավարության հեղինակների կարծիքով՝ ներիսլամական սուննի-շիա հակամարտության խորացման պայմաններում և դրա արդյունքում, Իսրայելը կարող է վերջնականապես հաստատվել տարածաշրջանային գերտերության կարգավիճակում: Փաստորեն, ԱՄՆ-ի կողմից Թել-Ավիվին անփոխարինելի դերակատարություն է վերապահված Իրանում (Ադրբեջանի միջոցով) և ապագայում միգուցե Թուրքիայում (քրդական հարցի) իրադրությունն ապակայունացնելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ տեղական գործողություններ իրականացնելու համար:

Վերոհիշյալ կանխատեսումները հաստատվեցին Դ. Թրամփի՝ Երուսաղեմի հայտարարությունից մի քանի օր հետո ԱՄՆ

ազգային անվտանգության նոր ռազմավարության հրապարակմամբ, ուր Իրանը դասվում է Ամերիկային սպառնացող «հիմնական վտանգների» շարքը, Հյուսիսային Կորեայի և ծայրահեղական ահաբեկիչների կողքին: Նման ձևակերպման ամրագրումը երկրի կարևորագույն փաստաթղթում հաստատում է դեռևս տարիներ առաջ արված մեր հետևյալ կանխատեսումը. «Սիրիական ճգնաժամի հանգուցալուծումից հետո Իրանը դառնալու է ԱՄՆ-ի կողմից հովանավորվող ու աջակցություն վայելող, վերը նշված տարածաշրջանային առանցքի առաջնային թիրախը՝ Իսրայելի գլխավորությամբ»[8]:

Սիրիական ճգնաժամի և Իրանի հարցերում ակնհայտ են աստիճանաբար աճող տարաձայնությունները մի կողմից ԱՄՆ-ի, ԵՄ-ի և մյուս կողմից էլ Ռուսաստանի, Չինաստանի միջև: Այդ իսկ պատճառով էլ իրավիճակը Սիրիայում սպառնում է ընդունել տեղական հարատև հակամարտության բնույթ երեք հիմնական ուժերի միջև, որոնք պատերազմը Սիրիայում վերածեցին միջնորդավորված պատերազմի (war by Proxy) տարածաշրջանային գերիշխանության համար՝ Իրանի, Սաուդյան Արաբիայի և Թուրքիայի միջև: Եթե այս ամենին էլ գումարենք արտատարածաշրջանային ուժերի ներգրավվածությունը Սիրիայում (ԱՄՆ, ՌԴ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա), ապա միանգամայն հստակ է, որ միջազգային այդպիսի լայն ընդգրկվածության պայմաններում Սիրիայի անկայունությունը սպառնում է տարածվել ողջ տարածաշրջանում և ընդունել տևական բնույթ՝ այստեղից բխող բոլոր բացասական հետ-

---

[8] Karapetian Rouben, The Place and Role of Syria in Arab-Israeli conflict 1946-2000, IsAG- The Institute of Advanced Studies in Geopolitics and Auxiliary Sciences, Rome, 2012.

ևանքներով Մերձավոր Արևելքի և գլոբալ անվտանգության համար:

Սիրիայում իշխանափոխությունը կարող է թուլացնել Իրանի դիրքերը տարածաշրջանում ու էլ ավելի մեծ դերակատարություն հատկացնել Թուրքիային: Պետք է նկատի ունենալ, որ Սիրիայում պարտություն կրելուց հետո առավել մեկուսացված ու խոցելի Իրանին չափազանց դժվար կլինի երկար ժամանակ դիմադրել միջազգային աճող ճնշմանը: Հարկ է նաև գիտակցել, որ անգամ եթե ԱՄՆ կամ նրա տարածաշրջանային դաշնակիցները ընտրեն խելահեղ՝ **Իրանի միջուկային հանգույցի ուժային լուծման** ճանապարհը, ապա դա նրանք ***կարող են իրականացնել միայն Սիրիական ճգնաժամի հանգուցալուծումից հետո***: Այդ իսկ պատճառով էլ Իրանի աջակցությունը Բաշար ալ-Ասադին հիմնված է Թեհրանի սեփական տարածաշրջանային շահերի վրա, այլ ոչ թե, ինչպես հաճախ նշվում է, կրոնական հենքի[9] վրա: Իհարկե, Իրանի և Սաուդյան Արաբիայի միջև տարածաշրջանային մրցակցությունը խաղում է իր դերը սիրիական ճգնաժամում, սակայն Սիրիա-Իրան սերտ համագործակցությունը առավել ճիշտ կլինի դիտարկել որպես կրոնական և աշխարհիկ վարչակարգերի միջև դաշինք, որն ավելի շատ բխում է Իրանի ռազմավարական և աշխարհաքաղաքական հետաքրքրություններից:

---

[9] Նկատի ունենալով Շիական գործոնը, քանի որ Բաշար Ալ-Ասադը ներկայացնում է երկրի ալավիական համայնքը: Ալավիներին ընդունված է համարել շիա մուսուլմանների աղանդ: Սակայն Իրանի շիաները սիրիական ալավիներին չեն համարում անգամ որպես Տասներկուերրորդ դպրոցի շիական դպրոցի հետևորդներ, ինչպիսին իրենք են: Նույնպես որոշ սիրիացի ալավի շեյխեր համարում են, որ իրենք տարբեր են Իրանի շիաներից:

Սիրիական ճգնաժամը նաև հնարավորություն ընձեռեց **քրդերին** հետապնդելու սեփական ազգային նպատակները, ուժերը կոնսոլիդացնելու և արդյունքում՝ Սիրիական Քրդստանում (Ռոժավա) ինքնավարություն ստեղծելու համար, ուր ցանկացած արտաքին միջամտություն Անկարայի կողմից դիտարկվելու է որպես ամենալուրջ սպառնալիքը Թուրքիայի ազգային անվտանգությանը և արժանանալու է հզոր և անզիջում պատասխանի: Հաշվի առնելով ԱՄՆ աջակցությունը քրդերին, միանգամայն իրական է **ԱՄՆ–Թուրքիա հակասությունների** էլ ավելի **սրումը**:

Թուրքիան հանդիսանում է տարածաշրջանային գերիշխանության համար մղվող պայքարի երրորդ տերությունը՝ **Իրանի** և **Իսրայելի** հետ մեկտեղ: Արևմուտքի հետ վատթարացող հարաբերությունների հարաճուն ֆոնին, իր գրեթե բոլոր հարևանների հետ խնդիրներ ունեցող Անկարան, չցանկանալով ընկղմվել «դրսի պատվերով» սուննի-շիա վտանգավոր ու անհեռանկարային հակամարտության մեջ, փորձում է ստանձնել իսլամական աշխարհի առաջնորդի դերակատարությունը և, հակադրվելով Իսրայելին, իր կողմը գրավել պաղեստինցիներին ու արաբական աշխարհի «փողոցը»: Մյուս կողմից էլ Անկարան ձգտում է խորացնել տնտեսական համագործակցությունը Իրանի հետ՝ փորձելով Ադրբեջանի հետ ամրապնդել համագործակցության եռակողմ ֆորմատը: Թուրքիան հույսեր է փայփայում, որ առավելագույն տնտեսական և քաղաքական օգուտներ կարող է քաղել Իսրայել-Իրան սրվող հակամարտությունից:

Ինչ վերաբերում է **Երուսաղեմի հին քաղաքում հայկական թաղամասի ապագային ու հայերի ներկայությանը**, ապա պետք է նշել, որ 1967 թ. «վեցօրյա» պատերազմից հետո Արևել-

յան Երուսաղեմում գտնվող հայկական թաղամասը հայտնվեց իսրայելյան վերահսկողության տակ (մինչ այդ՝ Հորդանանի), իսկ 1980 թ. արդեն ողջ Երուսաղեմը իրավականորեն ամրագրվեց Իսրայելի կողմից որպես նրա «միասնական և անբաժան մայրաքաղաքը»: Այս ժամանակաշրջանում Իսրայել պետության կողմից Երուսաղեմում հետևողականորեն իրականացվել է հայկական Ներկայության «դուրսմղման» քաղաքականություն: Այն դրսևորվել է տարբեր միջոցներով՝ հին քաղաքում հայկական եկեղեցական ունեցվածքի, նոր քաղաքում Հայոց Պատրիարքարանի կալվածքների ձեռքբերման, սահմանափակումների գործադրման, իրավական և այլ տեսակի խտրականության, ինչի արդյունքում՝ կտրուկ նվազեց հայերի ներկայությունը և թուլացան Սուրբ քաղաքում Պատրիարքարանի ու հայության դիրքերը:

Ուստի, Թրամփի հայտարությունը ոչ մի նոր բան չի գալիս ավելացնելու այն իրավիճակին, որի մեջ վերջին տասնամյակների ընթացքում գտնվել է Երուսաղեմի հայկական համայնքը: Խնդիրներն այստեղ, իսրայելական վարվող քաղաքականությունից զատ, հայկական կողմում են՝ կապված Պատրիարքարանի ներսում տասնամյակներ ընթացող բացասական գործընթացների, Էջմիածնի հետ հարաբերությունների կաթվածահար վիճակի, Իսրայելում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության և հստակ պետական ռազմավարության բացակայության, հայկական պատմական ու նյութական ժառանգությանը տեր կանգնելու մեր անկարողության կամ ցանկության բացակայության հետ: Կկարողանա՞նք արդյոք իսրայելական քաղաքականությանը հակադրել հայկական ազգային շահերը պաշտպանող պետական քաղաքականություն, կկարողանա՞նք համայնքային ու եկեղեցական մակարդակներում վեր դասել ազգայինը անձնական և տե-

ղական մանր շահերից: Ահա այս հարցերի պատասխաններից է կախված Երուսաղեմում հայկական ներկայության ապագան և ոչ թե այս կամ այն հայտարարությունից:

Ի դեպ, պետք է հավելենք, որ հայկական թաղամասին լուրջ վտանգ էր սպառնում դեռևս 2000 թ. Քեմփ-Դևիդում պաղեստինա-իսրայելական բանակցությունների ընթացքում, երբ գործնական քննարկումներ էին ընթանում հին քաղաքը Պաղեստինի և Իսրայելի միջև Արևելյան և Արևմտյան մասերի բաժանելու վերաբերյալ: Այն ժամանակ ամրագրվեց հայկական միասնական դիրքորոշումը, որի համաձայն մեզ համար ամենաընդունելի տարբերակը Սուրբ քաղաքի միջազգային կարգավիճակի պահպանումն է, սակայն դրա անհնարինության դեպքում չի կարելի թույլ տալ հայկական թաղամասի անջատումը քրիստոնեականից: Այն ժամանակ պաղեստինա-իսրայելական բանակցություններն արդյունք չտվեցին և հարցը փակվեց:

Անհերքելի է, որ ՀՀ համար խիստ անցանկալի է իրար հակադիր Իսրայելի և Իրանի միջև տարածաշրջանային մրցակցության վերափոխումը հակամարտության և ուղղակի բախման, որը կարող է ավերիչ հետևանքներ ունենալ հատկապես առաջնային գծում գտնվող Հայաստանի համար: Անցյալ տասնամյակի ընթացքում մենք ականատես եղանք Իսրայել-Ադրբեջան համագործակցության խորացմանը, իսկ հավասարակշռության ակնհայտ շեղման պայմաններում նաև իսրայելյան վերջին փորձերին՝ բարելավելու Երևանի հետ հարաբերությունները: Այստեղ ՀՀ արտաքին քաղաքականությունը պետք է սահմանի իր կարճատև ու երկարատև ռազմավարությունը, հստակ առաջնահերթություններն ու սեփական շահերի պաշտպանության հարցում ղեկավարվի տարածաշրջանային վերոհիշյալ առանցքների միջև

ընթացող և ներկա փուլում սրման միտումներ ցույց տվող հակամարտության առկայությամբ:

Ամփոփելով՝ ընդգծենք, որ Երուսաղեմի վերաբերյալ ԱՄՆ նախագահի հայտարարությունը չէ, որ Հայաստանին ու հայությանը պետք է անհանգստացնի, այլ նոր շեշտադրումներով ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության իրական գործադրումը մասնավորապես Իրանի նկատմամբ, որը կարող է ուղղակի ազդեցություն ունենալ ՀՀ անվտանգության վրա: Մոտ ապագայում քրդական հարցի ակտիվացումը նույնպես լրջագույն մարտահրավեր է Հայաստանի Հանրապետության համար: Եվ այս ամենն ամենայն հավանականությամբ ընթանալու է թուրք-ռուսական համագործակցության անխուսափելի սերտացման պայմաններում: Սակայն մյուս կողմից էլ տարածաշրջանային ու գլոբալ այս նոր զարգացումները լայն հեռանկարներ են բացում Հայաստանի Հանրապետության առջև՝ ստեղծելով աննախադեպ հնարավորություն տարածաշրջանային գործոն ու խաղացող դառնալու, իրական «խելացի ուժի» վերածվելու համար:

Ահա թե ինչու Երևանը պետք է պատրաստ լինի ցանկացած անսպասելի զարգացումների, որոնց արդյունքում կարող է ձևավորվել նոր Մերձավոր Արևելքի այն աննախադեպ անվտանգության միջավայրը, ուր անմիջականորեն գործելու է Հայաստանի Հանրապետությունը, որի կենսունակությունն ու գոյատևումը մեծապես կախված է լինելու հենց այդ զարգացումների ընթացքից և դրանց հանդեպ ՀՀ ճշգրիտ հաշվարկված տարածաշրջանային քաղաքականությունից և այն հմտորեն իրականացնող հայկական դիվանագիտությունից:

Рубен К. Карапетян, *Институт истории НАН РА, д.и.н.,* **Последние геополитические развития на Ближнем Востоке, последствия и перспективы для Армении** – На протяжении всей истории армянского народа Ближний Восток оказывал значительное влияние на жизнедеятельность и развитие армянской государственности. Ее победы и поражения, вопросы мира и войны, а также взлеты и падения в значительной степени связаны именно с этим регионом.

Очевидно, что в течение последних лет на Ближнем Востоке происходят геополитические изменения, которые будут иметь непосредственное влияние на продвижение национальных интересов Армении и на будущее страны. Практическое приложение региональной политики США с новым более жестким акцентом, в частности по отношению к Ирану, может иметь прямое влияние на безопасность РА. Обострение борьбы за региональное лидерство (Иран, Саудовская Аравия, Турция и Израиль), а также возможная активизация курдского вопроса в ближайшем будущем могут стать серьезным испытанием для Еревана. С другой стороны, новые геополитические развития в регионе открывают для РА беспрецедентные возможности для использования «умной силы» и превращения страны в регионального фактора и игрока.

Ruben K. Karapetyan, *NAS RA Institute of History, Doctor of Historical Sciences,* **Recent geopolitical developments in the Near East, consequences and perspectives for Armenia** – The history of Armenian nation is closely linked to the Middle East, which played the crucial role in well being and development of Armenian

statehood, recording the latter's rises and falls, overcoming deadly threats, coming across coercion of solving problems of war and peace.

It is obvious that during last years the immense geopolitical developments have taken place in the Middle East, which in their turn will undoubtedly have influence on pushing forward national interests of the Republic of Armenia and the future of the country. The practical implementation of a new more tough US Middle Eastern policy, especially towards Iran, might have direct impact on security of the RA. The deepening struggle for regional leadership (Iran, Saudi Arabia, Turkey and Israel) and the possible activation of Kurdish question in the near future might bear serious challenges for Yerevan. From the other side, these new geopolitical developments also create unprecedented opportunity for Armenia to become a regional factor and a player by applying its "smart power".

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔՆԱՐԻԿ Ռ. ԱՎԱԳՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 75-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումները և ծանրակշիռ վաստակի տարեգրությունը 5

ԼԻԱՆԱ Ս. ՆԱՀԱՐՅԱՆ

Քաղկեդոնականության տարածումը Տայքում 15

ԱԼԲԵՐՏ Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Արհեստները Էգեյանի հայ գաղթօջախներում (XVII–XVIII դդ.) 29

ԱՆԱՀԻՏ Ս. ԱՍԱՏՐՅԱՆ

Կարապետ Տեր-Մկրտչյանը որպես Հայ եկեղեցու բարեՆորոգիչ 52

ՀԱՅԿ Շ. ՄԱՀՏԵՍՅԱՆ

Անդրկովկասի վարչատարածքային բաժանման խնդիրները Պետրոգրադյան խորհրդակցությունների քննարկումներում (1917 թ. հունիս) 72

ԳԵՎՈՐԳ Է. ԿԵՍՈՅԱՆ

Խորհրդային Հայաստանի պետական վերահսկողության ժողովրդական կոմիսարիատի ձևավորումը 91

ՄԱՐԻԱՄ Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

Եվրոպայի Հայոց թեմի վարչաժողովրդագրական նկարագիրը 1924–1930 թթ. 111

ԳԱՅԱՆԵ Խ. ՂԱՀԱՐՅԱՆ

Պաշտոնական դիրքի չարաշահումները ՀԽՍՀ միլիցիայի

աշխատակիցների առօրյայում հետպատերազմյան առաջին տարիներին 132

ՀԱՄՈ Կ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Խուլիգանության դրսևորումները Խորհրդային Հայաստանի բնակչության առօրյա կյանքում (1960-ականների երկրորդ կես) 143

ՌՈՒԲԵՆ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Աշխարհաքաղաքական վերջին զարգացումները Մերձավոր Արևելքում. հեռանկարներն ու հնարավոր սպառնալիքները Հայաստանի համար 157

СОДЕРЖАНИЕ

КНАРИК Р. АВАКЯН

Мероприятия, посвященные 75-ию основания Института истории НАН РА и летопись весомых достижений 5

ЛИАНА С. НАЗАРЯН

Распространение халкедонидства в Тайке 15

АЛБЕРТ А. ХАРАТЯН

Ремесла в армянских колониях Эгейского побережья (XVII–XVIII вв.) 29

АНАИТ С. АСАТРЯН

Карапет Тер-Мкртчян – реформатор Армянской церкви 52

АЙК Ш. МАЙТЕСЯН

Проблемы административно-территориального деления Закавказья в обсуждениях в Петроградских совещаниях (1917 г., июнь) 72

ГЕВОРГ Э. КЕСОЯН

Формирование народного комиссариата государственного контроля в Советской Армении 91

МАРИАМ М. АКОПЯН

Административно-демографическая картина Европейской армянской епархии в 1924–1930 гг. 111

ГАЯНЕ Х. КАЗАРЯН

Злоупотребления должностным положением в повседневной жизни сотрудниками милиции Армянской ССР в первые послевоенные годы 132

АМО К. СУКИАСЯН

Проявления хулиганства в повседневной жизни населения Советской Армении (вторая половина 1960-х годов) 143

РУБЕН К. КАРАПЕТЯН

Последние геополитические развития на Ближнем Востоке, последствия и перспективы для Армении 157

CONTENT

KNARIK R. AYAKIAN

The commemorative events dedicated to the 75th anniversary of the formation of the NAS RA Institute of History and the chronicle of the impressive merit 5

LIANA S. NAZARYAN

The Spreading of Chalcedonianism in Tayk 15

ALBERT A. KHARATYAN

Craftsmanship in the Armenian Colonies on the Aegean Shore (XVII–XVIII) 29

ANAHIT S. ASATRYAN

Karapet Ter-Mkrtchyan as a reformer of Armenian church 52

HAYK SH. MAHTESYAN

Problems of administrative-territorial divisions of Transcaucasus in the discussions of the Petrograd meetings (1917 June) 72

GEVORG E. KESOYAN

Formation of the People's Commissariat of State Control in Soviet Armenia 91

MARIAM M. HAKOBYAN

The 1924–1930 administrative and demographic picture of Armenian Diocese of Europe 111

GAYANE KH. GHAZARYAN

The abuse of the official position in the everyday life of the militia employees of the Armenian SSR in the first post-war

years 132

HAMO K. SUKIASYAN

Manifestations of hooliganism in everyday life of the population of Soviet Armenia (second half of the 1960s) 143

RUBEN K. KARAPETYAN

Recent geopolitical developments in the Near East, consequences and perspectives for Armenia 157

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրքին հոդվածներ ներկայացնելու չափորոշիչները.

• Հեղինակի անունը, հայրանունը, ազգանունը, գիտական աստիճանը, կոչումը, աշխատանքի (ուսման) վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն:

• Հոդվածները ներկայացնել մինչև 15 էջ ծավալով, հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերով (10-15 տող): Տառատեսակը հայերենի դեպքում՝ Sylfaen, այլ լեզուների՝ Times New Roman, տեքստի տառաչափը՝ 12, տողատակում՝ 9, միջտողային հեռավորությունը՝ 1.5, լուսանցքները՝ վերևից՝ 2, ներքևից՝ 2.5, ձախից՝ 3, աջից՝ 1:

• Գիտական աստիճան չունեցող հեղինակները պարտադիր պետք է ներկայացնեն հոդվածի մասին երաշխավորական գրություն գիտական ղեկավարից կամ գիտական (գիտակրթական) հաստատության համապատասխան մասնագիտական ստորաբաժանման կողմից:

• Հոդվածները պարտադիր ուղարկվում են գրախոսության, գիտական նորույթ չպարունակող կամ նախկինում հրատարակված հոդվածները չեն տպագրվում:

«Հայոց պատմության հարցեր» տարեգրքի բոլոր համարները էլեկտրոնային տարբերակով տե՛ս

http://serials.flib.sci.am/openreader/test/index.html

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(A COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

.19

Ամփոփումների խմբագրումը՝ Հ. Խուդանյանի
Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության՝ 28.12.2018 թ.
Տպաքանակը՝ 150 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am